ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

UK Government

INSTITUTE FOR WAR & PEACE REPORTING IWPR

BREN Building Resilience in the Eastern Neighbourhood

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ՀՀ ՁՈՒ-ՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՁԻՆՃԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ՎԱՆԱՁՈՐ 2025

Հեղինակներ՝

Արթուր Սաքունց
Նազելի Մովսեսյան

Այս տեղեկանքը ստեղծվել է «Կանանց իրավունքների խթանումը ՀՀ զինված ուժերում II» ծրագրի շրջանակներում, Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսական աջակցությամբ՝ «Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ»-ի (ՊԽԼԻ) կողմից տրամադրված ենթադրամաշնորհի միջոցով: Բոլոր կարծիքները, բացահայտումները և եզրահանգումները պատկանում են հեղինակ/ներ/ին և պարտադիր չէ, որ համընկնեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշման կամ ՊԽԼԻ–ի տեսակետների հետ:

2023 – 2025 ԹԹ. ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

2023 թ. սեպտեմբերից մինչև 2024 թ. մարտն ընկած ժամանակահատվածում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը նախաձեռնեց եւ իրականացրեց հետազոտություն ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի թիվ 1325 բանաձևի կիրակմանն ուղղված 2022-2024 թթ. գործողությունների Ազգային երկրորդ ծրագրի ուղղությամբ իրականացված աշխատանքների զարգացումները և զինված ուժերում ներգրավված կին զինծառայողների իրավունքների պաշտպանության վիճակը դիտարկելու նպատակով, որի արդյունքում կազմվեց «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցը:

Հետազոտության արդյունքում Կազմակերպությունը վերհանեց կանանց զինվորական ծառայության ներգրավման հետ կապված խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ ձևակերպված առաջարկությունները 2024 թ. մարտին ուղարկվեցին ՀՀ պաշտպանության նախարարություն և շահագրգիռ այլ կողմերին՝ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ քննարկելու և արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու նպատակով:

Առաջարկությունների մեծամասնությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ընդունվեց ի գիտություն: **Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ՀՔԱ Վանաձոր գրասենյակի կողմից ներկայացված առաջարկությունները, որոնք ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ընդունվել են ի գիտություն, ներկայացնում ենք ստորև.**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում կանանց շարքային կազմի պարտադիր զինծառայողների ծառայության վայրեր նշանակումն իրականացվում է առանց վիճակահանության՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով:



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ ԶՈՒ-ում գործում է կանանց միայն մեկ գումարտակ, իհարկե գործնականում կիրառելի և տրամաբանական չէ կանանց շարքային կազմի պարտադիր զինծառայողների ծառայության վայրեր նշանակումն իրականացնել վիճակահանությամբ: Միևնույն ժամանակ, խնդիրը դիտարկելով ավելի երկարաժամկետ արդյունքի համատեքստում, անհրաժեշտ է մշակել և ներդնել մեխանիզմ, որի իրագործմամբ հնարավոր կլինի դիտարկել կին և տղամարդ զինծառայողների ծառայության իրականացումը նույն գումարտակում (օրինակ՝ ԱՄՆ-ում տղամարդ և կին զինծառայողները մարզումներին մասնակցում են միասին):

Այս նպատակին հասնելու համար պետք է ջանքեր գործադրել զինծառայողների շրջանում կին և տղամարդ զինծառայողների իրավահավասարության, սեռով պայմանավորված խտրականության արգելքի սկզբունքի ամրապնդման ուղղությամբ:

1. *«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինծառայողներին ծառայության վայրեր նշանակելիս հաշվի են առնվում ստացած կրթությունը, զինվորական*

ծառայության համար պիտանիության աստիճանը, ինչպես նաև «օրենքով սահմանված այլ պայմաններ», որոնց մասին օրենքում նշումներ չկան: Առաջարկվել է հստակեցնել այն սկզբունքները, որոնց հիման վրա սահմանվում է «օրենքով սահմանված այլ պայմաններ» ձևակերպումը, մասնավորապես՝ հստակեցնել, թե բացի ստացած կրթությունը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը, ինչ պայմաններ են հաշվի առնվում շարքային կազմի պարտադիր զինծառայողներին ծառայության վայրեր նշանակելիս: Բացի այդ, առաջարկվել է հստակեցնել «այլ պայմաններ»-ի բովանդակությունը կին և տղամարդ զինծառայողների համար:

«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք» ՀՀ օրենքում

1. *Կանոնագրքի 264-րդ հոդվածը սահմանում է, որ խաղաղ ժամանակ կին զինծառայողները օրվա վերակարգի կազմում չեն նշանակվում, բացառություն է հանրակացարանի օրվա վերակարգը:*

Անհրաժեշտության դեպքում նրանք ըստ իրենց զինվորական կոչման և զբաղեցրած պաշտոնի, կարող են նշանակվել որպես հերթապահ բժիշկ (բուժակ), շտաբի հերթապահ և թղթատար (ցրիչ): Կին զինծառայողները հերթապահության են նշանակվում նաև ըստ մասնագիտության:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տղամարդ զինծառայողները, ներգրավվելով ծառայողական առավել լայն պարտականությունների կատարման շրջանակում, ունենում են ծառայողական առաջխաղացման առավել մեծ հնարավորություններ, ինչպես նաև ելնելով խտրականության արգելքի սկզբունքից, կարևոր է երաշխավորել օրվա վերակարգի կազմում բացի կին զինծառայողների նշանակումը, որը կապահովի ծառայողական առաջխաղացման համար հավասար հնարավորություններ: Միևնույն ժամանակ պետք է ապահովել անհրաժեշտ պայմաններ վերակարգում ընդգրկվող կին զինծառայողների համար, ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու համար՝ հաշվի առնելով

կանանց առանձնահատուկ պահանջները նրանց ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված:

2. Կանոնագրքի 268-րդ հոդվածը սահմանում է, որ սպաներից և ենթասպաներից նշանակված գնդի հերթապահը, գնդի հերթապահի օգնականը, հավաքականի հերթապահը, հսկիչ-անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի հերթապահը զինվում են երկու լիցքավորված պահեստատուփ ունեցող ատրճանակներով: Իսկ սերժանտներից նշանակված հավաքականի հերթապահը, հսկիչ-անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի հերթապահը, ինչպես նաև հսկիչ-անցագրային կետի հերթապահի օգնականները, ստորաբաժանումների հերթապահներն ու օրապահները, բացի հանրակացարանի օրվա վերակարգի կազմի մեջ մտնող կին զինծառայողներից, հավաքականի օրապահներն ու թղթատարները (գրիչները) զինվում են սվին-դանակներով:

Կանանց հատկացվող զենքի սահմանափակման խնդիրը հակասում է կին զինծառայողների մարտական հերթապահություն իրականացնելու թույլտվության մասին դրույթին, որով սահմանվում է նաև համապատասխան զենքի կրումը վերջիններիս կողմից:

Ելնելով Կանոնագրքի 264-րդ հոդվածում կին զինծառայողներին օրվա վերակարգի կազմում նշանակելու վերաբերյալ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունից, Կազմակերպությունն առաջարկել է «ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության» կանոնագրքի 268-րդ հոդվածով սահմանել հերթապահության մեջ ընդգրկված բոլոր զինծառայողների զինվելու համար հավասար հնարավորություններ անկախ զինծառայողի սեռից:

Ի դեպ, ի գիտություն ընդունված առաջարկությունները, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության քննարկվելու է ՀՀ պաշտպանության նախարարությունում՝ իրականացվող բարեփոխումների շրջանակներում:

Միաժամանակ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ մի շարք առաջարկություններին ՀՀ պաշտպանության նախարարությունն անդրադարձել է առանձին: Մասնավորապես՝ 2023 - 2024 թթ Զինված ուժերում կանանց իրավունքների վիճակի ուսումնասիրության ընթացքում Կազմակերպությունն արձանագրել էր, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով կանանց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայության անցնելու դրույթը սահմանելու հետ մեկտեղ սահմանված չեն կանանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնող կարգավորումները, մասնավորապես՝ ժամկետային զինվորական ծառայության մեջ ընդգրկված կին զինծառայողների մոտ հղիության ժամանակաընթացքում վերջիններիս առողջական վիճակի զննության կարգը, ծառայողական պարտականությունների ծավալների վերաբերյալ կարգավորումը: Առաջարկվել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանել ժամկետային զինվորական ծառայության ընթացքում կին զինծառայողի մոտ հղիության առկայության դեպքում վերջինիս առողջական վիճակի հետազոտությունների իրականացման կարգը: Ի պատասպան ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացրեց, որ նման կարգի սահմանման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ բոլոր զինծառայողները նշված օրենքով սահմանված կարգով ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում կամ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, այլ բժշկական հաստատություններում:

Բժիշկ-մասնագետների կողմից տրված ծանրաբեռնվածության սահմանափակումների վերաբերյալ ցուցումների վրա հղի ժամկետային կին զինծառայողների համար ֆիզիկական վարժությունների ցանկ սահմանելու վերաբերյալ Կազմակերպության առաջարկությանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ ՀՀ կառավարության 2018 թ N 404-Ն որոշմամբ՝ զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը և վերջիններիս

առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանող դրույթների փոփոխությունների նախաձեռնումը գտնվում է ՀՀ առողջապահության նախարարության իրավասությունների շրջանակում, իսկ ՀՀ զինված ուժերում այդ գործընթացների համակարգումն իրականացվում է ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող միակ հաստիքային մարմինը՝ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնը:

Կազմակերպության կողմից արձանագրված խնդիրներից է նաև *«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք» ՀՀ օրենքի 270-րդ հոդվածով սահմանված արգելքը՝ կին զինծառայողներին այնպիսի աշխատանքների նշանակելու, որոնք կապված են աշխատանքային օրենսդրությամբ նրանց համար սահմանված առավելագույն նորմերը գերազանցող ծանրությունների տեղափոխման և տեղաշարժման հետ, որը խտրական է տղամարդ զինծառայողների նկատմամբ այն դեպքում, երբ կին և տղամարդ զինծառայողներն ունեն ֆիզիկական պատրաստության հավասար մակարդակ:* Կազմակերպության կողմից առաջարկվել էր հաշվի առնել ոչ թե կանանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, այլ նրանց ֆիզիկական պատրաստվածության մակարդակը: Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունից տեղեկացրեցին, որ դրույթում փոփոխություն կատարելը նպատակահարմար չէ, քանի որ կին և տղամարդ զինծառայողների ֆիզիկական պատրաստվածության գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված ֆիզիոլոգիական առանձնահատկություններով:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում կին զինծառայողների նկատմամբ չեն կիրառվում 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը («զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով», «հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով», «կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով» կարգապահական տույժերը): Հայտնի է, որ հատկապես վերջին տարիներին պարտադիր ժամկետային զինծառայողների մեծ մասի

համար զորամասի տեղաբաշխման վայրից արձակումն ու հիմնական արձակուրդի տրամադրումն ունեն չափազանց մեծ կարևորություն: Այս առումով հերթական արձակումից մինչև 1 ամիս ժամկետով զրկումը և հիմնական արձակուրդի տրման հետաձգումը՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով տույժերի կիրառումը, որոնք նախատեսված են զորքերում կարգապահության ապահովման համար, չպետք է տարբերակված կիրառվի զինծառայողների նկատմամբ ըստ նրանց սեռային պատկանելիության: Մասնավորապես, Կազմակերպությունն ընդգծել է, որ «կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով» տույժի տեսակի կիրառումը չպետք է պայմանավորել զինծառայողի սեռային պատկանելիությամբ: Ի պատասխան ՀՀ ՊՆ-ից տեղեկացվել է, որ հարցին անդրադարձ կկատարվի կանանց ժամկետային պարտադիր զինծառայողների քանակի ավելացման դեպքում, կարգապահական տույժի կրման վայրերում կեցության համապատասխան պայմանների ապահովմանը զուգահեռ:

> *«ՀՀ զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրք» ՀՀ օրենքում սահմանվում է, որ կին զինծառայողները կայազորային և պահակային ծառայություններում չեն ընդգրկվում, բացի զինծառայողների թաղման ժամանակ հարգանք մատուցելու և հուշարձանների ու հայրենիքի ազատության և անկախության համար մղված մարտերում զոհված զինծառայողների գերեզմաններին պսակ դնելու, ինչպես նաև կայազորային միջոցառումների ապահովմանը մասնակցելու դեպքերի:*

Հայտնի է, որ յուրաքանչյուր զորամասում ներքին ծառայությունը կազմակերպվում է ամենօրյա, անընդհատ ռեժիմով, որի կարևորագույն բաղադրիչներից մեկը կայազորային և պահակային ծառայությունն է: Ծառայության այս տեսակի մեջ ներառվում են օրվա վերակարգերը, զորամասում տեղակայված կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների վերահսկողությունը, սակայն ՀՀ ԶՈՒ կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքն արգելում է կին զինծառայողներին ընդգրկել այդ ծառայությունում:

Կազմակերպությունն առաջարկել էր օրենսդրությամբ սահմանել ներքին ծառայության կազմակերպման կարգը այն զորամասում, որտեղ բոլոր ծառայողները կանայք են: Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ միայն կին զինծառայողներով համալրված զորամասերի համար օրենսդրությամբ ներքին ծառայության կազմակերպման կարգ սահմանելը նպատակահարմար չէ, վկայակոչելով Կազմակերպության առաջարկություններում բազմիցս նշված այն մոտեցումը, որ անհրաժեշտ է օրենսդրական կարգավորումներում վերացնել նման տարբերակված, խտրական սահմանումները: *(տե՛ս Հավելված 1)*

Բացի օրենսդրական առաջարկություններից, Կազմակերպության կողմից ներկայացվել են նաև գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ, որոնցից ներքոնշյալներն ընդունվել են ի գիտություն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից.

1. *Մշակել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագրեր, զինվորական ծառայության կազմակերպումն ապահովող օրենսդրական կարգավորումները մշակելիս ապահովել ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքներում, ինչպես նաև օրենսդրական փոփոխության նախագիծը ներկայացնել հանրային քննարկման:*

Ի դեպ, սույն տեղեկանքում առանձին անդրադարձ է կատարվում կամավոր հիմունքներով կանաց 6-ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ուսումնական ծրագրին:

2. *Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողների մեծամասնությունը զինվորական ծառայության է անցնում ֆինանսական խնդիրների լուծման նպատակով՝ Կառավարությունը անհրաժեշտ ջանքեր պետք է գործադրի զինվորական ծառայության անցնելու այլ շարժառիթների խթանման ուղղությամբ, մասնավորապես՝ զինվորական մասնագիտության գրավչությունը և հանրության շրջանում զինվորական ծառայության նկատմամբ հարգանքը բարձրացնելու ուղղությամբ:*

3. *Իրավահավասարության խթանման նպատակով ստեղծել խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ և խրախուսել զինծառայողներին՝ գործնականում կիրառել նման մեխանիզմները: Մասնավորապես՝ Զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման ՏՏ հավելվածի մշակմանը զուգընթաց բաձրացնել զինծառայողների իրազեկման մակարդակը, որպեսզի հավելվածի կիրառումը արդյունավետ լինի:*

4. *Խթանելով կին զինծառայողների ծառայողական առաջխաղացման հնարավորությունները՝ նպաստել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:*

5. *Երաշխավորել անկախ սեռից բոլոր զինծառայողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման, վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար:*

6. *Բոլոր զինծառայողների համար ապահովել արժանապատիվ ծառայության նվազագույն պայմաններ՝ թե՛ շենքային, թե՛ կենցաղ-սպասարկման, թե՛ հիգիենայի պահպանման:*

7. *Ձանքեր գործադրել բոլոր զինծառայողներին, այդ թվում հղի զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստի տրամադրման ուղղությամբ:* (տե՛ս Հավելված 2, 3)

Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարությունն անդրադարձել է մի շարք առաջարկություններին, մասնավորապես.

Խտրականության դրսևորումների հավանականությունն օրենսդրության մակարդակում բացառելու համար զինվորական ծառայության կազմակերպման մասին կարգավորումներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ Կազմակերպության առաջարկությանն անդրադառնալով՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը Կազմակերպության գրությանն ի պատասխան վկայակոչեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ

օրենքում 2023 թ. կատարված փոփոխությունը, որով սահմանվում է կանանց 6 ամիս ժամկետով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունը: Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տեղեկացվեց, *որ «Մշակման փուլում է կանանց գումարտակում պայմանագրային զինվորական ծառայություն անցնող կին զինծառայողների համար ՀՀ կառավարության 03.07.2014 թ. թիվ 712-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին որոշման նախագիծը, որի վերջնական տեքստը դրվելու է շրջանառության և հանրային քննարկման»:* Նշենք, որ թիվ 712-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին նախագիծը դեռևս չի դրվել շրջանառության և հանրային քննարկման:

Միաժամանակ, կազմակերպությունն առաջարկել էր **գործադրել անհրաժեշտ ջանքեր՝ կրթական, պարբերական վերապատրաստման ծրագրերի միջոցով կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպի, կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ,** ինչին ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ **ՊՆ ներկայացուցիչները հանրության շրջանում, այդ թվում ավագ դպրոցների, քոլեջների սովորողների հետ հանդիպումների ընթացքում ներկայացնում են ԶՈՒ-ում կանանց լիարժեք և բովանդակային ներգրավման անհրաժեշտության, ծառայության ընթացքում նրանց ձեռքբերումների, ինչպես նաև Կանայք, Խաղաղություն, Անվտանգություն** օրակարգի կարևորության մասին:

Զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակմանը զուգընթաց զինծառայողների իրազեկման մակարդակը բարձրացնելու վերաբերյալ Կազմակերպության առաջարկությանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց միայն, որ **SS Հավելվածի մշակումն ընթացքի մեջ է և մոտ ապագայում սպասվում է մրցույթի հայտարարում և գնումների իրականացում**: Նշենք, որ 2025 թ. փետրվարի 18-ին Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի կողմից իրականացված «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի փակման արարողության ժամանակ ներկայացվեց «Համազգեստով Քաղաքացի» բջջային հեռախոսի Հավելվածը, որով զինծառայողները հնարավորություն են ունենում անանուն հաղորդումներ ներկայացել իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ: Խնդիրն այն է, որ ՀՀ զինված ուժերում «սմարթֆոն» տեսակի բջջային հեռախոսների կիրառման սահմանափակումների պատճառով ժամկետային զինվորական ծառայություն իրականացնողները հնարավորություն չեն ունենա անձամբ ներկայացնել իրենց

իրավունքների խախտումների վերաբերյալ ահազանգերը: Փոխարենը, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցչի, ժամկետային զինծառայողների ահազանգերը կարող են ներկայացվել վերջիններիս ընտանիքի անդամների կողմից: Կարևորելով զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բարձրացմանն ուղղված նոր մեխանիզմների ներդրումը, բայց և հաշվի առնելով գործառույթի միջնորդավորված լինելու հանգամանքը՝ կարծում ենք մեխանիզմը բավարար չափով և օբյեկտիվորեն չի կարող վերհանել զինված ուժերում պարտադիր ժամկետային զինծառայողների իրավունքների խախտման դեպքերը: Միաժամանակ, հարկ է նշել, որ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների ահազանգման նման մեխանիզմի կիրառումն առավել արդյունավետ կռադնա, եթե խնդիրը դիտարկվի առավել լայն և խորքային տեսանկունից, այն է՝ եթե կրթական համարգում իրականացվեն փոփոխություններ՝ հնարավորություն ստեղծելով դպրոցահասակ անձանց համար մինչև զինվորական ծառայության զորակոչվելը ձեռք բերել բավարար գիտելիքներ, լինել առավել գրագետ և իրավագիտակից: Նշված գործընթացքում ակնկալում ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անմիջական մասնակցությունը:

Անկախ սեռից բոլոր զինծառայողների **համար կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար հավասար հնարավորությունների ստեղծման երաշխավորման** վերաբերյալ Կազմակերպության առաջարկությանն ու տեղեկատվության հարցմանը, թե արդյոք ընդունվել են իրավական ակտեր կին զինծառայողների համար հավասար հնարավորությունների երաշխավորման վերաբերյալ, ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ **«կին զինծառայողների ռազմական կրթության և մասնագիտական կարողությունների զարգացման, վերապատրաստումների մասով առանձին իրավական ակտեր չեն ընդունվել, քանի որ ՀՀ զինված ուժերի զինծառայողների համար՝ անկախ սեռային պատկանելությունից, ապահովվում են հավասար հնարավորություններ ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման և վերապատրաստումների մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար»:**

Ի դեպ, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության՝ **2024 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ ԶՈՒ զինծառայողների 5%-ը ներգրավվել է ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված մասնագիտական կարողությունների զարգացմանն ու**

ռազմական կրթությանն ուղղված վերապատրաստումներին, որից 25 %-ը կին զինծառայողներ են»:

Նշված ցուցանիշը կարող է արդարացված լինել միայն հաշվի առնելով կին և տղամարդ զինծառայողների թվի հարաբերակցությունը ՀՀ զինված ուժերում, մինչդեռ նշված վերապատրաստումների արդյունքում զինծառայողների ձեռք բերած գիտելիքների և հմտությունների թիրախային կիրառման վերահսկողությունը պետք է դառնա ՀՀ պաշտպանական գերատեսչության կարևոր նպատակներից մեկը:

Կազմակերպության մեկ այլ առաջարկությանը, որը վերաբերում է բոլոր զինծառայողների համար **արժանապատիվ ծառայության նվազագույն՝ շենքային, կենցաղ-սպասարկման, հիգիենայի պահպանման պայմաններով և զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստով ապահովելուն,** ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ **«Բոլոր պարտադիր ժամկետային զինծառայողների համար, անկախ սեռից ՀՀ ՊՆ թիկունքային ապահովման վարչության կողմից ձեռք է բերվում և հատկացվում միայն օճառ, օճառաման, սափրվելու ածելի, սափրվելու փրփուր, ատամի խոզանակ, ատամի մածուկ, սանր, զուգարանի թուղթ և եղունգ կտրիչ: Իսկ նոր և որակյալ համազգեստների ձեռքբերման գործընթացի շրջանակներում ուսումնասիրվել են և դեռևս շարունակվում են ուսումնասիրվել տարբեր ՆԱՏՕ անդամ երկրների համազգեստներն ու հանդերձանքի պարագաները»:** Հավելվել է նաև, որ **նոր և որակյալ համազգեստների ձեռքբերման գործընթացի շրջանակներում պլանավորված է նաև անցկացնել համապատասխան քննարկում շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ ՀՀ պաշտպանության նախարարի 2021 թ. N 510 հրամանում փոփոխություն կատարելու և կին զինծառայողներին անհրաժեշտ հիգիենայի պարագաներով ապահովելու նոր չափաքանակ ներառելու նպատակով:**

2024 թ. Կազմակերպությունը ներկայացրել էր առաջարկություն՝ **ձևավորելու զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների, արժանապատվության պաշտպանությունն ապահովող իրավական երաշխիքներ զինված ուժերում նրանց ներգրավման և զինվորական ծառայության ընթացքում**, ինչին ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ «**Մշակվել է «ՊՆ համակարգի պայմանագրային զինծառայողների վարքագծի կանոնների նախագիծը», որը ներկայացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարծիքին և այժմ գտնվում է միջազգային փորձաքննության փուլում»:**

Կազմակերպությունն առաջարկել էր **օրենքով սահմանել երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի առնելու դրույթը, որը կխթանի կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանն ու ներկայացվածությանը բարձր պաշտոններում**, ինչին ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տեղեկացվեց, որ «**Երեխայի խնամքի արձակուրդում գտնվող կին զինծառայողին զբաղեցրած հաստիքով նախատեսված հերթական զինվորական կոչում շնորհելու արգելք կամ կոչման կրման ժամկետի կասեցում օրենքով սահմանված չէ»:**

Մինչդեռ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023 թ. զինծառայողների շրջանում իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրված խնդիրներից էր **հղիության և ծննդաբերության արձակուրդ մեկնած կին զինծառայողներին ծառայության չվերադառնալուն ուղղված հրամանատարների հորդորները:** ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ նման բովանդակությամբ բողոքներ նախարարությունը չի ստացել, ինչից էլ հետևում է, որ զինված ուժերում մարդու իրավունքների խախտման դեպքերի ազդարարման մեխանիզմներն այս պահին արդյունավետ չեն, քանի որ խտրականության ենթարկված զինծառայողները անգամ չեն փորձում օգտագործել այդ մեխանիզմները՝ իրենց խախտված իրավունքի վերականգնման հաամար:

Ինչ վերաբերում է զինծառայողների իրազեկվածությանը, ապա հաշվի առնելով ՄԱԿ ԱԽ (անվտանգության խորհրդի) 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված ՀՀ ԳԱԾ-ի (գործողությունների ազգային ծրագրի) մասին զինծառայողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը, Կազմակերպությունը 2024 թ. ուսումնասիրությամբ առաջարկել է **երաշխավորել իրազեկման դասընթացներին, միջոցառումներին, քննարկումներին բոլոր զինծառայողների պարբերական մասնակցությունը**: Ի պատասխան ՀՀ

պաշտպանության նախարարությունից հայտնեցին, **որ ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված գործողությունների և առաջին և երկրորդ ազգային ծրագրի շրջանակներում տեղական և միջազգային գործընկերների (DCAF) հետ համատեղ իրականացվում են ՁՈՒ անձնակազմի 1325 բանաձևի դրույթների վերաբերյալ իրազեկում:**

Զինված ուժերում մարդու իրավունքների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, հակախտրականության, կանանց նկատմամբ բռնության արգելքի մասին թեմաներով ուսուցման վերաբերյալ կազմակերպության առաջարկությանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունից հետնեցին, որ **2020-2022թթ. ՄԻՊ ռազմավարության շրջանակներում ՁՈՒ անձնակազմի համար պարբերաբար իրականացվել են մարդու իրավունքների՝ մասնավորապես՝ կյանքի իրավունքի, խտրականության արգելքի թեմաներով վերապատրաստման դասընթացներ, որոնք շարունակական բնույթ են կրում:**

Կին և տղամարդ զինծառայողների շրջանում **զինվորական ծառայության գրավչության բարձրացման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում և այլ առցանց հարթակներում զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նութերի** (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ, մամուլի հաղորդագրություններ) տեսանելիությունը ապահովելու վերաբերյալ Կազմակերպության առաջարկությանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնեցին, որ «Զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նյութեր, տեսահոլովակներ հրապարակվում են Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում, իսկ նրանց ծառայության վերաբերյալ հաղորդումները՝ «Զինուժ» հեռուստածրագրի շրջանակներում»:

ԿԱՄԱՎՈՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՆԱՆՑ ՎԵՑԱՄՍՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2021-2026թթ. հնգամյա ծրագրի՝ զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ ենթակետի ներածական հատվածում, ի թիվս այլնի ,նշվում է նաև զինված ուժերի մարտական ստորաբաժանումներում կանանց առավել մասշտաբային ներգրավման կարևորության մասին:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում կանայք հնարավորություն ստացան սովորելու Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում 2013 թ-ից:

2019 թ. զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչության կազմում ձևավորվեց կին զինծառայողների հետ տարվող աշխատանքի բաժանմունք, որի գործունեության նպատակն է Զինված ուժերում կանանց զինծառայության կազմակերպման և հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացումն ու վերլուծումը, բարձրացված հարցերի ու խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը:

Իսկ 2020 թ.-ից կանանց ընդունելություն սկսեց իրականացնել նաև Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը:

Կանանց զինվորական ծառայությանը ներգրավելուն ուղղված քայլերից մեկը Կառավարության կողմից կատարվեց 2023 թվականի հունիսին, երբ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարվեցին լրացումներ և փոփոխություններ, մասնավորապես՝ ավելացվեց 19.1. հոդվածը, որով սահմանվեց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած կանանց զորակոչի կազմակերպման հիմքը և կարգը:

Կատարված օրենսդրական փոփոխություններով ձևավորվեց «կանանց գումարտակ», որում կանայք կարող են կամավոր հիմունքներով անցնել 6-ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության: Նախատեսվեց, որ 6-ամսյա ծառայությունը հաջողությամբ ավարտած անձինք ստանում են մեկ միլիոն դրամ պատվովճար և

«Պաշտպան հայրենյաց» ծրագրի շրջանակներում ծառայությունը շարունակելու հնարավորություն: Այս նորամուծությունը ՀՀ կառավարության կողմից դիտարկվեց որպես զինված ուժերում կանանց ներգրավվածությունը բարձրացնելու լրացուցիչ խթան:

Այդուհանդերձ, քանի որ պարզ չէին կանանց զինվորական ծառայության անցնելու 6-ամսյա տևողության սահմանման հիմնավորումները, Կազմակերպությունը դեռևս 2023 թ. սեպտեմբերին տեղեկատվական հարցմամբ դիմեց ՀՀ պաշտպանության նախարարություն: *(տե՛ս Հավելված 3)*

Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ կամավոր հիմունքներով կանանց պարտադիր զինվորական ծառայության 6-ամսյա ժամկետը սահմանվում է այն ենթադրությամբ, որ այդ ժամանակահատվածում զինծառայողը *«պետք է տիրապետի ժամանակակից համազորային մարտի առանձնահատկություններին, իր պաշտոնամասնագիտական պարտականություններին, ինքնուրույն մարտի նախապատրաստվելու և մարտ վարելու կարգին, տեղանքի, եղանակի և օրվա տարբեր պայմաններում, հակառակորդի օդային հարձակման միջոցներից պաշտպանվելուն և քողարկմանը, հաստիքային զենքի նյութական մասին, հրաձգության կանոններին, կրակ վարելու ձևերին ու եղանակներին, համազորային կանոնադրությունների հիմնական դրույթներին, մարտական հերթապահության խնդիրներին, և դրա իրականացման պարտականություններին, մարտական պատրաստության պարապմունքների և առօրյա կյանքում անվտանգության կանոններին, որից հետո կին զինծառայողների մոտ կձևավորվի հստակ պատկերացում ՀՀ ԶՈՒ-ում հետագա ծառայությունը շարունակելու կամ ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակվելու վերաբերյալ»:*

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հավելվեց, որ՝ *կանանց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայության ներգրավման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով իրականացվում է այլ պետությունների փորձի և մարտահրավերների հետազոտություն, ընդգծելով, որ Ժնևի անվտանգության ոլորտի կառավարման կենտրոնի (DCAF) կողմից ՀՀ-ում կազմակերպել է կանանց զորակոչ իրականացնող երկրների լավագույն փորձի ներկայացում:*

Նախորդ՝ 2024 թ. մարտին հրապարակված «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ ԶՈՒ-ում» զեկույցում անդրադարձել ենք այն խնդրին, որ մինչ այժմ ձևավորված չէ կին զինծառայողների համար 6-ամսյա զինվորական պատրաստության ծրագիրը և վերջիններիս պատրաստության համար առաջնորդվելու են «Մոտոհրաձգային, հրաձգային (լեռնային) և տանկային զորամասերի

(ստորաբաժանումների)» մարտական պատրաստության ծրագրով, որը նախատեսված է մեկ ուսումնական տարվա համար:

Փաստորեն, կամավոր հիմունքներով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ ներգրավված կին զինծառայողները 6 ամսվա ընթացքում ուսուցանվում են մեկ տարվա զինվորական պատրաստության ծրագրով, որը, ըստ Կազմակերպության, կրկնակի ծանրաբեռնվածության հետևանքով կարող է բացասաբար ազդել նաև նրանց զինվորական պատրաստության որակի վրա:

2024 թ հուլիսին Կազմակերպությունը տեղեկատվության հարցմամբ վերստին դիմեց ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ տեղեկատվություն ստանալու կամավոր հիմունքներում կին զինծառայողների 6-ամսյա ժամկետային զինվորական ծառայության համար մշակված զինվորական պատրաստության ծրագրի մասին: *(տե՛ս Հավելված 4)*

Նախ անդրադառնալով ՀՀ պաշտպանության նախարարության վարքագծին՝ տեղեկատվության տրամադրման ժամկետի առումով, նշենք, որ 2024 թ հուլիսի 29-ին Կազմակերպության կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղարկված հարցման պատասխանը Կազմակերպությունը ստացավ գրեթե երկու ամիս անց՝ սեպտեմբերի 16-ին, ընդ որում Կազմակերպության հարցին, թե արդյոք մշակվել է կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագիր, ՀՀ ՊՆ կողմից գրությամբ տրամադրվեց հետևյալ պատասխանը՝ ***«ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների զինվորական պատրաստությունն իրականացվում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված ծրագրի համաձայն»,*** **որն ըստ էության չէր անդրադառնում կազակերպության հարցադրմանը:**

Կազմակերպության կողմից կրկնակի հարցում ուղարկվեց ՀՀ պաշտպանության նախարարություն՝ խնդրելով տրամադրել ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի կողմից հաստատված ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների պատրաստության ծրագրի պատճենը, որի մասին վկայակոչել էր ՀՀ պաշտպանության նախարարությունը նախորդ պատասխան գրությամբ: Միաժամանակ, հղում կատարելով նախկինում՝ 2023 թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ ՊՆ կողմից Կազմակերպությանը տրամադրած այն տեղեկատվությանը, համաձայն որի՝ կին զինծառայողների 6-ամսյա ժամկետային զինվորական ծառայության համար կիրառվում է «Մոտոհրաձգային, հրաձգային (լեռնային) և տանկային զորամասերի (ստորաբաժանումների)» մարտական պատրաստության ծրագիրը, Կազմակերպությունը

2024 թ. հուլիսի 29-ին դիմեց ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ նշված ծրագրի պատճենը տրամադրելու հարցով: *(տե՛ս Հավելված 6)*

Ի պատասխան, ավելի քան երկու ամիս անց՝ 2024 թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ՊՆ կողմից տեղեկացվեց, որ ***«ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների զինվորական պատրաստությունն իրականացվում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված ծրագրի համաձայն, որոնք մեծամասամբ պարունակում են ծառայողական օգտագործման տեղեկատվություն, ուստի գաղտնիության հանգամանքով պայմանավորած հնարավոր չէ տրամադրել գրությամբ ակնկալվող ամբողջ տեղեկատվությունը»:*** Գրությամբ հավելվեց նաև, որ ***«Անհրաժեշտության դեպքում՝ ԳՇ պետի ցուցումով նշված պատրաստության ծրագրից կարող է տրամադրվել հոդված կամ թեմա՝ եթե այն չպարունակի գաղտնի տեղեկատվություն»:***

Կազմակերպությունը, **ընդգծելով, որ նպատակ ունի դիտարկել ուսումնական ծրագիրը, մասնավորապես որքանով է այն բխում կանանց լավագույն շահից և մարդու իրավունքներից և, անհրաժեշտության դեպքում, կներկայացնի առաջարկություններ,** դիմեց ՀՀ պաշտպանության նախարարություն՝ Կազմակերպությանը տրամադրելու հարցմամբ պահանջվող **ների 6-ամսյա զինվորական պատրաստության ուսումնական ծրագրերի այն բոլոր թեմաները, հոդվածներն ու հատվածները, որոնք չեն պարունակում գաղտնիություն:** *(տե՛ս Հավելված 7)*

Բացի այդ, 2024 թ նոյեմբերի 5-ին, դեռևս ստացած չլինելով հարցման պատասխանը, Կազմակերպությունը հանդիպում ունեցավ ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետի և աշխատակցի հետ, որի ընթացքում բացի զինված ուժերում կանանց իրավունքների վերաբերյալ խնդիրների քննարկումը, ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ ՀՀ ՊՆ կողմից հնարավորինս շուտ Կազմակերպությանը կտրամադրվի հայցվող տեղեկատվությունը, այն է՝ կին զինծառայողների 6-ամսյա ժամկետային զինվորական ծառայության համար նախատեսված ուսումնական ծրագրի գաղտնիություն չպարունակող և մարդու իրավունքների վերաբերող հատվածները:

Նված հանդիպումից միայն **մեկուկես ամիս անց,** ինչպես նաև Կազմակերպության կողմից վերջին ուղարկված հարցումից **երկուսուկես** և կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար նախատեսված ուսումնական ծրագրի տրամադրման պահանջով ի սկզբանե ՀՀ ՊՆ ուղարկված գրությունից **միայն հինգ ամիս անց** հնարավոր եղավ ՀՀ ՊՆ-

ից ստանալ կամավոր հիմունքներով կին զինծառայողների 6-ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության պատրաստության համար նախատեսված ուսումնական ծրագրի օրինակի այն հատվածները, որոնք, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության չեն պարունակում գաղտնի տեղեկություններ:

Տեղեկատվության տրամադրման հարցում ՀՀ պաշտպանության նախարարության նման վարքագիծը ոչ միայն օրենքով սահմանված ժամկետների խախտում է, այլև ստեղծում է տպավորություն, որ իրականում կանանց 6-ամսյա ժամկետային զինվորական ծառայության համար հարմարեցված ծրագիր, որպես այդպիսին, չի եղել կամ ծրագրի պատրաստի տեքստային տարբերակն առկա չի եղել պաշտպանական գերատեսչությունում:

Նշենք, որ կամավոր հիմունքներով կին զինծառայողների 6-ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության իրականացման համար ՀՀ պաշտպանական գերատեսչությունն առաջնորդվում է «Մոտոհրաձգային, հրաձգային (լեռնային) և զորամասերի (ստորաբաժանումների) մարտական պատրաստության ծրագրով»:

Անդրադառնալով ծրագրի բովանդակությանը՝ ընդգծում ենք, որ նույնիսկ հակիրճ դիտարկմամբ ակնհայտ դարձավ, որ կամավոր հիմունքներով կին զինծառայողների պարտադիր ժամկետային զինվորական ծառայության 6-ամսյա պատրաստության համար նախատեսված **ուսումնական ծրագրի մեջ չկա որևէ բովանդակային անդրադարձ մարդու իրավունքներին:**

Ներկայումս կին զինծառայողների կամավոր հիմունքներով 6-ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ուսումնական ծրագրում առկա է ***«Հասարակական-պետական պատրաստություն»*** բաղադրիչը, որի շրջանակներում ***ուսումնական խնդիրներն են*** *«հայոց պատմության, հայ ազգային-ազատագրական պայքարի լավագույն ավանդույթների, պետական և ռազմական շինարարության արդիական հիմնահարցերի,* ***իրավունքի նորմերի և ծառայողական***

փոխհարաբերությունների հիմունքների վերաբերյալ կայուն գիտելիքներով զինումը»: Չնայած նշված ուսումնական ենթաբաղադրիչը ներառում է իրավունքի նորմերի վերաբերյալ գիտելիքների ուսուցում, սակայն չի մասնավորեցվում, թե ինչ նորմերի ուսուցման մասին է խոսքը, ովքեր ու ինչպես են ներկայացնում մարդու իրավունքների նորմերի վերաբերյալ ուսումնական նյութերը:

Սույն ուսումնասիրությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներկայացնում է առաջարկություններ զինված ուժերում կին զինծառայողների կամավոր ժամկետային զինվորական ծառայության ուսումնական ծրագրում լրացումներ կատարելու մասին:ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ

ՀՀ ԶՈՒ-ՈՒՄ ԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Կամավոր հիմունքներով կին զինծառայողների 6-ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար ներկայումս գործող ուսումնական ծրագրում առկա է «**Հասարակական-պետական պատրաստություն**» բաղադրիչը, որի շրջանակներում վկայակոչված ուսումնական խնդիրներից է՝

> ***«զինել հայոց պատմության, հայ ազգային-ազատագրական պայքարի լավագույն ավանդույթների, պետական և ռազմական շինարարության արդիական հիմնահարցերի, իրավունքի նորմերի և ծառայողական փոխհարաբերությունների հիմունքների վերաբերյալ կայուն գիտելիքներով: ...»:***

Չնայած նշված ուսումնական ենթաբաղադրիչը ներառում է «**իրավունքի նորմերի**» վերաբերյալ «**գիտելիքներով զինում**», սակայն ուսումնական ծրագրում չի մասնավորեցվում, թե այդ նորմերի ուսուցման շրջանակներում մարդու իրավունքների վերաբերյալ ինչպիսի և ինչ ծավալով գիտելիքներ են փոխանցվելու կին զինծառայողներին:

Սույն տեղեկանքով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներկայացնում է առաջարկություններ զինված ուժերում կանանց 6-ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ուսումնական ծրագրում լրացումներ կատարելու մասին, որը նպատակ ունի նպաստելու կին զինծառայողների կողմից զինվորական ծառայության պարտակությունների արդյունավետ կատարմանը մարդու իրավունքների ուսուցման հիման վրա:

Առաջարկում ենք կամավոր հիմունքներով կին զինծառայողների 6-ամսյա պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ուսումնական ծրագրում ներառել հետևյալ դրույթները մարդու իրավունքների նորմերի ուսուցման վերաբերյալ, որոնք, ի դեպ, պետք է ներառել նաև տղամարդկանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, ինչպես նաև ՀՀ ռազմական ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում:

Գործող ուսումնական ծրագրի «Հասարակական-պետական պատրաստություն» բաժնում «զինծառայողների ուսուցման հիմնական խնդիրներ»–ի ցանկում առաջարկում ենք ավելացնել հետևյալ թեմաները.

- **Մարդու իրավունքների հասկացությունը, իրավահավասարության սկզբունքները,**
- **Կանանց իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական շրջանակը,**
- **Հակախտրականության, գենդերային հավասարության հասկացությունն ու բովանդակությունը,**
    - **Իրավունքների խախտման, հատկապես խտրականության, սեռական ոտնձգությունների դրսևորման ձևերի ճանաչումը, դրանց կանխման հնարավորությունները և իրավունքների պաշտպանության մեխանիզմները,**
- **Առանձին հմտությունների ուսուցանում և մեթոդական ցուցումներ, մասնավորապես՝**
    - **Առաջնորդության հմտությունների ուսուցանում,**
    - **Աշխատանքային իրավունքների և նորմերի ուսուցանում,**
    - **Հաղորդակցության հմտությունների, ներառյալ՝ կանանց և տղամարդկանց միջև հաղորդակցության հմտությունների ուսուցանում,**

    - **Գենդերազգայունության բաղադրիչի ներդրում, մշակութային, ներառյալ՝ գենդերային նորմերի և սովորույթների ուսուցանում:**

ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

1. Մարդու իրավունքների հասկացությունը, իրավահավասարության սկզբունքները

2006 թ. ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի կողմից հաստատվել է անդամ պետությունների կողմից զինծառայողների մարդու իրավունքների ապահովման կարևորությունը. «*...զինված ուժերի անձնակազմից մարդասիրական իրավունքի նորմերի ու մարդու իրավունքների պահպանում չի կարելի ակնկալել, եթե մարդու իրավունքները երաշխավորված չեն հենց զինված ուժերի շարքերում: Հետևաբար, էական է, որ զինված ուժերի ներսում Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված ուղեցույցները՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, զուգակցվեն մասնակից պետությունների այնպիսի քաղաքականության հետ, որն ուղղված լինի զինվորականների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը»:*

ԵԱՀԿ-ի «Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ»[1]-ում նշվում է, որ «**զինծառայողները** կոչված են զինված ուժերի կազմում անմիջականորեն իրականացնել ՀՀ անվտանգության շահերի պաշտպանությունը, ինչպես **նաև կարևոր դեր են կատարում մարդու իրավունքների պաշտպանության գործում**: **Զինծառայողներին՝ որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելը ակնհայտորեն բխում է զինված ուժերը հասարակության մեջ ինտեգրելու նպատակից՝ ի տարբերություն այն մոտեցման, թե զինված ուժերը մեկուսացված են քաղաքական և հասարակական կյանքից**: Եթե զինված ուժերը ցանկանում են արդյունավետորեն ծառայել իրենց հասարակությանը, ապա դրանում տեղ չի գտնվի ճնշումների, հակասոցիալական վարքի դրսևորումների, իրավախախտումների, խտրականության, հետապնդումների և վարքի այլ անընդունելի դրսևորումների համար: Ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական կազմը կարող է հանդես գալ զորամասերում տեղի ունեցող խախտումների պայքարի առաջին գծում: Նրանց ղեկավարումը կարևորագույն նշանակություն ունի մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու համար: Այս առումով հրամանատարները պարտավոր են ակտիվ լինել (նախաձեռնող դեր ունենալ զինվորականների միջև փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտ ձևավորելու համար) և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝

1 http://www.osce.org/files/f/documents/5/9/100924.pdf

իրենց ենթակաների անօրինական գործողությունները կանխելու համար: Զինծառայողները պարտավոր են իրենց պարտականություններն իրականացնելու ընթացքում հարգել մարդու իրավունքները և պահպանել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Զինծառայողները թե՛ զորամասերում, թե՛ մարտական պայմաններում իրենց առջև դրված խնդիրներն իրականացնելիս միայն այն դեպքում կպահպանեն նշված իրավունքները, եթե իրենց սեփական իրավունքները ապահովված լինեն»:



Այսպիսով, առաջարկում ենք զինծառայողների ուսումնական ծրագրում ներառել մարդու իրավունքների հասկացության, իրավահավասարության սկզբունքի առավել խորքային ուսուցում:

2. Կին զինծառայողների իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական շրջանակը.

Զինծառայողներին պետք է իրազեկել և ուսուցանել ինչպես ազգային օրենսդրությունը, այնպես էլ տարածաշրջանային և միջազգայնորեն ընդունված այն բանաձևերը, հանձնարարականները, ուղեցույցները, ինչպես նաև իրավական ակտերը, որոնք վերաբերում են կանանց իրավունքների պաշտպանությանը, օրինակ՝

- **Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևը[2] և դրա հիման վրա ՀՀ գործողությունների ազգային ծրագիրը**, որում ընդգծվում է կանանց դերը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման, ինչպես նաև խաղաղաշինության գործում, պետություններին կոչ է արվում ապահովել կանանց առավել գործուն մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և հանգուցալուծման ազգային,

2https://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/WPS%20SRES1325%20.pdf

տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների և մեխանիզմների շրջանակներում որոշումների ընդունմանը բոլոր մակարդակներում:

- **ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան[3],** որը հիմնվում է տարբեր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքների վրա, սահմանում է պետության պարտավորությունը՝ կանանց իրավունքների պաշտպանության և խտրականության արգելքի ուղղությամբ:
- **Պեկինի հռչակագիրը[4]**, որը վերաբերում է հասարակական և մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում կանանց հանրային մասնակցության խոչընդոտների վերացմանը՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական որոշումների կայացման գործընթացում լիարժեք և հավասար մասնակցության միջոցով:
- **Միջազգային մարդասիրական իրավունքի[5]** հիմունքները, ներառյալ երեխաների, կանանց կամ հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ և առաջնահերթ պաշտպանության միջոցառումները:
- **Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան**, որը նախատեսում է առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը, համաձայն որի առանց սեռական խտրականության աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են ճանաչել այդ իրավունքը և համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու կամ խթանելու դրա կիրառումը հետևյալ ոլորտներում՝ ա) աշխատանքի մատչելիությունը, աշխատանքի ազատումից և մասնագիտական վերամիավորումից պաշտպանվածությունը, բ) մասնագիտական ուղղվածությունը, ուսուցումը, վերաուսուցումը և վերականգնումը, գ) զբաղվածության և աշխատանքային պայմանները՝ ներառյալ վարձատրությունը, դ) աշխատանքային զարգացումը՝ ներառյալ պաշտոնեական առաջխաղացումը:
- **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Ձինծառայողների մարդու իրավունքների մասին» թիվ 1742 (2006)**

3https://www.ohchr.org/sites/default/files/Documents/ProfessionalInterest/cedaw.pdf

4https://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf

5https://www.icrc.org/sites/default/files/document/file_list/what_is_ihl.pdf , https://www.icrc.org/en/document/what-international-humanitarian-law

հանձնարարականը[6], որում Վեհաժողովը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին հանձնարարեց «առավել մեծ ուշադրություն դարձնել զինված ուժերում կանանց կարգավիճակի խնդրին», քանի որ չափազանց մեծ թվով կին զինծառայողներ են ենթարկվում սեռական ոտնձգությունների: Զինված ուժերում զինվորական պարտականություններ կատարելու և որոշակի պաշտոններ զբաղեցնելու խնդիրը, առաջխաղացման բնույթը և իրավահավասարությունը առնչվում են կանանց նկատմամբ խտրականության խնդրին:

- **Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ Կոնվենցիան**[7], որը սահմանում է «խոշտանգում» տերմինը և կոնվենցիայի անդամ պետություններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել խոշտանգումները կանխելու, քննելու, պատասխանատվության ենթարկելու, պատժելու և փոխհատուցելու ուղղությամբ:
- **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան**[8], որը հստակեցնում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով ամրագրված իրավունքները: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսվում են բացարձակ իրավունքներ, որոնք երբեք չեն կարող խախտվել Մասնակից պետությունների կողմից. այդ իրավունքներից են խոշտանգման արգելքի և ստրկությունից զերծ մնալու իրավունքը:

❖ Պետք է հատկապես ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Կոնվենցիայով պաշտպանված որոշ իրավունքներ և ազատություններ կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

- **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը**[9] ուղենիշային փաստաթուղթ է, որը սահմանում է յուրաքանչյուր անձի հիմնարար իրավունքները՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, կրոնից կամ որևէ այլ

6https://pace.coe.int/en/files/17424/html

7https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60506

8https://www.gov.am/u_files/file/kron/2%20EuoroConvent-Arm.pdf

9https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1896

կարգավիճակից: Այդ իրավունքներն են կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության, ստրկությունից և խոշտանգումներից զերծ մնալու, կարծիքի և արտահայտվելու ազատության, աշխատանքի և կրթության, սոցիալական ապահովության և արժանապատիվ կենսապայմանների իրավունքները:

2.1 Նաև ուսուցանել ներպետական օրենսդրությունն ու ենթաօրենսդրական ակտերը, օրինակ՝

- ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության Կանոնագիրքը[10], մասնավորապես հատուկ ուշադրություն դարձնելով, օրինակ 6-րդ հոդվածին, որով սահմանվում է, որ «զինծառայողները գտնվում են պետության պաշտպանության տակ: Նրանց կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը պահպանվում են օրենքով: Զինծառայողին անվանարկելը, սպառնալը, բռնությունը կամ ոտնձգությունը նրա կյանքի, առողջության, ունեցվածքի նկատմամբ և զինծառայողի վրա դրված պարտականությունների կատարմանը խոչընդոտող այլ գործողությունները, ինչպես նաև նրա իրավունքների ոտնահարումը առաջացնում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն»: Այդ պատասխանատվությունը, կախված իրավախախտումից, կարող է լինել կարգապահական կամ քրեական:
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը[11], մասնավորապես հատուկ ուշադրություն դարձնելով, օրինակ՝ 4-րդ հոդվածի 1-ին մասին, որով սահմանվում են զինվորական ծառայության կազմակերպման սկզբունքները, ի թիվս որոնց նշվում են նաև ՀՀ Սահմանադրության և օրենքների գերակայությունը, զինծառայողների իրավունքների և ազատությունների առաջնահերթությունները, զինծառայողների պատվի և արժանապատվության նկատմամբ հարգանքն ու խտրականության արգելումը, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավական ու սոցիալական պաշտպանվածությունը:

10https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175851

11https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199723

3. Հակախտրականության, գենդերային հավասարության հասկացությունն ու բովանդակությունը.

Երաշխավորել գենդերային հավասարության վերաբերյալ հիմնական գիտելիքների, ինչպես նաև ռազմական ոլորտում կանանց դերի կարևորության, կանանց իրավունքների պաշտպանության համար կարիքների, սեռական բռնության արձանագրման և դրա վերաբերյալ արձագանքման ուսուցումը:

Կարևոր է ուսուցանել Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի դրույթները, որը, ի թիվս այլնի, կոչված է ապահովելու կանանց՝ քաղաքական և հասարակական կյանքին մասնակցելու, ինչպես նաև կրթություն ստանալու, առողջությունը պահպանելու և աշխատանք ունենալու հավասար իրավունքները և արգելել խտրականության բոլոր ձևերը ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում:

3.1 Իրավունքների խախտման, հատկապես խտրականության, սեռական ոտնձգությունների դրսևորման ձևերի ճանաչումը, դրանց կանխման հրարավորությունները

Ռազմական ոլորտում կանանց ներգրավմանը զուգահեռ բարձրանում է նաև նրանց նկատմամբ սեռական ոտնձգությունների դեպքերի հավանականությունը, ինչը կարող է բացասաբար ազդել զինված ուժերում կանանց ներգրավման ցանկության վրա: Վերջին տարիների ընթացքում մի շարք երկրների բանակներում, ինչպիսիք են Կանադան, Միացյալ Թագավորությունը, ԱՄՆ-ն, Իսպանիան, Գերմանիան ամենաբարձր մակարդակներում գրանցվել են բռնաբարության և սեռական ոտնձգությունների դեպքեր, ինչը նշանակում է, որ զինված ուժերում սեռական բռնությունների դրսևորումների արատավոր մշակույթ կա:

Սեռական հետպանդումներն ու սեռական բռնությունը ոչ միայն զգայական կամ հոգեբանական վնաս են պատճառում տուժողներին, այլև բացասաբար են անդրադառնում կին ծառայողների աշխատանքի որակի վրա, ինչպես նաև՝ վնասում են հասարակության մեջ զինված ուժերի հեղինակությունը: Հետևաբար զինված ուժերում սեռական հետապնդման կանխումը, կարևոր է բոլոր զինծառայողների նկատմամբ խտրականությունից զերծ և անվտանգ միջավայր ապահովելու համար: Այնուամենայնիվ, շատ չարաշահումներ մնում են անպատիժ:

Որոշ պետությունների զինված ուժերում սեռական հետապնդման բնույթի և տարածվածության վերաբերյալ ծավալուն հետազոտություններ իրականացնելու արդյունքում հանգել են այն որոշման, որ պետք է հատուկ միջոցներ ձեռնարկել այս խնդրի դեմ արդյունավետ պայքարելու համար: Մասնավորապես՝ այդպես է եղել Դանիայի դեպքում, որտեղ 2003 թ. պաշտպանության ակադեմիայի հոգեբանության ամբիոնի իրականացրած հետազոտությունների վերաբերյալ զեկույցի արդյունքում Դանիայի պաշտպանության ուժերի հրամանատարությունը, հետապնդումների կանխման և դրանց դեմ պայքարի նպատակով, ձեռնամուխ է եղել մի քանի միջոցառումների իրականացման, մասնավորապես՝ ստեղծել է հոգեբանական խորհրդատվության թեժ գիծ և հիմնադրել տեղական խորհրդատուների ծառայություն:

Գործնականում ՀՀ ԶՈՒ–ում կին զինծառայողների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորումների բողոքարկման միակ մեխանիզմը ներկայումս ՊՆ «Թեժ գիծ» ծառայությանը դիմելն է, մինչդեռ քիչ թվով կանայք են խտրականության ու սեռական ոտնձգությունների վերաբերյալ ահազանգում «Թեժ գիծ» ծառայությանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակում նախաձեռնված զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիայի դեպքերի անանուն հաղորդման (ազդարարման) SS Հավելվածը, որն ըստ ՀՀ ՊՆ-ի հնարավորություն կտա մի կողմից բարձրացնել զինծառայողների իրազեկվածության մակարդակը, մյուս կողմից՝ կանխարգելել բռնության դեպքերի աճը, դեռևս չի գործարկվել, չնայած մեխանիզմի մշակման աշխատանքները սկսվել են շուրջ 2 տարի առաջ:

Ուստի առաջարկում ենք կին զինծառայողների ուսումնական ծրագրում ներառել սեռական ոտնձգությունների և սեռական բռնության տարբեր դրսևորումների ճանաչման ուսուցանում:

3.2 Զինված ուժերում կին զինծառայողների նկատմամբ խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման և զինծառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուսուցանում



Քիչ է նաև զինված ուժերում գոյություն ունեցող բողոքարկման պաշտոնական և ոչ պաշտոնական ընթացակարգերի օգնությանը դիմող կանանց թիվը, քանի որ նրանք վստահություն չունեն զինված ուժերում գործող իրավունքի վերականգման մեխանիզմների նկատմամբ: Շատ կանայք ոչ ոքի չեն պատմում, որ դարձել են սեռական բնույթի չարաշահման զոհ, և ինքնուրույն են փնտրում իրավիճակից դուրս գալու ուղիները՝ վախենալով, որ գանգատը կարող է բացասաբար անդրադառնալ իրենց կարիերայի վրա՝ վախենալով կորցնել աշխատանքը, ինչպես նաև համարում են, որ իրենց ոչ ոք չի հավատա: Որոշ կանայք որոշում են անգամ թողնել ծառայությունը:

Առաջարկում ենք կին զինծառայողների ուսումնական ծրագրում ներառել զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների խախտման, նրանց նկատմամբ խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման մեխանիզմների և դրանց արդյունավետ կիրառման ուսուցանում:

4. Առանձին գիտելիքի ու հմտությունների ուսուցանում և մեթոդական ցուցումներ

- **Առաջնորդության հմտությունների ուսուցանում, ներառյալ՝ հրամանատարական պատասխանատվության ուսուցանում**

Զինված ուժերում կանանց առաջնորդության հմտությունների ուսուցանումը կարևոր է վեջիններիս ծառայողական առաջխաղացման հնարավորության տեսանկյունից. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023 թ. իրականացված «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ կին զինծառայողների կարծիքով ծառայողական առաջխաղացումը հնարավոր

է կոռուպցիոն մեխանիզմներով, «ծանոթով և գումարով»: Միաժամանակ նույն հետազոտությամբ բացահայտվեց, որ կին զինծառայողների ծառայողական առաջխաղացումը մեծամասամբ տեղի է ունենում կրտսեր ենթասպայական կամ սպայական կազմում մի կոչումից հաջորդին անցման շրջանակներում և ոչ թե ավելի բարձր պաշտոններում: Ակնհայտորեն, ՀՀ զինված ուժերում կանանց ներկայացվածության մակարդակը բարձր զինվորական պաշտոններում՝ մայոր և ավելի բարձր կոչումներով հաստիքներում ներկայումս խիստ ցածր է:

Այսպիսով, կանանց մոտ առաջնորդության հմտությունների ուսուցանումը լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ ձևավորելու մտածելակերպ առ այն, որ **կանայք ևս կարող են ունենալ բարձր զինվորական պաշտոններ զբաղեցնելու հավակնություններ:**

- **Աշխատանքային իրավունքների և նորմերի ուսուցանում**

Կազմակերպության կողմից 2023 թ. իրականացված «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» հետազոտության շրջանակներում անդրադառնալով ՄԻՊ-ի կողմից արձանագրված խնդիրներին, ընդգծել ենք, որ առկա չեն խրախուսական նորմեր այն կին զինծառայողների համար, ովքեր ունեն մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն, սակայն ծառայելու նպատակով այդ արձակուրդից իրենց ցանկությամբ չեն օգտվել: Խրախուսական նորմերի բացակայությունը կին զինծառայողների՝ ծառայության վերադառնալու որոշում կայացնելու համար կարող է խոչընդոտ հանդիսանալ: Բացի այդ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքը հնարավորություն չի տալիս երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հաշվի առնել հերթական զինվորական կոչում շնորհելու համար: Սա այն խոչընդոտներից է, որի պատճառով կին զինծառայողները բավարար ներկայացված չեն բարձր պաշտոններում և հիմնականում զրկված են առաջխաղացման հնարավորությունից:

Այսպիսով, աշխատանքային իրավունքների և նորմերի ուսուցանումը հնարավորություն կտա կին զինծառայողներին տիրապետելու անհրաժեշտ գիտելիքներին, որը կնպաստի նրանց ծառայողական առաջխաղացմանը:

Էական է, որ ուսուցանման ընթացքում առանձնակի ուշադրություն դարձվի նաև հղի զինծառայողների աշխատանքային իրավունքներին:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանվում է, որ պետությունները պարտավորվում են հնարավորինս փորձել ստեղծել այնպիսի սոցիալական ծառայություններ (օրինակ՝ երեխաների խնամքով

զբաղվող հաստատություններ), որոնք կանանց հնարավորություն կտան իրենց ընտանեկան պարտականությունները համատեղելու զինծառայության հետ: Հոդված 11-ով նաև սահմանվում է, որ պետությունը պարտավոր է հղիության ընթացքում ապահովել կանանց հատուկ պաշտպանությունը նրանց առողջության համար վնասակար աշխատանքի տեսակներում: Բացի այդ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2023 թ. իրականացված «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ հղիության և ծննդաբերության արձակուրդից հետո որոշ կին զինծառայողներ չեն վերադառնում ծառայության մի շարք պատճառներով, որոնց թվում է նաև վերադաս հրամանատարության վերաբերմունքը, մասնավորապես այն, որ վերջինս նույն հաստիքում այլ զինծառայողի ընդունելուց հետո համոզում է հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող կին զինծառայողին այլևս չվերադառնալ զինվորական ծառայության: Նշվածը ակնհայտ պարունակում է կոռուպցիոն ռիսկեր:

Այսպիսով, հղիության դեպքում կին զինծառայողների իրավունքների ուսուցանումը հնարավորություն կտա կին զինծառայողներին պահանջատեր լինել իրենց իրավունքների պաշտպանությանը և հակազդել վերադաս հրամանատարության կողմից կամայական որոշումների կայացման արատավոր դրսևորումներին:

- **Հաղորդակցության հմտությունների, ներառյալ կանանց և տղամարդկանց միջև հաղորդակցության հմտությունների ուսուցանում**

Զինվորական ծառայության մեջ կանայք և տղամարդիկ կարող են ունենալ տարբեր մոտեցումներ մարտական կամ գործնական իրավիճակների նկատմամբ: Բացի այդ զինվորական միջավայրում հակասությունները կարող են ազդել զինվորական պարտականությունների կատարման որակի վրա:

Այսպիսով, հաղորդակցության հմտությունների ուսուցանումը կարևոր է այն տեսանկյունից, որ զինծառայողները կիմանան, թե ինչպես լավագույնս պետք է արտահայտեն իրենց կարծիքը, դիրքորոշումը՝ փորձելով նվազագույնի հասցնել թյուրըմբռնումը: Հաղորդակցության հմտությունները զարգացնելու դեպքում հնարավոր կլինի առավել արագ և արդյունավետ կարգավորել միջանձնային կոնֆլիկտները:

- **Գենդերազգայունության բաղադրիչի ներդրում, մշակութային, ներառյալ՝ գենդերային նորմերի և սովորույթների ուսուցում**

Գենդերազգայունության ուսուցումը ապահովում է ծառայողական առաջխաղացման հավասար հնարավորություններ կին և տղամարդ զինծառայողների համար: Զինված ուժերում գենդերազգայունության ուսուցանումը կարող է նվազեցնել գենդերային հիմքով բռնությունների դեպքերը: Բացի այդ, մշակութային և գենդերային նորմերի ուսուցանումը կարող է նպաստել կին և տղամարդ զինծառայողների համարժեք ներգրավվածությանը ծառայողական պարտականությունների կատարման գործում: Այն նաև ուսուանում է, որ բոլոր զինծառայողները՝ անկախ սեռից, ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ:

Այսպիսով, առաջարկում ենք կին զինծառայողների ուսումնական ծրագրում ներառել գենդերազգայունության ուսուցումը, որը կնպաստի իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա զինվորական ծառայության կազմակերպմանը:

Հավելված 1

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2024-29.03/457
29.03.2024 թ.

ՀՀ պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանին

Հարգելի պարոն նախարար,

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակն ուսումնասիրելով զինված ուժերում կին զինծառայողների ներգրավման և իրավունքների պաշտպանության երաշխավորումն ապահովող օրենսդրությունը, արձանագրել է մի շարք խնդիրներ:

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից, ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկում է կատարել փոփոխություններ *«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք» ՀՀ օրենքի, «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի, «ՀՀ զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրք» ՀՀ օրենքի* մի շարք հոդվածներում:

Առաջարկությունները ներկայացված են կից:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
Էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«24» 06 2024թ.
N 08/510-բ/6633

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

ՀՀ պաշտպանության նախարարությունում ուսումնասիրվել են ս.թ. մարտի 29-ին Ձեր կողմից ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված Ե/2024-29.03/457 գրությամբ ներկայացված՝ ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների ներգրավման և իրավունքների պաշտպանության երաշխավորումն ապահովող՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք», «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» և «ՀՀ զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրք» ՀՀ օրենքների մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկները:

Ներկայացնում ենք ՀՀ պաշտպանության նախարարության նկատառումները՝ ըստ օրենքների համապատասխան կետերի.

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք

<u>3-րդ կետի վերաբերյալ</u>

Զինվորական ծառայությանն ընդգրկված կանանց հղիության ժամանակահատվածում վերջիններիս առողջական վիճակի զննության առանձնահատուկ կարգի սահմանման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ բոլոր զինծառայողները (ներառյալ՝ վերը նշված դեպքերում), համաձայն «Զինվորական ծառայության և զինծառողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի դրույթների և գործող ընթացակարգերի, ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում կամ ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանած կարգով՝ այլ բժշկական հաստատություններում:

Բացի այդ, զինվորական ծառայությանն ընդգրկված կանանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնող կարգավորումները ներկայացված են ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N404-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելված N1-ով սահմանված ցանկի 96 - 103 հոդվածներով: Մասնավորապես, 103-րդ հոդվածի պարզաբանումների համաձայն՝ հղիները, անկախ հղիության ժամկետից, զինվորական ծառայության չեն զորակոչվում:

Վերը նշված Որոշմամբ՝ զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը և քաղաքացու կամ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանող դրույթների փոփոխությունների նախաձեռնումը գտնվում է ՀՀ առողջապահության նախարարության իրավասությունների շրջանակում, իսկ Զինված ուժերում այդ գործընթացների համակարգումն իրականացնում է ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող միակ հաստիքային մարմինը՝ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնը:

2. «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք» ՀՀ օրենք

3-րդ կետի վերաբերյալ

Աշխատանքային օրենսդրությամբ կին զինծառայողների համար սահմանված առավելագույն նորմերը գերազանցող ծանրությունների տեղափոխման և տեղաշարժման հետ կապված աշխատանքների նշանակման արգելքը սահմանող 270-րդ հոդվածի փոփոխություն կատարելը՝ վերջիններիս ֆիզիկական պատրաստվածության մակարդակի նկատառմամբ, նպատակահարմար չէ, քանի որ արական և իգական սեռերի զինծառայողների ֆիզիկական պատրաստվածության գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված ֆիզիոլոգիական առանձնահատկություններով:

5-րդ կետի վերաբերյալ

Բոլոր պարտադիր ժամկետային զինծառայողների համար, անկախ սեռային պատկանելիությունից, ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության կողմից ձեռք է բերվում և հատկացվում միայն օճառ, օճառաման, սափրվելու ածելի, սափրվելու փրփուր, ատամի խոզանակ, ատամի մածուկ, սանր, զուգարանի թուղթ, եղունգկտրիչ, որի մասին բազմիցս տեղեկացվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին:

Նոր և որակյալ համազգեստների ձեռքբերման գործընթացի շրջանակներում պլանավորված է նաև անցկացնել համապատասխան քննարկում շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ ՀՀ պաշտպանության նախարարի 2021 թվականի N510 հրամանում փոփոխություն կատարելու և կին զինծառայողներին անհրաժեշտ հիգիենայի պարագաներով ապահովելու նոր չափաքանակ ներառելու նպատակով:

3. «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենք

1-ին կետի վերաբերյալ

Կին զինծառայողների նկատմամբ 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի («Զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով», «Հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով», «Կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով») կիրառման հարցին անդրադարձ կկատարվի իգական սեռի ժամկետային պարտադիր զինծառայողների քանակի ավելացման դեպքում, կարգապահական տույժի կրման վայրերում (կարգապահական վաշտերում) կեցության համապատասխան պայմանների ապահովմանը զուգահեռ:

4. «ՀՀ զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրք» ՀՀ օրենք

1-ին կետի վերաբերյալ

Միայն կին զինծառայողներով համալրված զորամասերի համար օրենսդրությամբ ներքին ծառայության կազմակերպման կարգ սահմանելը նպատակահարմար չէ, քանի որ, ինչպես նշվել է առաջարկություններում, «Անհրաժեշտ է օրենսդրական կարգավորումներում վերացնել նման տարբերակված, խտրական սահմանումները»:

Միաժամանակ հայտնում ենք, որ.

1. «ՀՀ ԶՈՒ ՆԾ կանոնագիրք» և «ՀՀ ԶՈՒ ԿուՊԾ կանոնագիրք» ՀՀ օրենքների՝ կին զինծառայողներին վերաբերող հոդվածներում լրացումներ և փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են և առաջիկայում օրենքների նախագծերը կդրվեն շրջանառության:

2. Մյուս առաջարկներն ընդունվել են ի գիտություն և կքննարկվեն պաշտպանության նախարարությունում՝ իրականացվող բարեփոխումների շրջանակներում:

Հարգանքով՝ **Հ. ԲԱՏԻԿՅԱՆ**

Digitally signed by
HAMLET BATIKYAN 1905880359
Date: 2024.06.21 19:24:53

Կատ.՝ Ն. Բաղդանյան
Հեռ.՝ 010-29-44-07

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY VANADZOR OFFICE

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում կանանց շարքային կազմի պարտադիր զինծառայողների ծառայության վայրեր նշանակումն **իրականացվում է առանց վիճակահանության**՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ ԶՈՒ-ում գործում է կանանց միայն մեկ գումարտակ, իհարկե գործնականում կիրառելի և տրամաբանական չէ կանանց շարքային կազմի պարտադիր զինծառայողների ծառայության վայրեր նշանակումն իրականացնել վիճակահանությամբ:

Միևնույն ժամանակ, խնդիրը դիտարկելով ավելի երկարաժամկետ արդյունքի համատեքստում, գտնում ենք, որ անհրաժեշտ է մշակել և ներդնել մեխանիզմ, որի իրագործմամբ հնարավոր կլինի դիտարկել կին և տղամարդ զինծառայողների ծառայության իրականացումը նույն գումարտակում (օրինակ , ԱՄՆ-ում տղամարդ և կին զինծառայողները մարզումներին մասնակցում են միասին):

Այս նպատակին հասնելու համար պետք է ջանքեր գործադրել զինծառայողների շրջանում կին և տղամարդ զինծառայողների իրավահավասարության, սեռով պայմանավորված խտրականության արգելքի սկզբունքի ամրապնդման ուղղությամբ:

2. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինծառայողներին ծառայության վայրեր նշանակելիս հաշվի են առնվում ստացած կրթությունը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը, ինչպես նաև «օրենքով սահմանված այլ պայմաններ», որոնց մասին օրենքում նշումներ չկան:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում հստակեցնել այն սկզբունքները, որոնց հիման վրա սահմանվում է «օրենքով սահմանված այլ պայմաններ» ձևակերպումը, մասնավորապես՝ հստակեցնել, թե բացի ստացած կրթությունը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը ինչ պայմաններ են հաշվի առնվում շարքային կազմի պարտադիր զինծառայողներին ծառայության վայրեր նշանակելիս: Բացի այդ, հստակեցնել «այլ պայմաններ»-ի բովանդակությունը կին և տղամարդ զինծառայողների համար:

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY VANADZOR OFFICE

3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով կանանց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դրույթը սահմանելու հետ մեկտեղ սահմանված չեն կանանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնող կարգավորումները, մասնավորապես՝ ժամկետային զինվորական ծառայության մեջ ընդգրկված կին զինծառայողների մոտ հղիության ժամանակաընթացքում վերջիններիս առողջական վիճակի գնության կարգը, ծառայողական պարտականությունների ծավալների վերաբերյալ կարգավորումը:

Այսպիսով, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով անհրաժեշտ է սահմանել ժամկետային զինվորական ծառայության ընթացքում կին զինծառայողի մոտ հղիության առկայության դեպքում վերջինիս առողջական վիճակի հետազոտությունների իրականացման կարգը:

Հստակեցնել կին ժամկետային զինծառայողի հղիության ժամանակահատվածում վերջինիս զինապարտության կարգը՝ մասնավորեցնելով, թե հղիության առկայության դեպքում արդյոք կինը շարունակում է ներգրավված լինել զինվորական ծառայության մեջ և եթե այո, ապա ինչ ժամկետով (մինչև հղիության որ շաբաթը), ինչ պայմաններում, օրվա ինչ կարգացուցակով, ֆիզիկական ծանրաբեռնվածության ինչ մակարդակով:

Միաժամանակ հղի ժամկետային կին զինծառայողների համար սահմանել ֆիզիկական վարժությունների ցանկ՝ հիմնվելով բժիշկ-մասնագետների կողմից տրված ծանրաբեռնվածության սահմանափակումների վերաբերյալ ցուցումների վրա:

Հղիության առկայության դեպքում ժամկետային կին զինծառայողների զինվորական ծառայությունը կասեցնելու անհրաժեշտության դեպքում օրենսդրությամբ սահմանել համապատասխան կարգ:

4. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, ու *«Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդը հաշվարկվում է կին զինծառայողի անընդհատ ծառայության ստաժում՝ պաշտոնային դրույքաչափը սահմանելու,* ***հերթական զինվորական կոչում շնորհելու (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածի),*** *զինվորական ծառայությունից արձակվելիս դրամական օգնության չափը և զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար:»*

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով թվարկված են այն ժամանակահատվածները, որոնք չեն հաշվարկվում զինծառայողի՝ հերթական զինվորական կոչում ստանալու մեջ: Հղիության և ծննդաբերության արձակուրդը նշված դրույթում առկա չէ, ինչը նշանակում է, որ այն կարող է հաշվարկվել կին զինծառայողներին հերթական զինվորական կոչում շնորհելիս: Մինչդեռ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY VANADZOR OFFICE

գործնականում հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածը չի հաշվարկվում կին զինծառայողներին հերթական զինվորական կոչում շնորհելիս:

Ելնելով վերոգրյալից և կին զինծառայողների ֆիզիոլոգիական առանձնահատկությունների պատճառով ծառայողական առաջխաղացման հնարավորությունից չօգտվելու փաստացի առկա խնդրից, անհրաժեշտ է օրենքով սահմանել հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող կին զինծառայողների երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը վերջիններիս հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի առնելու դրույթը:

«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը»

ԶՈՒ ներքին ծառայության կանոնագիրքը սահմանում է վարքագծի կանոններ, որոնք նույն կերպ են գործում և՛ կին, և՛ տղամարդ զինծառայողների համար, սակայն առկա են նաև կարգավորումներ, որոնք բացառում են կանանց մասնակցությունը զինվորական ծառայության որոշակի ոլորտներում կամ տարբերակված են կիրառվում կին և տղամարդ զինծառայողների համար:

1. Կանոնագրքի **264-րդ հոդվածը սահմանում է,** որ *խաղաղ ժամանակ* **կին զինծառայողները** *օրվա վերակարգի կազմում չեն նշանակվում, բացառությամբ հանրակացարանի օրվա վերակարգի:* Անհրաժեշտության դեպքում նրանք ըստ իրենց զինվորական կոչման և զբաղեցրած պաշտոնի, կարող են նշանակվել որպես հերթապահ բժիշկ (բուժակ), շտաբի հերթապահ և թղթատար (ցրիչ): Կին զինծառայողները հերթապահության են նշանակվում նաև ըստ մասնագիտության:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տղամարդ զինծառայողները ներգրավվելով ծառայողական առավել լայն պարտականությունների կատարման շրջանակում, ունենում են ծառայողական առաջխաղացման առավել մեծ հնարավորություններ, ինչպես նաև ելնելով խտրականության արգելքի սկզբունքից, կարևոր է երաշխավորել օրվա վերակարգի կազմում բացի տղամարդ զինծառայողներից նաև կին զինծառայողների նշանակումը, ապահովելու համար ծառայողական առաջխաղացման համար հավասար հնարավորություններ կին զինծառայողների համար: Միևնույն ժամանակ պետք է ապահովել անհրաժեշտ պայմաններ վերակարգում ընդգրկվող կին զինծառայողների համար, ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու համար՝ հաշվի առնելով կանանց առանձնահատուկ պահանջները նրանց ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված:

2. Կանոնագրքի **268-րդ հոդվածը սահմանում է,** որ սպաներից և ենթասպաներից նշանակված գնդի հերթապահը, գնդի հերթապահի օգնականը, հավաքակայանի հերթապահը, հսկիչ-անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի հերթապահը զինվում

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY VANADZOR OFFICE

են երկու լիցքավորված պահեստատուփ ունեցող ատրճանակներով: Իսկ սերժանտներից նշանակված հավաքակայանի հերթապահը, հսկիչ-անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի հերթապահը, ինչպես նաև հսկիչ-անցագրային կետի հերթապահի օգնականները, ստորաբաժանումների հերթապահներն ու օրապահները, ***բացի հանրակացարանի օրվա վերակարգի կազմի մեջ մտնող կին զինծառայողներից,*** հավաքակայանի օրապահներն ու թղթատարները (ցրիչները) զինվում են սվին-դանակներով:

Կանանց հատկացվող զենքի սահմանափակման խնդիրը հակասում է կին զինծառայողների մարտական հերթապահություն իրականացնելու թույլտվության մասին դրույթին, որով սահմանվում է նաև համապատասխան զենքի կրումը վերջիններիս կողմից:

Ելնելով Կանոնագրքի 264-րդ հոդվածում կին զինծառայողներին օրվա վերակարգի կազմում նշանակելու վերաբերյալ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունից, անհրաժեշտ է նաև «ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության» կանոնագրքի 268-րդ հոդվածով սահմանել հերթապահության մեջ ընդգրկված բոլոր զինծառայողների զինվելու համար հավասար հնարավորություններ անկախ զինծառայողի սեռից:

3. Կանոնագրքի **270-րդ հոդվածը սահմանում է,** որ արգելվում է կին զինծառայողներին նշանակել այնպիսի աշխատանքների, որոնք կապված են աշխատանքային օրենսդրությամբ նրանց համար սահմանված առավելագույն նորմերը գերազանցող ծանրությունների տեղափոխման և տեղաշարժման հետ:

Կանոնագրքի 270-րդ հոդվածով սահմանված դրույթը խտրական է տղամարդ զինծառայողների նկատմամբ այն դեպքում, երբ կին և տղամարդ զինծառայողներն ունեն ֆիզիկական պատրաստվության հավասար մակարդակ, սակայն կին զինծառայողներին արգելվում է նշանակել աշխատանքային օրենսդրությամբ նրանց համար սահմանված առավելագույն նորմերը գերազանցող ծանրությունների տեղափոխման և տեղաշարժման կետ կապված աշխատանքներում : Հետևաբար, սույն դրույթը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ թե կանանց ֆիզիոլոգիական առանձնահարկությունները, այլ նրանց ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

4. Կանոնագրքում առկա են ձևակերպումներ, որոնք, ի սկզբանե, խտրական են կին զինծառայողների հանդեպ: Մասնավորապես, զինծառայողներին թվարկելիս բազմիցս նշվում է «սպաների, ենթասպաների պայմանագրային ծառայության զինծառայողների և կին զինծառայողների» (հոդված 228), «Սպաները, ենթասպաները, պայմանագրով ծառայության անցած զինծառայողները և կին զինծառայողները, ըստ բժշկի եզրակացության, բուժումը կարող են ստանալ տանը» (հոդված 352):

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY VANADZOR OFFICE

Քանի որ նման ձևակերպումներն խտրական են կին զինծառայողների նկատմամբ՝ զինվորական ծառայության պարտականությունների սահմանման տեսակետից, ապա պետք է վերացնել զինծառայողների իրավունքներին և պարտականություններին վերաբերող դրույթների կարգավորումը ըստ սեռային պատկանելիության: Փաստացի կին զինծառայողների համար միակ տարբերակիչ հատկանիշը, նշված օրենսդրական նորմով, պայմանավորվում է նրանց սեռով, մինչդեռ կին զինծառայողները կարող են լինել և սպաներ, և ենթասպաներ, և շարքային զինծառայողներ:

Անհրաժեշտ է օրենսդրական կարգավորումներում վերացնել նման տարբերակված, խտրական սահմանումները:

5. 2023 թ. հունիսին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած իգական սեռի քաղաքացիների զորակոչի կազմակերպման հիմքը և կարգը սահմանող լրացումներ և փոփոխություններ ի փաթեթից, պարզ չէ, թե արդյոք նախատեսվում է զինված ուժերին տրամադրվող բյուջեում հատկացումներ կատարել պարտադիր զինվորական ծառայություն անցնող կանանց հիգիենայի պարագաների տրամադրման համար:

Զինծառայողների շրջանում Կազմակերպության կողմից իրականացված հարցազրույցներից պարզ է դարձել, որ կանանց հատկացվող հիգիենայի պարագաները չեն բավարարում կանանց պահանջմունքներին և նրանք ստիպված են լինում սեփական միջոցներով ձեռք բերել համապատասխան պարագաներ:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանել պարտադիր զինծառայող կանանց հիգիենայի պարագաների տրամադրման կարգը՝ հաշվի առնելով վերջիններիս ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Նույնը վերաբերում է նաև պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայություն անցնող կանանց:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը»

1. ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված են զինծառայողներին տրվող կարգապահական տույժերի հետևյալ տեսակները՝ 1) նկատողություն, 2) խիստ նկատողություն, 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով, 4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ 5 տոկոսից մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով, 5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով, 6) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով, 7) գերատեսչական կրծքանշանից զրկում, 8) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին, 9) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, 10)

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY VANADZOR OFFICE

զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով, 11) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մեկ ամսից մինչև վեց ամիս ժամկետով, 12) ռազմաուսումնական հաստատությունից հեռացում, 13) զինվորական ծառայությունից արձակում: **Կին զինծառայողների նկատմամբ չեն կիրառվում 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը** («զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով», «հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով», «կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով» կարգապահական տույժերը:)

Հայտնի է, որ հատկապես վերջին տարիներին պարտադիր ժամկետային զինծառայողների մեծ մասի համար զորամասի տեղաբաշխման վայրից արձակումն ու հիմնական արձակուրդի տրամադրումն ունեն չափազանց մեծ կարևորություն:

Այս առումով հերթական արձակումից մինչև 1 ամիս ժամկետով զրկումը և հիմնական արձակուրդի տրման հետաձգումը՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով տույժերի կիրառումը, որոնք նախատեսված են զորքերում կարգապահության ապահովման համար, չպետք է տարբերակված կիրառվի զինծառայողների նկատմամբ ըստ նրանց սեռային պատկանելիության: Մասնավորապես «կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով» տույժի տեսակի կիրառումը չպետք է պայմանավորել զինծառայողի սեռային պատկանալիությամբ:

«ՀՀ զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը»

1. ՀՀ ԶՈՒ կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքի 8-րդ հոդվածով սահմանվում է, որ կին զինծառայողները կայազորային և պահակային ծառայություններում չեն ընդգրկվում, բացի զինծառայողների թաղման ժամանակ հարգանք մատուցելու և հուշարձանների ու հայրենիքի ազատության և անկախության համար մղված մարտերում զոհված զինծառայողների գերեզմաններին պսակ դնելու, ինչպես նաև կայազորային միջոցառումների ապահովմանը մասնակցելու դեպքերի:

Հայտնի է, որ յուրաքանչյուր զորամասում ներքին ծառայությունը կազմակերպվում է ամենօրյա, անընդհատ ռեժիմով, որի կարևորագույն բաղադրիչներից մեկը կայազորային և պահակային ծառայությունն է: Ծառայության այս տեսակի մեջ ներառվում են օրվա վերակարգերը, զորամասում տեղակայված կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների վերահսկողությունը, սակայն ՀՀ ԶՈՒ կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքն արգելում է կին զինծառայողներին ընդգրկել այդ ծառայությունում:

Անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել ներքին ծառայության կազմակերպման կարգը այն զորամասում, որտեղ բոլոր ծառայողները կանայք են:

Հավելված 2.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2024-19.03/402
19.03.2024 թ.

ՀՀ պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանին

Հարգելի պարոն նախարար,

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2023 թ. սեպտեմբեր - 2024 թ. մարտ ժամանակահատվածում նախաձեռնել և իրականացրել է հետազոտություն ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի թիվ 1325 բանաձևի կիրակմանն ուղղված 2022-2024 թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագրի ուղղությամբ իրականացված աշխատանքների զարգացումները, զինված ուժերում ներգրավված կին զինծառայողների իրավունքների պաշտպանության վիճակը դիտարկելու նպատակով:

Հետազոտության հիմքում դրվել է ՀՀ զինված ուժերում կանանց ներգրավվածության վերաբերյալ խնդիրները կարգավորող իրավական ակտերի վերլուծությունը և զինված ուժերում կին և տղամարդ զինծառայողների հետ իրականացված հարցարզույցների ամփոփումը:

Արդյունքում, կազմվել է ***«Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցը***, որում ներկայացված են շարային ծառայության մեջ կանանց նարգրավման մակարդակն ու խնդիրները, խտրականության դրսևորումները զինված ուժերում կին զինծառայողների նկատմամբ, մասնավոր կյանքի այն ոլորտները, որոնց

առնչվում են կանայք զինված ուժերում ծառայելիս և զինծառայողների շարունակական իրազեկման ու կրթության ուղղությամբ իրականացվող ծրագրերն ու գործողությունները:

Հետազոտության արդյունքում Կազմակերպությունը վերհանել է կանանց զինվորական ծառայության ներգրավման հետ կապված խնդիրները, որոնց լուծման ուղղությամբ ձևակերպել է առաջարկություններ:

Ակնկալում եմ Ձեր մեկնաբանությունները զեկույցում ներկայացված առաջարկությունների վերաբերյալ:

Կից ներկայացնում եմ՝

1. «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցի էլեկտրոնային (հայերեն) տարբերակը և անգլերեն տարբերակը՝ ոչ ամբողջական (զեկույցի ամբողջական անգլերեն թարգմանությունը հասանելի կլինի ավելի ուշ՝ կազմակերպության կայքէջում՝ www.hcav.am),
2. Զեկույցում ներկայացված առաջարկությունները:

Հարգանքով՝

կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«27» 03 2024թ.
ՊՀ/5100-ԳՔ/3231

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր՝ 19.03.2024թ. թիվ Ե/2024-19.03/402 գրության՝ տեղեկացնում ենք, որ «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցը և Զեկույցում ներկայացված առաջարկությունները Պաշտպանության նախարարությունում ուսումնասիրվել են:

Կից տրամադրում ենք առաջարկությունների վերաբերյալ մեր դիտարկումները:

1. **Մշակել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագրեր, զինվորական ծառայության կազմակերպումն ապահովող օրենսդրական կարգավորումները մշակելիս ապահովել ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքներում, ինչպես նաև օրենսդրական փոփոխության նախագիծը ներկայացնել հանրային քննարկման:**
   Ընդունվել է ի գիտություն:
2. **Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողների մեծամասնությունը զինվորական ծառայության է անցնում ֆինանսական խնդիրների լուծման նպատակով Կառավարությունը անհրաժեշտ ջանքեր պետք է գործադրի զինվորական ծառայության անցնելու այլ շարժառիթների խթանման ուղղությամբ, մասնավորապես՝ զինվորական մասնագիտության գրավչությունը և հանրության շրջանում զինվորական ծառայության նկատմամբ հարգանքը բարձրացնելու ուղղությամբ:**
   Ընդունվել է ի գիտություն:
3. **Զինվորական ծառայության կազմակերպման վերաբերյալ կարգավորումներում պետք է կատարել անհրաժեշտ փոփոխություններ բացառելու համար խտրականության դրսևորումների հավանականությունն օրենսդրության մակարդակում (կանանց տրամադրվող զինատեսակների սահմանափակման հարցում, վերակարգի նշանակման գործընթացքում, տույժերի կիրառման տարբերակված մոտեցման հարցում): Գործադրել անհրաժեշտ ջանքեր՝**

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

կրթական, պարբերական վերապատրաստման ծրագրերի միջոցով, կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպի, կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ:

ՀՈՒ կարգապահական կանոնագրքում առկա է կին զինծառայողների վերաբերյալ երեք տեսակի փույժի տարբերակում, որոնցից երկուսը պայմանագրային կին զինծառայողների նկատմամբ չեն կիրառվում, քանի որ դրանք բովանդակային առումով տարածվում են միայն պարտադիր ժամկետային զինծառայողների վրա, իսկ «կարգապահական վաշտ ուղարկելը» փույժը կին զինծառայողների նկատմամբ չի կիրառվում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ (ընտանիք ունենալը, կարգապահական վաշտերում անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը և այլն):

Ինչ վերաբերում է կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպին և կարծրատիպերին՝ ՊՆ ներկայացուցիչները հանրության շրջանում (այդ թվում ավագ դպրոցների, քոլեջների սովորողների հետ) հանդիպումների ընթացքում ներկայացնում են ՀՈՒ-ում կանանց լիարժեք և բովանդակային ներգավվման անհրաժեշտության, ծառայության ընթացքում նրանց ձեռքբերումների, ինչպես նաև Կանայք, Խաղաղություն, Անվտանգություն օրակարգի կարևորության մասին:

4. **Անհրաժեշտ փոփոխություններ կատարել նաև օրենսդրական կարգավորումներում առկա ձևակերպումներում և զինվորական կոչումներ զբաղեցնող զինծառայողների թվում չտարանջատել կանանց՝ «կին զինծառայող» ձևակերպմամբ:**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերի ու 53-րդ հոդվածի համապատասխանում նշված առաջարկը լրացուցիչ քննարկման կարիք ունի, քանի որ հղիության և ծննդաբերության արձակուրդ կարող է տրվել միայն կին զինծառայողներին, իսկ երեխայի խնամքի արձակուրդ՝ նաև արական սեռի քաղաքացիներին՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները: Ինչ վերաբերում է զինվորական կոչումներին, ապա դրա հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքի դրույթներում «կին զինծառայող» տարանջատում առկա չէ:

5. **Ձևավորել զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների, արժանապատվության պաշտպանությունն ապահովող իրավական երաշխիքներ, թե զինված ուժերում նրանց ներգրավման, թե զինվորական ծառայության ընթացքում: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի զինված ուժերում բարեվարքության կանոնների ներդրումը, որոնց բացակայությունը՝ բացասաբար ազդելով տղամարդ զինծառայողների զինվորական ծառայության, զինվորական պարտավորությունների կատարման վրա, էլ ավելի բացասական ազդեցություն է ունենում կին զինծառայողների իրավունքների երաշխավորման և ծառայողական պարտականությունների կատարման վրա: Մասնավորապես, բարեվարքության կանոնների խիստ**

պահպանումը կարևոր նշանակություն ունի ենթակա-հրամանատար հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրները, կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները, հովանավորչությունը բացառելու հարցում:

Մշակվել է «ՊՆ համակարգի պայմանագրային զինծառայողների վարքագծի կանոնների նախագիծը», որը ներկայացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարծիքին և այժմ գտնվում է միջազգային փորձաքննության փուլում:

6. **Ստեղծել խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ՝ միաժամանակ խրախուսելով զինծառայողներին գործնականում կիրառել նման մեխանիզմները՝ իրավահավասարության խթանման նպատակով: Մասնավորապես, զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակմանը զուգտնթաց երաշխավորել զինծառայողների իրազեկման բարձր մակարդակը՝ այն արդյունավետ կերպով կիրառելու համար:**

   Ընդունվել է ի գիտություն:

7. **Խթանելով կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանը հնարավորությունները՝ նպաստել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:**

   Ընդունվել է ի գիտություն:

8. **Երաշխավորել անկախ սեռից բոլոր զինծառայողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար՝ անկախ սեռային պատկանելությունից:**

   Ընդունվել է ի գիտություն:

9. **Օրենքով սահմանել երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի առնելու դրույթը, որը կխթանի կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանն ու ներկայացվածությանը բարձր պաշտոններում:**

   «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով սպառիչ թվարկված են այն ժամանակահատվածները, որոնք չեն հաշվարկվում զինծառայողի՝ հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետների մեջ:

   Երեխայի խնամքի արձակուրդում գտնվող կին զինծառայողին զբաղեցրած հաստիքով նախատեսված հերթական զինվորական կոչում շնորհելու արգելք կամ կոչման կրման ժամկետի կասեցում օրենքով սահմանված չէ:

10. **Բացառել գործնականում առկա այն դեպքերը, երբ հղիության և ծննդաբերության արձակուրդ մեկնած կին զինծառայողներին հրամանատարները համոզում են չվերադառնալու ծառայության:**

Նման բովանդակության բողոքներ Պաշտպանության նախարարությունը չի ստացել:

11. **Բոլոր զինծառայողների համար ապահովել արժանապատիվ ծառայության նվազագույն պայմաններով՝ թե շենքային, թե կենցաղ-սպասարկման, թե հիգիենայի պահպանման:**
Ընդունվել է ի գիտություն
12. **Ջանքեր գործադրել բոլոր զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստի տրամադրման ուղղությամբ:**
Ընդունվել է ի գիտություն:
13. **Հաշվի առնելով ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված ՀՀ ԳԱԾ-ի մասին զինծառայողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը՝ երաշխավորել իրազեկման դասընթացներին, միջոցառումներին, քննարկումներին բոլոր զինծառայողների պարբերական մասնակցությունը:**
ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված գործողությունների և առաջին և երկրորդ ազգային ծրագրի շրջանակներում տեղական (Դեմոկրատիան այսօր ՀԿ) և միջազգային գործընկերների (Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոն (DCAF)) հետ համատեղ, պարբերաբար իրականացվում են ՀՈՒ անձնակազմի իրազեկում՝ 1325 բանաձևի դրույթների վերաբերյալ:
14. **Զինված ուժերում իրականացնել մարդու իրավունքների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, հակախտրականության, կանանց նկատմամբ բռնության արգելքի մասին թեմաներով ուսուցում, որի շնորհիվ վերջիններս կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները զինվորական ծառայության հետ կապված տարբեր ոլորտներում:**
2020-2022թթ. ՄԻՊ ռազմավարության շրջանակներում ՀՈՒ անձնակազմի համար պարբերաբար իրականացվել են մարդու իրավունքների՝ մասնավորապես կյանքի իրավունքի, խտրականության արգելքի թեմաներով վերապատրաստման դասընթացներ, որոնք շարունակական բնույթ են կրում:
15. **ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում և այլ առցանց հարթակներում ապահովել զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նութերի (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ, մամուլի հաղորդագրություններ) տեսանելիությունը, ինչը կնպաստի զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը թե կին, թե տղամարդ զինծառայողների շրջանում:**
Զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նյութեր, տեսահոլովակներ հրապարակվում են Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում, իսկ նրանց ծառայության վերաբերյալ հաղորդումները՝ «Զինուժ» հեռուստածրագրի շրջանակներում:

Հարգանքով՝ Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Digitally signed by
HAMLET BATIKYAN 1905880359
Date: 2024.03.26 18:02:54

Կատարող՝ Ս. Սողոմոնյան
Հեռ. 010 66 00 49

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

Հավելված 3.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի
պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of
Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2024-29.07/927
29.07.2024 թ.

ՀՀ պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանին

Հարգելի պարոն նախարար,

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի թիվ 1325 բանաձեւի կիրակմանն ուղղված 2022-2024 թվականների գործողությունների Ազգային երկրորդ ծրագրի ուղղությամբ իրականացված աշխատանքների զարգացումները, զինված ուժերում ներգրավված կին զինծառայողների իրավունքների պաշտպանության վիճակը դիտարկելու նպատակով 2023 թ. սեպտեմբեր - 2024 թ. մարտ ժամանակահատվածում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը նախաձեռնել եւ իրականացրել է հետազոտություն, որի արդյունքում կազմվել է «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցը:

Հետազոտության արդյունքում Կազմակերպությունը վերհանել է կանանց զինվորական ծառայության ներգրավման հետ կապված խնդիրները, որոնց լուծման ուղղությամբ ձևակերպված առաջարկությունները Ե/2024-19.03/402 գրությամբ ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ քննության առնելու և արձանագրված խնդիրների լուծման ուղղությամ քայլեր ձեռնարկելու առաջարկով: 2024 թվականի մարտի 27-ին ՊՆ/510-ԳՔ/3231 պատասխան գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ Կազմակերպության կողմից ներկայացված մի շարք առաջարկություններն ընդունվել են ի գիտություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ այն մասին, թե առաջարկությունների ներկայացման պահից՝ 2024 թ մարտից մինչ օրս՝

1. արդյո՞ք մշակվել է կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագիր, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 1)
   1.1 եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության զինվորական պատրաստության ծրագրի ուսումնական պլանը, դրա հաստատման և կիրարկման վերաբերյալ իրավական ակտի պատճենը,
2. արդյո՞ք իրականացվել են օրենսդրական փոփոխություններ կանանց զինվորական ծառայության կազմակերպումը սահմանող օրենսդրության մեջ, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 1)
   2.1 եթե այո, ապա ո՞ր իրավական ակտերում և ի՞նչ փոփոխություններ են կատարվել,
   2.2 եթե դեռևս չեն կատարվել, ապա խնդրում եմ տրամադրել փոփոխությունների վերաբերյալ իրավական ակտերի նախագիծը կամ նախագծերը,
   2.3 արդյո՞ք օրենսդրական փոփոխությունները մշակելիս ապահովվել է ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը,
   2.4 ովքեր/ ինչպիսի պաշտոններ զբաղեցնող կանայք են մասնակցել օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակմանը,
3. ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել ֆինանսական ապահովությունից բացի այլ շարժառիթների գործարկման ուղղությամբ՝ կանանց զինվորական ծառայության անցնելու խթանման համար, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 2),
   3.1 եթե դեռևս չեն ընդունվել, ապա խնդրում եմ տրամադրել կանանց զինվորական ծառայության ներգրավելու արդյունավետ մեխանիզմների վերաբերյալ իրավական ակտի նախագիծը,
4. ի՞նչ փուլում է գտնվում զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակման գործընթացը, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 6),

4.1 եթե հավելվածի մշակումն ավարտվել է, ապա գործարկման ինչ փուլում է գտնվում այն, և երբ է նախատեսվում դրա վերջնական գործարկումը,

5. բացի վերոգրյալ հավելվածի մշակումից ի՞նչ այլ իրավական ակտեր են ընդունվել զինծառայողների կողմից իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ անանուն հաղորդման մեխանիզմների ներդրման նպատակով,

5.1 եթե դեռևս չեն մշակվել նման մեխանիզմները, ապա ե՞րբ է նախատեսվում դրանց մշակումը և կիրառումը, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 6),

6. ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացման վերաբերյալ, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 7)

6.1 եթե դեռևս չեն ընդունվել, ապա երբ են նախատեսվում դրանց ընդունումը և կիրառումը,

6.2 եթե կան, ապա խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի նախագիծը,

7. ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել կին զինծառայողների ռազմական կրթության և մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցության վերաբերյալ, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 8),

7.1 եթե դեռևս չեն ընդունվել, ապա երբ է նախատեսվում դրանց կիրառումը, և խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի նախագիծը,

8. 2024 թվականի ընթացքում քանի՞ կին և քանի՞ տղամարդ զինծառայող է մասնակցել մասնագիտական կարողությունների զարգացմանն ու ռազմական կրթությանն ուղղված վերապատրաստումներին,

9. կին զինծառայողների զինվորական ծառայության շենքային, կենցաղ-սպասարկման պայմանների բարելավման ու հիգիենայի պահպանման ուղղությամբ, ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել, խնդրում եմ տրամադրել դրանց պատճենները(ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 11)

9.1 եթե դեռևս չեն ընդունվել, ապա խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի նախագիծը,

10. զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստով ապահովելու նպատակով նոր չափորոշիչները հաստատվել են, թե ոչ,
    10.1 եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի պատճենը,
    10.2 եթե ոչ, ապա ապա խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի նախագիծը և երբ է նախատեսվում դրանց հաստատումը և կիրառումը (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 12):

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կից ներկայացվում է՝

1. Կազմակերպության Ե/2024-19.03/402 գրության պատճենը,
2. ՀՀ ՊՆ 2024 թվականի մարտի 27-ի ՊՆ/510-ԳՔ/3231 պատասխան գրության պատճենը:

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
Էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մշակել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագրեր, զինվորական ծառայության կազմակերպումն ապահովող օրենսդրական կարգավորումները մշակելիս ապահովել ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքներում, ինչպես նաև օրենսդրական փոփոխության նախագիծը ներկայացնել հանրային քննարկման:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողների մեծամասնությունը զինվորական ծառայության է անցնում ֆինանսական խնդիրների լուծման նպատակով Կառավարությունը անհրաժեշտ ջանքեր պետք է գործադրի զինվորական ծառայության անցնելու այլ շարժառիթների խթանման ուղղությամբ, մասնավորապես՝ զինվորական մասնագիտության գրավչությունը և հանրության շրջանում զինվորական ծառայության նկատմամբ հարգանքը բարձրացնելու ուղղությամբ:

3. Զինվորական ծառայության կազմակերպման վերաբերյալ կարգավորումներում պետք է կատարել անհրաժեշտ փոփոխություններ բացառելու համար խտրականության դրսևորումների հավանականությունն օրենսդրության մակարդակում (կանանց տրամադրվող զինատեսակների սահմանափակման հարցում, վերակարգի նշանակման գործընթացքում, տույժերի կիրառման տարբերակված մոտեցման հարցում): Գործադրել անհրաժեշտ ջանքեր՝ կրթական, պարբերական վերապատրաստման ծրագրերի միջոցով, կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպի, կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ:

4. Անհրաժեշտ փոփոխություններ կատարել նաև օրենսդրական կարգավորումներում առկա ձևակերպումներում և զինվորական կոչումներ զբաղեցնող զինծառայողների թվում չտարանջատել կանանց՝ *«կին զինծառայող»* ձևակերպմամբ:

5. Չնավորել զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների, արժանապատվության պաշտպանությունն ապահովող իրավական երաշխիքներ, թե զինված ուժերում նրանց ներգրավման, թե զինվորական ծառայության ընթացքում: Այս տեսակետից

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

կարևոր նշանակություն ունի զինված ուժերում բարեվարքության կանոնների ներդրումը, որոնց բացակայությունը՝ բացասաբար ազդելով տղամարդ զինծառայողների զինվորական ծառայության, զինվորական պարտավորությունների կատարման վրա, էլ ավելի բացասական ազդեցություն է ունենում կին զինծառայողների իրավունքների երաշխավորման և ծառայողական պարտականությունների կատարման վրա: Մասնավորապես, բարեվարքության կանոնների խիստ պահպանումը կարևոր նշանակություն ունի ենթակա-հրամանատար հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրները, կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները, հովանավորչությունը բացառելու հարցում:

6. Ստեղծել խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ՝ միաժամանակ խրախուսելով զինծառայողներին գործնականում կիրառել նման մեխանիզմները՝ իրավահավասարության խթանման նպատակով: Մասնավորապես, զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակմանը զուգտնթաց երաշխավորել զինծառայողների իրազեկման բարձր մակարդակը՝ այն արդյունավետ կերպով կիրառելու համար:

7. Խթանելով կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանը հնարավորությունները՝ նպաստել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

8. Երաշխավորել անկախ սեռից բոլոր զինծառայողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար՝ անկախ սեռային պատկանելությունից:

9. Օրենքով սահմանել երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի առնելու դրույթը, որը կխթանի կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանն ու ներկայացվածությանը բարձր պաշտոններում:

10. Բացառել գործնականում առկա այն դեպքերը, երբ հղիության և ծննդաբերության

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

արձակուրդ մեկնած կին զինծառայողներին հրամանատարները համոզում են չվերադառնալու ծառայության:

11. Բոլոր զինծառայողների համար ապահովել արժանապատիվ ծառայության նվազագույն պայմաններով՝ թե շենքային, թե կենցաղ-սպասարկման, թե հիգիենայի պահպանման:

12. Ձանքեր գործադրել բոլոր զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստի տրամադրման ուղղությամբ:

13. Հաշվի առնելով ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված ՀՀ ԳԱԾ-ի մասին զինծառայողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը՝ երաշխավորել իրազեկման դասընթացներին, միջոցառումներին, քննարկումներին բոլոր զինծառայողների պարբերական մասնակցությունը:

14. Զինված ուժերում իրականացնել մարդու իրավունքների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, հակախտրականության, կանանց նկատմամբ բռնության արգելքի մասին թեմաներով ուսուցում, որի շնորհիվ վերջիններս կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները զինվորական ծառայության հետ կապված տարբեր ոլորտներում:

15. ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում և այլ առցանց հարթակներում ապահովել զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նութերի (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ, մամուլի հաղորդագրություններ) տեսանելիությունը, ինչը կնպաստի զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը թե կին, թե տղամարդ զինծառայողների շրջանում:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«27» 03 2024թ.
ՊՆ/5100-ՊՊ/3231

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր՝ 19.03.2024թ. թիվ Ե/2024-19.03/402 գրության՝ տեղեկացնում ենք, որ «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցը և Զեկույցում ներկայացված առաջարկությունները Պաշտպանության նախարարությունում ուսումնասիրվել են:

Կից տրամադրում ենք առաջարկությունների վերաբերյալ մեր դիտարկումները:

1. **Մշակել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագրեր, զինվորական ծառայության կազմակերպումն ապահովող օրենսդրական կարգավորումները մշակելիս ապահովել ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքներում, ինչպես նաև օրենսդրական փոփոխության նախագիծը ներկայացնել հանրային քննարկման:**

   Ընդունվել է ի գիտություն:

2. **Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողների մեծամասնությունը զինվորական ծառայության է անցնում ֆինանսական խնդիրների լուծման նպատակով Կառավարությունը անհրաժեշտ ջանքեր պետք է գործադրի զինվորական ծառայության անցնելու այլ շարժառիթների խթանման ուղղությամբ, մասնավորապես՝ զինվորական մասնագիտության գրավչությունը և հանրության շրջանում զինվորական ծառայության նկատմամբ հարգանքը բարձրացնելու ուղղությամբ:**

   Ընդունվել է ի գիտություն:

3. **Զինվորական ծառայության կազմակերպման վերաբերյալ կարգավորումներում պետք է կատարել անհրաժեշտ փոփոխություններ բացառելու համար խտրականության դրսևորումների հավանականությունն օրենսդրության մակարդակում (կանանց տրամադրվող զինատեսակների սահմանափակման հարցում, վերակարգի նշանակման գործընթացքում, տույժերի կիրառման տարբերակված մոտեցման հարցում): Գործադրել անհրաժեշտ ջանքեր՝**

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

կրթական, պարբերական վերապատրաստման ծրագրերի միջոցով, կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպի, կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ:

ՀՈՒ կարգապահական կանոնագրքում առկա է կին զինծառայողների վերաբերյալ երեք տեսակի տույժի տարբերակում, որոնցից երկուսը պայմանագրային կին զինծառայողների նկատմամբ չեն կիրառվում, քանի որ դրանք բովանդակային առումով տարածվում են միայն պարտադիր ժամկետային զինծառայողների վրա, իսկ «կարգապահական վաշտ ուղարկելը» տույժը կին զինծառայողների նկատմամբ չի կիրառվում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ (ընտանիք ունենալը, կարգապահական վաշտերում անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը և այլն):

Ինչ վերաբերում է կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպին և կարծրատիպերին՝ ՊՆ ներկայացուցիչները հանրության շրջանում (այդ թվում ավագ դպրոցների, քոլեջների սովորողների հետ) հանդիպումների ընթացքում ներկայացնում են ՀՈՒ-ում կանանց լիարժեք և բովանդակային ներգավվման անհրաժեշտության, ծառայության ընթացքում նրանց ձեռքբերումների, ինչպես նաև Կանայք, Խաղաղություն, Անվտանգություն օրակարգի կարևորության մասին:

4. **Անհրաժեշտ փոփոխություններ կատարել նաև օրենսդրական կարգավորումներում առկա ձևակերպումներում և զինվորական կոչումներ զբաղեցնող զինծառայողների թվում չտարանջատել կանանց՝ «կին զինծառայող» ձևակերպմամբ:**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերի ու 53-րդ հոդվածի համատեքստում նշված առաջարկը լրացուցիչ քննարկման կարիք ունի, քանի որ հղիության և ծննդաբերության արձակուրդ կարող է տրվել միայն կին զինծառայողներին, իսկ երեխայի խնամքի արձակուրդ՝ նաև արական սեռի քաղաքացիներին՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները: Ինչ վերաբերում է զինվորական կոչումներին, ապա դրա հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքի դրույթներում «կին զինծառայող» տարանջատում առկա չէ:

5. **Ձևավորել զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների, արժանապատվության պաշտպանությունն ապահովող իրավական երաշխիքներ, թե զինված ուժերում նրանց ներգրավման, թե զինվորական ծառայության ընթացքում: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի զինված ուժերում բարեվարքության կանոնների ներդրումը, որոնց բացակայությունը՝ բացասաբար ազդելով տղամարդ զինծառայողների զինվորական ծառայության, զինվորական պարտավորությունների կատարման վրա, էլ ավելի բացասական ազդեցություն է ունենում կին զինծառայողների իրավունքների երաշխավորման և ծառայողական պարտականությունների կատարման վրա: Մասնավորապես, բարեվարքության կանոնների խիստ**

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

պահպանումը կարևոր նշանակություն ունի ենթակա-հրամանատար հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրները, կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները, հովանավորչությունը բացառելու հարցում:

Մշակվել է «ՊՆ համակարգի պայմանագրային զինծառայողների վարքագծի կանոնների նախագիծը», որը ներկայացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարծիքին և այժմ գտնվում է միջազգային փորձաքննության փուլում:

6. **Ստեղծել խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ՝ միաժամանակ խրախուսելով զինծառայողներին գործնականում կիրառել նման մեխանիզմները՝ իրավահավասարության խթանման նպատակով: Մասնավորապես, զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակմանը զուգընթաց երաշխավորել զինծառայողների իրազեկման բարձր մակարդակը՝ այն արդյունավետ կերպով կիրառելու համար:**

   Ընդունվել է ի գիտություն:

7. **Խթանելով կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանը հնարավորությունները՝ նպաստել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:**

   Ընդունվել է ի գիտություն:

8. **Երաշխավորել անկախ սեռից բոլոր զինծառայողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար՝ անկախ սեռային պատկանելությունից:**

   Ընդունվել է ի գիտություն:

9. **Օրենքով սահմանել երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի առնելու դրույթը, որը կխթանի կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանն ու ներկայացվածությանը բարձր պաշտոններում:**

   «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով սպառիչ թվարկված են այն ժամանակահատվածները, որոնք չեն հաշվարկվում զինծառայողի՝ հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետների մեջ:

   Երեխայի խնամքի արձակուրդում գտնվող կին զինծառայողին զբաղեցրած հաստիքով նախատեսված հերթական զինվորական կոչում շնորհելու արգելք կամ կոչման կրման ժամկետի կասեցում օրենքով սահմանված չէ:

10. **Բացառել գործնականում առկա այն դեպքերը, երբ հղիության և ծննդաբերության արձակուրդ մեկնած կին զինծառայողներին հրամանատարները համոզում են չվերադառնալու ծառայության:**

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

Նման բովանդակության բողոքներ Պաշտպանության նախարարությունը չի ստացել:

11. **Բոլոր զինծառայողների համար ապահովել արժանապատիվ ծառայության նվազագույն պայմաններով՝ թե շենքային, թե կենցաղ-սպասարկման, թե հիգիենայի պահպանման:**
Ընդունվել է ի գիտություն
12. **Քանքեր գործադրել բոլոր զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստի տրամադրման ուղղությամբ:**
Ընդունվել է ի գիտություն:
13. **Հաշվի առնելով ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված ՀՀ ԳԱԾ-ի մասին զինծառայողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը՝ երաշխավորել իրազեկման դասընթացներին, միջոցառումներին, քննարկումներին բոլոր զինծառայողների պարբերական մասնակցությունը:**
ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված գործողությունների և առաջին և երկրորդ ազգային ծրագրի շրջանակներում տեղական (Դեմոկրատիան այսօր ՀԿ) և միջազգային գործընկերների (Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոն (DCAF)) հետ համատեղ, պարբերաբար իրականացվում են ՀՈՒ անձնակազմի իրազեկում՝ 1325 բանաձևի դրույթների վերաբերյալ:
14. **Զինված ուժերում իրականացնել մարդու իրավունքների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, հակախտրականության, կանանց նկատմամբ բռնության արգելքի մասին թեմաներով ուսուցում, որի շնորհիվ վերջիններս կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները զինվորական ծառայության հետ կապված տարբեր ոլորտներում:**
2020-2022թթ. ՄԻՊ ռազմավարության շրջանակներում ՀՈՒ անձնակազմի համար պարբերաբար իրականացվել են մարդու իրավունքների՝ մասնավորապես կյանքի իրավունքի, խտրականության արգելքի թեմաներով վերապատրաստման դասընթացներ, որոնք շարունակական բնույթ են կրում:
15. **ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում և այլ առցանց հարթակներում ապահովել զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նյութերի (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ, մամուլի հաղորդագրություններ) տեսանելիությունը, ինչը կնպաստի զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը թե կին, թե տղամարդ զինծառայողների շրջանում:**
Զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նյութեր, տեսահոլովակներ հրապարակվում են Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում, իսկ նրանց ծառայության վերաբերյալ հաղորդումները՝ «Զինուժ» հեռուստածրագրի շրջանակներում:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

Հարգանքով՝ Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Digitally signed by
HAMLET BATIKYAN 1905880359
Date: 2024.03.26 18:02:54

Կատարող՝ Ս. Սողոմոնյան
Հեռ. 010 66 00 49

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«13» 09 2024թ.
N 98/510-ֆ/10133

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր՝ 29-07-2024թ. թիվ Ե/2024-29.07/927 գրության՝ տեղեկացնում եմ հետևյալը.

1. ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների զինվորական պատրաստությունն իրականացվում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված ծրագրի համաձայն:

2. 2023թ. ընթացքում կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանվել է կամավոր հիմունքներով իգական սեռի 18-27 տարեկան անձանց համար 6 ամիս ժամկետով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու իրավունք: Բացի այդ, ներկայումս մշակման փուլում է գտնվում կանանց գումարտակում պայմանագրային զինվորական ծառայություն անցնող իգական սեռի զինծառայողների համար ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն որոշման մեջ հավելում սահմանելու մասին որոշման նախագիծը, որի վերջնական տեքստը դրվելու է շրջանառության և հանրային քննարկման:

3. SS հավելվածի մշակման վերաբերյալ հատնում եմ, որ այն ընթացքի մեջ է և մոտ ապագայում սպասվում է մրցույթի հայտարարում և գնումների իրականացում:

4. Կին զինծառայողների ռազմական կրթության և մասնագիտական կարողությունների զարգացման, վերապատրաստումների մասով առանձին իրավական ակտեր չեն ընդունվել, քանի որ ՀՀ զինված ուժերի զինծառայողների համար՝ անկախ սեռային պատկանելությունից, ապահովվում են հավասար հնարավորություններ ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման և վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար:

5. 2024 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ ԶՈՒ զինծառայողների 5% ներգրավվել է ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված մասնագիտական

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

կարողությունների զարգացմանն ու ռազմական կրթությանն ուղղված վերապատրաստումներին, որից 25% կին զինծառայողներ են:

6. Բոլոր պարտադիր ժամկետային զինծառայողների համար՝ անկախ սեռային պատկանելությունից ՀՀ ՊՆ թիկունքային ապահովման վարչության կողմից ձեռք է բերվում և հատկացվում միայն օճառ, օճառաման, սափրվելու ածելի, սափրվելու փրփուր, ատամի խոզանակ, ատամի մածուկ, սանր, զուգարանի թուղթ և եղունգ կտրիչ հիգիենայի պարագաները, որի մասին սահմանված կարգով բազմիցս տեղեկացվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին, իսկ նոր և որակյալ համազգեստների ձեռքբերման գործընթացի շրջանակներում ուսումնասիրվել են և դեռևս շարունակվում են ուսումնասիրվել տարբեր ՆԱՏՕ անդամ երկրների համազգեստներն ու հանդերձանքի պարագաները:

9/13/2024

X

ՏԻԳՐԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: GHARIBYAN TIGRAN 3703820292

/Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Կատ.՝ Է. Մանուկյան
Հեռ.՝ 010660049
Էլ. փոստ՝ erik.manukyan@mil.am

Հավելված 4.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2023-11.12/822
11.12.2023 թ

ՀՀ պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

2023 թվականի հունիսի 26-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում կատարվեցին լրացումներ և փոփոխություններ, մասնավորապես՝ ավելացվեց 19.1 հոդվածը, որով սահմանվեցին **կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած իգական սեռի քաղաքացիների զորակոչի կազմակերպման հիմքը և կարգը:**

Նշված փոփոխություններով ներդրվեց «կանանց գումարտակ» հասկացությունը, որտեղ իգական սեռի քաղաքացիները կարող են կամավոր հիմունքներով անցնել 6-ամսյա ծառայություն: 6-ամսյա ծառայությունը հաջողությամբ ավարտած անձինք ստանում են «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շրջանակներում ծառայությունը շարունակելու հնարավարություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ այն մասին, թե.

1. ինչով է պայմանավորված կանանց համար կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայության ժամկետը 6 ամիս տևողությամբ սահմանելը,
2. ինչ հանգամանքների կամ հետազոտությունների արդյունքում է նման ժամկետ ընտրվել,
3. արդյոք 6-ամսյա ժամկետի սահմանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նորակոչիկներին զինվորական ուսումն այլ զորամասերում կազմակերպվում է 6 ամիսների ընթացքում,

3.1 եթե այո, ապա արդյոք ուսումնական բոլոր բաղադրիչները (նպատակները, խնդիրները, թեմաները, մեթոդաբանությունը, գնահատման եղանակները) հավասարապես ու նույնանման կերպ են սահմանված,

4. արդյոք կանանց նորաստեղծ զումարտակի ուսման ծրագրում և ուսումնական մյուս ծրագրերում կան էական տարբերություններ,
   4.1 եթե այո, որոնք են այդ տարբերությունները և ինչով են պայմանավորված դրանք,
5. արդյոք կանանց ուսումնական ծրագրում մյուս ծրագրերի համեմատ կան ավելացված կամ պակասեցված բաղադրիչներ՝ պայմանավորված
   5.1 կանանց ֆիզիոլոգիական հատկանիշներով,
   5.2 կանանց՝ հասարակությունում նրանց դերի մասին հասարակական պատկերացումներով,
   5.3 այլ օրենքներից բխող սահմանափակումներով,
6. արդյք նախատեսվում են ինչպես ներքին ծառայության կանոնագրքի, այնպես էլ մյուս կանոնագրքերի լրամշակման աշխատանքներ, որպեսզի դրանք համապատասխանեցվեն կանանց համար կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայության վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
Էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«25» 12 2023թ.
Դ24510-ք/18754

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված Ձեր՝ Ե/2023-11.12/822 գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ ԶՈՒ տարբեր ստորաբաժանումները, կախված իրենց կիրառման խնդիրներից և կիրառման որոշումների առանձնահատկություններից, պատրաստությունն իրականացնում են տարբեր ուսումնական ծրագրերով:

6 ամիս պատրաստությունը ենթադրում է, որ նշված ժամանակահատվածում զինծառայողը պետք է տիրապետի ժամանակակից համազորային մարտի առանձնահատկություններին, իր պաշտոնամասնագիտական պարտականություններին, ինքնուրույն մարտի նախապատրաստվելու և մարտ վարելու կարգին, տեղանքի, եղանակի և օրվա տարբեր պայմաններում, հակառակորդի օդային հարձակման միջոցներից պաշտպանվելուն և քողարկմանը, հաստիքային զենքի նյութական մասին, հրաձգության կանոններին, կրակ վարելու ձևերին ու եղանակներին, համազորային կանոնադրությունների հիմնական դրույթներին, մարտական հերթապահության խնդիրներին և դրա իրականացման պարտականություններին, մարտական պատրաստության պարապմունքների և առօրյա կյանքում անվտանգության կանոններին, որից հետո կին զինծառայողների մոտ կձևավորվի հստակ պատկերացում ՀՀ ԶՈՒ-ում հետագա ծառայությունը շարունակելու կամ ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակվելու վերաբերյալ:

Կին զինծառայողների համար 6 ամսյա պատրաստության ծրագիր, որպես այդպիսին, չկա, նրանց պատրաստության գործընթացում առաջնորդվում են «Մոտոհրաձգային, հրաձգային (լեռնային) և տանկային զորամասերի (ստորաբաժանումների)» մարտական պատրաստության ծրագրով, որը նախատեսված է մեկ ուսումնական տարվա համար: Ծառայության ընդգրկված կին զինծառայողների պատրաստությունն իրականացվում է երկու փուլով՝

- 1-ին փուլով կին զինծառայողների հետ 25 օր անցկացվում են նորակոչիկների նախնական զինվորական պատրաստության պարապմունքներ, որից հետո զինծառայողներն ընդունում են զինվորական երդում,

- 2-րդ փուլով, հաշվի առնելով զինծառայողների մտավոր, ֆիզիկական պատրաստության որակները և առողջական սահմանափակումները, կատարվում է մասնագետների

ընտրություն, զինծառայողները նշանակվում են համապատասխան հաստիքների, որից հետո, համաձայն պատրաստության ծրագրի, իրականացվում են պարապմունքներ:

Կանանց գումարտակի պատրաստության ծրագրում մյուս ծրագրերի համեմատ էական տարբերություններ չկան (բացառությամբ դասամիջոցների ժամերի՝ ավելացված է 5 րոպեով, 10-ի փոխարեն՝ 15 րոպե):

Կանանց ուսումնական ծրագրում մյուս ծրագրերի համեմատ ավելացված կամ պակասեցված բաղադրիչներ չկան: Հաշվի առնելով կանանց ֆիզիոլոգիական հատկանիշները՝ ՀՀ ԶՈՒ կին զինծառայողների համար, համաձայն «Ֆիզիկական պատրաստության հրահանգի», նախատեսված են համապատասխան չափորոշիչներ:

Այո, արդեն իսկ մշակվել և քննարկման փուլում է գտնվում «ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագիրք» և «ՀՀ ԶՈՒ կայազորային ու պահակային ծառայության կանոնագիրք» ՀՀ օրենքներում լրացումների և փոփոխությունների փաթեթը, որպեսզի դրանք համապատասխանեցվեն կանանց համար կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայությանը:

Հարգանքով՝ **Հ. ԲԱՏԻԿՅԱՆ**

Digitally signed by
HAMLET BATIKYAN 1905880359
Date: 2023.12.25 12:34:23

Կատ.՝ Ն. Բաղդանյան
Հեռ.՝ 010 29-44-07

Հավելված 5.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի
պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of
Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2024-29.07/927
29.07.2024 թ.

ՀՀ պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանին

Հարգելի պարոն նախարար,

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի թիվ 1325 բանաձեւի կիրակմանն ուղղված 2022-2024 թվականների գործողությունների Ազգային երկրորդ ծրագրի ուղղությամբ իրականացված աշխատանքների զարգացումները, զինված ուժերում ներգրավված կին զինծառայողների իրավունքների պաշտպանության վիճակը դիտարկելու նպատակով 2023 թ. սեպտեմբեր - 2024 թ. մարտ ժամանակահատվածում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը նախաձեռնել եւ իրականացրել է հետազոտություն, որի արդյունքում կազմվել է «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցը:

Հետազոտության արդյունքում Կազմակերպությունը վերհանել է կանանց զինվորական ծառայության ներգրավման հետ կապված խնդիրները, որոնց լուծման ուղղությամբ ձևակերպված առաջարկությունները Ե/2024-19.03/402 գրությամբ ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ քննության առնելու և արձանագրված խնդիրների լուծման ուղղությամ քայլեր ձեռնարկելու առաջարկով: 2024 թվականի մարտի 27-ին ՊՆ/510-ԳՔ/3231 պատասխան գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ Կազմակերպության կողմից ներկայացված մի շարք առաջարկություններն ընդունվել են ի գիտություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ այն մասին, թե առաջարկությունների ներկայացման պահից՝ 2024 թ մարտից մինչ օրս՝

1. արդյո՞ք մշակվել է կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագիր, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 1)
   1.1 եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության զինվորական պատրաստության ծրագրի ուսումնական պլանը, դրա հաստատման և կիրարկման վերաբերյալ իրավական ակտի պատճենը,
2. արդյո՞ք իրականացվել են օրենսդրական փոփոխություններ կանանց զինվորական ծառայության կազմակերպումը սահմանող օրենսդրության մեջ, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 1)
   2.1 եթե այո, ապա ո՞ր իրավական ակտերում և ի՞նչ փոփոխություններ են կատարվել,
   2.2 եթե դեռևս չեն կատարվել, ապա խնդրում եմ տրամադրել փոփոխությունների վերաբերյալ իրավական ակտերի նախագիծը կամ նախագծերը,
   2.3 արդյո՞ք օրենսդրական փոփոխությունները մշակելիս ապահովվել է ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը,
   2.4 ովքեր/ ինչպիսի պաշտոններ զբաղեցնող կանայք են մասնակցել օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակմանը,
3. ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել ֆինանսական ապահովությունից բացի այլ շարժառիթների գործարկման ուղղությամբ՝ կանանց զինվորական ծառայության անցնելու խթանման համար, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 2),
   3.1 եթե դեռևս չեն ընդունվել, ապա խնդրում եմ տրամադրել կանանց զինվորական ծառայության ներգրավելու արդյունավետ մեխանիզմների վերաբերյալ իրավական ակտի նախագիծը,
4. ի՞նչ փուլում է գտնվում զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակման գործընթացը, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 6),

4.1 եթե հավելվածի մշակումն ավարտվել է, ապա գործարկման ինչ փուլում է գտնվում այն, և երբ է նախատեսվում դրա վերջնական գործարկումը,

5. բացի վերոգրյալ հավելվածի մշակումից ի՞նչ այլ իրավական ակտեր են ընդունվել զինծառայողների կողմից իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ անանուն հաղորդման մեխանիզմների ներդրման նպատակով,

5.1 եթե դեռևս չեն մշակվել նման մեխանիզմները, ապա ե՞րբ է նախատեսվում դրանց մշակումը և կիրառումը, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 6),

6. ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացման վերաբերյալ, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 7)

6.1 եթե դեռևս չեն ընդունվել, ապա երբ են նախատեսվում դրանց ընդունումը և կիրառումը,

6.2 եթե կան, ապա խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի նախագիծը,

7. ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել կին զինծառայողների ռազմական կրթության և մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցության վերաբերյալ, (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 8),

7.1 եթե դեռևս չեն ընդունվել, ապա երբ է նախատեսվում դրանց կիրառումը, և խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի նախագիծը,

8. 2024 թվականի ընթացքում քանի՞ կին և քանի՞ տղամարդ զինծառայող է մասնակցել մասնագիտական կարողությունների զարգացմանն ու ռազմական կրթությանն ուղղված վերապատրաստումներին,

9. կին զինծառայողների զինվորական ծառայության շենքային, կենցաղ-սպասարկման պայմանների բարելավման ու հիգիենայի պահպանման ուղղությամբ, ի՞նչ իրավական ակտեր են ընդունվել, խնդրում եմ տրամադրել դրանց պատճենները(ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 11)

9.1 եթե դեռևս չեն ընդունվել, ապա խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի նախագիծը,

10. զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստով ապահովելու նպատակով նոր չափորոշիչները հաստատվել են, թե ոչ,
    10.1 եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի պատճենը,
    10.2 եթե ոչ, ապա ապա խնդրում եմ տրամադրել դրա վերաբերյալ իրավական ակտի նախագիծը և երբ է նախատեսվում դրանց հաստատումը և կիրառումը (ՊՆ/510-ԳՔ/3231 գրություն, կետ 12):

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կից ներկայացվում է՝

1. Կազմակերպության Ե/2024-19.03/402 գրության պատճենը,
2. ՀՀ ՊՆ 2024 թվականի մարտի 27-ի ՊՆ/510-ԳՔ/3231 պատասխան գրության պատճենը:

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
Էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մշակել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագրեր, զինվորական ծառայության կազմակերպումն ապահովող օրենսդրական կարգավորումները մշակելիս ապահովել ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքներում, ինչպես նաև օրենսդրական փոփոխության նախագիծը ներկայացնել հանրային քննարկման:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողների մեծամասնությունը զինվորական ծառայության է անցնում ֆինանսական խնդիրների լուծման նպատակով Կառավարությունը անհրաժեշտ ջանքեր պետք է գործադրի զինվորական ծառայության անցնելու այլ շարժառիթների խթանման ուղղությամբ, մասնավորապես՝ զինվորական մասնագիտության գրավչությունը և հանրության շրջանում զինվորական ծառայության նկատմամբ հարգանքը բարձրացնելու ուղղությամբ:

3. Զինվորական ծառայության կազմակերպման վերաբերյալ կարգավորումներում պետք է կատարել անհրաժեշտ փոփոխություններ բացառելու համար խտրականության դրսևորումների հավանականությունն օրենսդրության մակարդակում (կանանց տրամադրվող զինատեսակների սահմանափակման հարցում, վերակարգի նշանակման գործընթացքում, տույժերի կիրառման տարբերակված մոտեցման հարցում): Գործադրել անհրաժեշտ ջանքեր՝ կրթական, պարբերական վերապատրաստման ծրագրերի միջոցով, կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպի, կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ:

4. Անհրաժեշտ փոփոխություններ կատարել նաև օրենսդրական կարգավորումներում առկա ձևակերպումներում և զինվորական կոչումներ զբաղեցնող զինծառայողների թվում չտարանջատել կանանց՝ *«կին զինծառայող»* ձևակերպմամբ:

5. Չնավորել զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների, արժանապատվության պաշտպանությունն ապահովող իրավական երաշխիքներ, թե զինված ուժերում նրանց ներգրավման, թե զինվորական ծառայության ընթացքում: Այս տեսակետից

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

կարևոր նշանակություն ունի զինված ուժերում բարեվարքության կանոնների ներդրումը, որոնց բացակայությունը՝ բացասաբար ազդելով տղամարդ զինծառայողների զինվորական ծառայության, զինվորական պարտավորությունների կատարման վրա, էլ ավելի բացասական ազդեցություն է ունենում կին զինծառայողների իրավունքների երաշխավորման և ծառայողական պարտականությունների կատարման վրա: Մասնավորապես, բարեվարքության կանոնների խիստ պահպանումը կարևոր նշանակություն ունի ենթակա-հրամանատար հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրները, կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները, հովանավորչությունը բացառելու հարցում:

6. Ստեղծել խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ՝ միաժամանակ խրախուսելով զինծառայողներին գործնականում կիրառել նման մեխանիզմները՝ իրավահավասարության խթանման նպատակով: Մասնավորապես, զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակմանը զուգտնթաց երաշխավորել զինծառայողների իրազեկման բարձր մակարդակը՝ այն արդյունավետ կերպով կիրառելու համար:

7. Խթանելով կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանը հնարավորությունները՝ նպաստել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

8. Երաշխավորել անկախ սեռից բոլոր զինծառայողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար՝ անկախ սեռային պատկանելությունից:

9. Օրենքով սահմանել երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի առնելու դրույթը, որը կխթանի կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանն ու ներկայացվածությանը բարձր պաշտոններում:

10. Բացառել գործնականում առկա այն դեպքերը, երբ հղիության և ծննդաբերության

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

արձակուրդ մեկնած կին զինծառայողներին հրամանատարները համոզում են չվերադառնալու ծառայության:

11. Բոլոր զինծառայողների համար ապահովել արժանապատիվ ծառայության նվազագույն պայմաններով՝ թե շենքային, թե կենցաղ-սպասարկման, թե հիգիենայի պահպանման:

12. Ձանքեր գործադրել բոլոր զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստի տրամադրման ուղղությամբ:

13. Հաշվի առնելով ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված ՀՀ ԳԱԾ-ի մասին զինծառայողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը՝ երաշխավորել իրազեկման դասընթացներին, միջոցառումներին, քննարկումներին բոլոր զինծառայողների պարբերական մասնակցությունը:

14. Զինված ուժերում իրականացնել մարդու իրավունքների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, հակախտրականության, կանանց նկատմամբ բռնության արգելքի մասին թեմաներով ուսուցում, որի շնորհիվ վերջիններս կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները զինվորական ծառայության հետ կապված տարբեր ոլորտներում:

15. ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում և այլ առցանց հարթակներում ապահովել զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նութերի (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ, մամուլի հաղորդագրություններ) տեսանելիությունը, ինչը կնպաստի զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը թե կին, թե տղամարդ զինծառայողների շրջանում:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«27» 03 2024թ.
ՊՆ/510-ՊՊ/3231

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր՝ 19.03.2024թ. թիվ Ե/2024-19.03/402 գրության՝ տեղեկացնում ենք, որ «Կանանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ զինված ուժերում» զեկույցը և Զեկույցում ներկայացված առաջարկությունները Պաշտպանության նախարարությունում ուսումնասիրվել են:

Կից տրամադրում ենք առաջարկությունների վերաբերյալ մեր դիտարկումները:

1. **Մշակել կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագրեր, զինվորական ծառայության կազմակերպումն ապահովող օրենսդրական կարգավորումները մշակելիս ապահովել ոլորտի մասնագետ կանանց անմիջական մասնակցությունը օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման աշխատանքներում, ինչպես նաև օրենսդրական փոփոխության նախագիծը ներկայացնել հանրային քննարկման:**

   Ընդունվել է ի գիտություն:

2. **Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողների մեծամասնությունը զինվորական ծառայության է անցնում ֆինանսական խնդիրների լուծման նպատակով Կառավարությունը անհրաժեշտ ջանքեր պետք է գործադրի զինվորական ծառայության անցնելու այլ շարժառիթների խթանման ուղղությամբ, մասնավորապես՝ զինվորական մասնագիտության գրավչությունը և հանրության շրջանում զինվորական ծառայության նկատմամբ հարգանքը բարձրացնելու ուղղությամբ:**

   Ընդունվել է ի գիտություն:

3. **Զինվորական ծառայության կազմակերպման վերաբերյալ կարգավորումներում պետք է կատարել անհրաժեշտ փոփոխություններ բացառելու համար խտրականության դրսևորումների հավանականությունն օրենսդրության մակարդակում (կանանց տրամադրվող զինատեսակների սահմանափակման հարցում, վերակարգի նշանակման գործընթացքում, տույժերի կիրառման տարբերակված մոտեցման հարցում): Գործադրել անհրաժեշտ ջանքեր՝**

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

կրթական, պարբերական վերապատրաստման ծրագրերի միջոցով, կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպի, կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ:

ՀՈՒ կարգապահական կանոնագրքում առկա է կին զինծառայողների վերաբերյալ երեք տեսակի տույժի տարբերակում, որոնցից երկուսը պայմանագրային կին զինծառայողների նկատմամբ չեն կիրառվում, քանի որ դրանք բովանդակային առումով տարածվում են միայն պարտադիր ժամկետային զինծառայողների վրա, իսկ «կարգապահական վաշտ ուղարկելը» տույժը կին զինծառայողների նկատմամբ չի կիրառվում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ (ընտանիք ունենալը, կարգապահական վաշտերում անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը և այլն):

Ինչ վերաբերում է կին զինծառայողների նկատմամբ առկա ակնհայտ խտրական մտածելակերպին և կարծրատիպերին՝ ՊՆ ներկայացուցիչները հանրության շրջանում (այդ թվում ավագ դպրոցների, քոլեջների սովորողների հետ) հանդիպումների ընթացքում ներկայացնում են ՀՈՒ-ում կանանց լիարժեք և բովանդակային ներգավվման անհրաժեշտության, ծառայության ընթացքում նրանց ձեռքբերումների, ինչպես նաև Կանայք, Խաղաղություն, Անվտանգություն օրակարգի կարևորության մասին:

4. **Անհրաժեշտ փոփոխություններ կատարել նաև օրենսդրական կարգավորումներում առկա ձևակերպումներում և զինվորական կոչումներ զբաղեցնող զինծառայողների թվում չտարանջատել կանանց՝ «կին զինծառայող» ձևակերպմամբ:**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերի ու 53-րդ հոդվածի համատեքստում նշված առաջարկը լրացուցիչ քննարկման կարիք ունի, քանի որ հղիության և ծննդաբերության արձակուրդ կարող է տրվել միայն կին զինծառայողներին, իսկ երեխայի խնամքի արձակուրդ՝ նաև արական սեռի քաղաքացիներին՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները: Ինչ վերաբերում է զինվորական կոչումներին, ապա դրա հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքի դրույթներում «կին զինծառայող» տարանջատում առկա չէ:

5. **Ձևավորել զինված ուժերում կին զինծառայողների իրավունքների, արժանապատվության պաշտպանությունն ապահովող իրավական երաշխիքներ, թե զինված ուժերում նրանց ներգրավման, թե զինվորական ծառայության ընթացքում: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի զինված ուժերում բարեվարքության կանոնների ներդրումը, որոնց բացակայությունը՝ բացասաբար ազդելով տղամարդ զինծառայողների զինվորական ծառայության, զինվորական պարտավորությունների կատարման վրա, էլ ավելի բացասական ազդեցություն է ունենում կին զինծառայողների իրավունքների երաշխավորման և ծառայողական պարտականությունների կատարման վրա: Մասնավորապես, բարեվարքության կանոնների խիստ**

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

պահպանումը կարևոր նշանակություն ունի ենթակա-հրամանատար հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրները, կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները, հովանավորչությունը բացառելու հարցում:

Մշակվել է «ՊՆ համակարգի պայմանագրային զինծառայողների վարքագծի կանոնների նախագիծը», որը ներկայացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարծիքին և այժմ գտնվում է միջազգային փորձաքննության փուլում:

6. **Ստեղծել խտրականության դրսևորումների դեպքերով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ՝ միաժամանակ խրախուսելով զինծառայողներին գործնականում կիրառել նման մեխանիզմները՝ իրավահավասարության խթանման նպատակով: Մասնավորապես, զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն դեպքերում անանուն հաղորդման SS հավելվածի մշակմանը զուգահեռաբար երաշխավորել զինծառայողների իրազեկման բարձր մակարդակը՝ այն արդյունավետ կերպով կիրառելու համար:**

   Ընդունվել է ի գիտություն:

7. **Խթանելով կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանը հնարավորությունները՝ նպաստել համակարգային և ռազմավարական ոլորտներում որոշումների կայացման գործընթացում կին զինծառայողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:**

   Ընդունվել է ի գիտություն:

8. **Երաշխավորել անկախ սեռից բոլոր զինծառայողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար՝ անկախ սեռային պատկանելությունից:**

   Ընդունվել է ի գիտություն:

9. **Օրենքով սահմանել երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի առնելու դրույթը, որը կխթանի կին զինծառայողների ծառայողական առաջխաղացմանն ու ներկայացվածությանը բարձր պաշտոններում:**

   «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով սպառիչ թվարկված են այն ժամանակահատվածները, որոնք չեն հաշվարկվում զինծառայողի՝ հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետների մեջ:

   Երեխայի խնամքի արձակուրդում գտնվող կին զինծառայողին զբաղեցրած հաստիքով նախատեսված հերթական զինվորական կոչում շնորհելու արգելք կամ կոչման կրման ժամկետի կասեցում օրենքով սահմանված չէ:

10. **Բացառել գործնականում առկա այն դեպքերը, երբ հղիության և ծննդաբերության արձակուրդ մեկնած կին զինծառայողներին հրամանատարները համոզում են չվերադառնալու ծառայության:**

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

Նման բովանդակության բողոքներ Պաշտպանության նախարարությունը չի ստացել:

11. **Բոլոր զինծառայողների համար ապահովել արժանապատիվ ծառայության նվազագույն պայմաններով՝ թե շենքային, թե կենցաղ-սպասարկման, թե հիգիենայի պահպանման:**
Ընդունվել է ի գիտություն
12. **Քանքեր գործադրել բոլոր զինծառայողներին, այդ թվում նաև հղի կին զինծառայողներին հարմարավետ և որակյալ զինվորական համազգեստի տրամադրման ուղղությամբ:**
Ընդունվել է ի գիտություն:
13. **Հաշվի առնելով ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված ՀՀ ԳԱԾ-ի մասին զինծառայողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը՝ երաշխավորել իրազեկման դասընթացներին, միջոցառումներին, քննարկումներին բոլոր զինծառայողների պարբերական մասնակցությունը:**
ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և դրա հիման վրա մշակված գործողությունների և առաջին և երկրորդ ազգային ծրագրի շրջանակներում տեղական (Դեմոկրատիան այսօր ՀԿ) և միջազգային գործընկերների (Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոն (DCAF)) հետ համատեղ, պարբերաբար իրականացվում են ԶՈՒ անձնակազմի իրազեկում՝ 1325 բանաձևի դրույթների վերաբերյալ:
14. **Զինված ուժերում իրականացնել մարդու իրավունքների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, հակախտրականության, կանանց նկատմամբ բռնության արգելքի մասին թեմաներով ուսուցում, որի շնորհիվ վերջիններս կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները զինվորական ծառայության հետ կապված տարբեր ոլորտներում:**
2020-2022թթ. ՄԻՊ ռազմավարության շրջանակներում ԶՈՒ անձնակազմի համար պարբերաբար իրականացվել են մարդու իրավունքների՝ մասնավորապես կյանքի իրավունքի, խտրականության արգելքի թեմաներով վերապատրաստման դասընթացներ, որոնք շարունակական բնույթ են կրում:
15. **ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում և այլ առցանց հարթակներում ապահովել զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նյութերի (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ, մամուլի հաղորդագրություններ) տեսանելիությունը, ինչը կնպաստի զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը թե կին, թե տղամարդ զինծառայողների շրջանում:**
Զինված ուժերում կին զինծառայողների ներգրավվածությունը լուսաբանող նյութեր, տեսահոլովակներ հրապարակվում են Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում, իսկ նրանց ծառայության վերաբերյալ հաղորդումները՝ «Զինուժ» հեռուստածրագրի շրջանակներում:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

Հարգանքով՝ Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Digitally signed by
HAMLET BATIKYAN 1905880359
Date: 2024.03.26 18:02:54

Կատարող՝ Ս. Սողոմոնյան
Հեռ. 010 66 00 49

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«13» 09 2024թ.
N 98/510-ֆ/10133

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր՝ 29-07-2024թ. թիվ Ե/2024-29.07/927 գրության՝ տեղեկացնում եմ հետևյալը.

1. ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների զինվորական պատրաստությունն իրականացվում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված ծրագրի համաձայն:

2. 2023թ. ընթացքում կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանվել է կամավոր հիմունքներով իգական սեռի 18-27 տարեկան անձանց համար 6 ամիս ժամկետով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու իրավունք: Բացի այդ, ներկայումս մշակման փուլում է գտնվում կանանց գումարտակում պայմանագրային զինվորական ծառայություն անցնող իգական սեռի զինծառայողների համար ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն որոշման մեջ հավելում սահմանելու մասին որոշման նախագիծը, որի վերջնական տեքստը դրվելու է շրջանառության և հանրային քննարկման:

3. SS հավելվածի մշակման վերաբերյալ հատնում եմ, որ այն ընթացքի մեջ է և մոտ ապագայում սպասվում է մրցույթի հայտարարում և գնումների իրականացում:

4. Կին զինծառայողների ռազմական կրթության և մասնագիտական կարողությունների զարգացման, վերապատրաստումների մասով առանձին իրավական ակտեր չեն ընդունվել, քանի որ ՀՀ զինված ուժերի զինծառայողների համար՝ անկախ սեռային պատկանելությունից, ապահովվում են հավասար հնարավորություններ ռազմական կրթության, մասնագիտական կարողությունների զարգացման և վերապատրաստումներին մասնակցելու, ծառայողական առաջխաղացման համար:

5. 2024 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ ԶՈՒ զինծառայողների 5% ներգրավվել է ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված մասնագիտական

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 87, ԷԼ.ՓՈՍՏ՝ hamletbatikyan@mil.am

կարողությունների զարգացմանն ու ռազմական կրթությանն ուղղված վերապատրաստումներին, որից 25% կին զինծառայողներ են:

6. Բոլոր պարտադիր ժամկետային զինծառայողների համար՝ անկախ սեռային պատկանելությունից ՀՀ ՊՆ թիկունքային ապահովման վարչության կողմից ձեռք է բերվում և հատկացվում միայն օճառ, օճառաման, սափրվելու ածելի, սափրվելու փրփուր, ատամի խոզանակ, ատամի մածուկ, սանր, զուգարանի թուղթ և եղունգ կտրիչ հիգիենայի պարագաները, որի մասին սահմանված կարգով բազմիցս տեղեկացվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին, իսկ նոր և որակյալ համազգեստների ձեռքբերման գործընթացի շրջանակներում ուսումնասիրվել են և դեռևս շարունակվում են ուսումնասիրվել տարբեր ՆԱՏՕ անդամ երկրների համազգեստներն ու հանդերձանքի պարագաները:

9/13/2024

X

ՏԻԳՐԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: GHARIBYAN TIGRAN 3703820292

/Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

Կատ.՝ Է. Մանուկյան
Հեռ.՝ 010660049
Էլ. փոստ՝ erik.manukyan@mil.am

Հավելված 6.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2024-19.09/1025
19.09.2024 թ.

ՀՀ պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանին

Հարգելի պարոն նախարար,

Կազմակերպության 29.07.2024 թ. Ե/2024-29.07/927 գրությամբ հայցվող այն տեղեկատվությանը, թե «արդյո՞ք մշակվել է կին զինծառայողների 6-ամսյա ծառայության համար անհրաժեշտ զինվորական պատրաստության ծրագիր», ՀՀ ՊՆ 13.09.2024 թ. ՊՆ/510-ԳՔ/10133 գրությամբ տեղեկացվել է, որ «ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների զինվորական պատրաստությունն իրականացվում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված ծրագրի համաձայն»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել

1. ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի կողմից հաստատված ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների պատրաստության ծրագրի պատճենը, որի մասին վկայակոչել եք 13.09.2024 թ. ՊՆ/510-ԳՔ/10133 գրության 1-ին կետով,
2. «Մոտոհրաձգային, հրաձգային (լեռնային) և տանկային զորամասերի (ստորաբաժանումների)» մարտական պատրաստության ծրագրի պատճենը, որի մասին վկայակոչել եք 25.12.2023 թ. ՊՆ/510-ԳՔ/8754 գրությամբ:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«03» 10 2024թ.
N 09/510-gp/10824-2024

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր՝ 19.09.2024թ. Ե/2024-19.09/1025 գրության՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների զինվորական պատրաստությունն իրականացվում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված ծրագրերի համաձայն, որոնք մեծամասամբ պարունակում են ծառայողական օգտագործման տեղեկատվություն, ուստի գաղտնիության հանգամանքով պայմանավորված հնարավոր չէ տրամադրել գրությամբ ակնկալվող ամբողջ տեղեկատվությունը:

Անհրաժեշտության դեպքում՝ ԳՇ պետի ցուցումով նշված պատրաստության ծրագրից կարող է տրամադրվել հոդված կամ թեմա՝ եթե այն չպարունակի գաղտնի տեղեկատվություն:

Digitally signed by
HAMLET BATIKYAN 1905880359
Date: 2024.10.03 10:20:28

Հարգանքով՝ **Հ. ԲԱՏԻԿՅԱՆ**

Կատ.՝ Մ. Հովսեփյան
Հեռ.՝ 010660049
Էլ. փոստ՝ meri.hovsepyan@mil.am

Հավելված 7.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն, Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st. Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2024-04.10/1073
04.10.2024 թ.

ՀՀ պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանին

Հարգելի պարոն նախարար,

2024 թվականի հոկտեմբերի 3-ին ստացել եմ ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարի 03/10/2024 թ. ՊՆ/510-ԳՔ/10824-2024 գրությունը, որով հայտնում են, որ *«ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների զինվորական պատրաստությունն իրականացվում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված ծրագրի համաձայն, որոնք մեծամասամբ պարունակում են ծառայողական օգտագործման տեղեկատվություն, ուստի գաղտնիության հանգամանքով պայմանավորած հնարավոր չէ տրամադրել գրությամբ ակնկալվող ամբողջ տեղեկատվությունը»:*

Գրությամբ հավելվել է նաև, որ ***«Անհրաժեշտության դեպքում՝ ԳՇ պետի ցուցումով նշված պատրաստության ծրագրից կարող է տրամադրվել հոդված կամ թեմա՝ եթե այն չպարունակի գաղտնի տեղեկատվություն»:***

Կազմակերպությունը ներկայումս նպատակ ունի ուսումնասիրել զինված ուժերում կին զինծառայողների պատրաստության համար նախատեսված ուսումնական ծրագիրը՝ ուսումնասիրության հիմքում դնելով նշված ուսումնական ծրագրի՝ կանանց լավագույն շահից և մարդու իրավունքներից բխելու հանգամանքը դիտարկելը, վերլուծելը և անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնելը:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ Ձեզ Կազմակերպությանը տրամադրել հարցմամբ պահանջվող կին զինծառայողների 6-ամսյա զինվորական պատրաստության

ուսումնական ծրագրերի այն բոլոր թեմաները, հոդվածներն ու հատվածները, որոնք չեն պարունակում գաղտնիություն:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am

ՍՈՏՈՀՐԱՁԳԱՅԻՆ, ՀՐԱՁԳԱՅԻՆ (ԼԵՌՆԱՅԻՆ) ԵՎ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ (ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ) ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2017

Սույն ծրագիրը նախատեսված է բոլոր մոտոհրաձգային, հրաձգային, տանկային՝ այդ թվում լեռնային, այն զորամասերի (ստորաբաժանումների) ուսուցման համար, որոնք համալրված են պարտադիր ժամկետային ծառայություն անցնող շարքային ու կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողներով:

Ծրագրի մարտական պատրաստության կազմակերպման երկրորդ կետում տրված են զինծառայողներին և ստորաբաժանումներին՝ ժամանակակից համազորային մարտի բոլոր տեսակներին պատրաստվելու համար ներկայացվող չափորոշիչները:

ՄՈՏՈՀՐԱՁԳԱՅԻՆ, ՀՐԱՁԳԱՅԻՆ, ԼԵՌՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Մարտական պատրաստությունը խաղաղ պայմաններում զորքերի առօրյա հիմնական գործունեությունն է: Այն կազմակերպվում և անցկացվում է ՀՀ պաշտպանության նախարարի, ՁՈՒ գլխավոր շտաբի պետի հրամանների ու դիրեկտիվների, ՀՀ զինված ուժերի համազորային ու մարտական կանոնադրությունների և այլ ղեկավար փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Ուսուցման նպատակն է զինծառայողներին և ստորաբաժանումներին նախապատրաստել ժամանակակից համազորային մարտում մարտական խնդիրների հաջող իրականացմանը, բարդ իրավիճակներում գրագետ գործողությունների վարման հմտությունների ներարկմանը, անձնակազմի բարոյամարտական որակների ձևավորմանը:

Մարտական պատրաստության հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝

- ուսուցանել զորքին այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարտի դաշտում,
- ապահովել ստորաբաժանումների և զորամասերի մշտական մարտական և զորահավաքային պատրաստականությունը:

2. Մարտական պատրաստության ծրագրի կատարման արդյունքում.

1) զինվորներն ու սերժանտները պետք է

լինեն՝

- աչալուրջ, տոկուն, խիզախ, անձնազոհ, նվիրված հայրենիքին՝ Հայաստանի Հանրապետությանը, պատրաստ՝ պաշտպանելու Հայաստանի սահմանադրական կարգը, ժողովրդի և հայրենիքի ազատությունն ու անկախությունը,
- կարգապահ, վճռական, նախաձեռնող, դիմացկուն, ունակ՝ դիմակայելու մարտական իրադրության բոլոր դժվարություններն ու զրկանքները,
- ունակ՝ ինքնուրույնաբար և ստորաբաժանման կազմում գործելու ցանկանած տեղանքներում և պայմաններում,

գիտենան՝

- համազորային մարտի հիմունքները, իրենց ծառայողական պարտականությունները, մարտական գործողությունների բոլոր ձևերում դրանց կատարման կարգը, ղեկավարման, ազդարարման և փոխգործողության ազդանշանները,
- մարտական գործողությունների մասնակցի վարքուկանոնը,
- լեռնային, նախալեռնային և հարթավայրային տեղանքի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը ստորաբաժանման մարտական գործողությունների ընթացքին,
- իրենց ստորաբաժանման կառուցվածքը, սպառազինությունը և մարտական հնարավորությունները, ինչպես նաև հավանական հակառակորդի զինված ուժերի ստորաբաժանումների կառուցվածքը, սպառազինությունը, մարտական հնարավորությունները, գործողությունների մարտավարությունը,
- հավանական հակառակորդի զինված ուժերի ստորաբաժանումների կառուցվածքը, սպառազինությունը, մարտական հնարավորությունները, գործողությունների մարտավարությունը,
- հետախուզություն վարելու կարգը՝ դիտարկմամբ, թաքստոցից և մարտական հետախուզական դետքից,
-հետախուզության վարման եղանակները (դիտարկում, դարանակալում, որոնում, հանկարծակի հարձակում),
- հաստիքային զենքի (սպառազինության) նյութական մասը, հրաձգության կանոնները, կրակելու եղանակներն ու վարժաձևերը, հիմնական զրահատեխնիկայի ընդհանուր կառուցվածքը,
- ինժեներական սարքավորումները և քողարկման եղանակներն ու դրանց հաջորդականությունը,
- հավանական հակառակորդի ինժեներական արգելափակոցների, ականների կառուցվածքը, գործողության սկզբունքը, տեղադրման և վնասազերծման կանոնները,

- պայթուցիկ նյութերն ու պայթեցման միջոցները, անհատական և կոլեկտիվ պաշտպանական միջոցներն ու դրանց օգտագործման կարգը,
- տեղանքում կողմնորոշվելու եղանակները,
- քարտեզով և առանց քարտեզի տեղանքում հեռավորությունների չափման պարզագույն եղանակները,
- վնասվածքները կանխարգելող միջոցները և հիգիենայի կանոնները, ինքնուրույն ֆիզիկական մարզումներ անցկացնելու մեթոդները,
- վիրավորներին և հիվանդներին առաջին օգնություն ցուցաբերելու կարգն ու եղանակները,
- համազորային կանոնադրությունների հիմնական դրույթները, չափանշված (ստանդարտ) օրապահիկի մթերքներից սննդի անհատական պատրաստման կարգը և դաշտային պայմաններում հանգստի տեղի պատրաստումը,
- մարտական հերթապահությունում և մարտական պատրաստության ընթացքում անվտանգության կանոնները,
- հրդեհամարման եղանակներն ու հնարքները,
- զորքերի ծառայության խնդիրների կատարման ժամանակ իրենց պարտականությունները,
- մարտական խնդիրների կատարման և առօրյա գործունեության ընթացքում բնապահպանական անվտանգության կանոնները,
- միջուկային, քիմիական, կենսաբանական (մանրէաբանական) զենքերի և հրկիզող, ուժեղ ներգործության թունավոր նյութերի և միջոցների խոցման գործոնները, դրանցից պաշտպանման միջոցները, տեղանքի և հաստիքային տեխնիկայի պաշտպանական հատկությունները, ՌՔԿ հետախուզման և դոզաչափման հսկողության սարքերը, ինչպես նաև վարակված տեղանքի հաղթահարման ձևերը,

կարողանան՝

- լեռնային, նախալեռնային և հարթավայրային տեղանքում՝ գիշերային և ցերեկային պայմաններում, գործել տագնապով վերկացի, համազորային մարտի (հարձակման ժամանակ և պաշտպանությունում), ռազմերթի իրականացման և մարտական այլ խնդիրների կատարման ժամանակ,
- գործել ղեկավարման, ազդարարման և փոխգործողության ազդանշաններով,
- հաղթահարել լեռնային, նախալեռնային և հարթավայրային արգելքները (ուղղաձիգ ժայռեր, թեք, քարքարոտ, խոտածածկ և ձնածածկ լանջեր, լեռնային գետակներ, կիրճեր, ձորակներ, գետակներ, փլվածքներ և այլն),
- արդյունավետ օգտագործել հաստիքային զենքը (սպառազինությունը) և ձեռքի մարտական նռնակները՝ հորիզոնից բարձր և ցածր տեղաբաշխված տարբեր նշանակետեր խոցելու համար, ցերեկային ու գիշերային պայմաններում,
- հաստիքային զենքը բերել նորմալ նշանազարկի,
- գործել դիտակետում, հետախուզական դետքի կազմում և որոնումներ կատարել,
- վարել ռադիոփոխանակումներ՝ կապի հաստիքային միջոցներով,
- սարքավորել և քողարկել խրամատներ ու թաքստոցներ,
- տեղադրել յուրային և հաղթահարել հավանական հակառակորդի ինժեներական արգելափակոցները,
- կատարել զանգվածային խոցման զենքից, հրկիզող և գերճշգրիտ զենքերից պաշտպանվելու միջոցառումները,
- օգտագործել անհատական և կոլեկտիվ պաշտպանական միջոցները, հաստիքային զենքի, տեխնիկայի, ամրաշինական կառույցների և տեղանքի պաշտպանական հատկությունները,
- գործել վարակված տեղանքում,
- անցկացնել հատուկ և մասնակի սանիտարական մշակում,
- տեղանքում կողմնորոշվել քարտեզով և առանց քարտեզի,
- ձեռնամարտ վարել և կատարել նախատեսված վարժությունները (վարժաձևերը) ու նորմացույցները,
- հաստիքային և առկա նյութերով պատրաստել հանգստի տեղեր,
- ցուցաբերել առաջին օգնություն վիրավորվելու, այրվածքների, թունավորումների, ցրտահարությունների և այլ դեպքերում,
- կատարել զորքերի ծառայության և զինվորական ծառայության անվտանգության ապահովման խնդիրները,
- օգտվել հրդեհամարման միջոցներից,
- արտակարգ իրավիճակների և վթարների դեպքում գործել ստորաբաժանման կազմում,
- մարտական իրավիճակում պահպանել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը,

- պահպանել անվտանգության կանոնները:

Բացի այդ, զինվորական հաշվառման մասնագիտությամբ պայմանավորված՝

ա) մոտոհրաձիգները, հրաձիգները, տանկիստները, գնդացրորդները, նռնականետորդները (ՁՀՆ-ի), դիպուկահարները, ՀՏԿՀ, ՀՀՆ, ՀԱՆ հաշվարկները, որոնք ընդգրկված են մոտոհրաձգային, հրաձգային և տանկային ստորաբաժանումների կազմում, պետք է գիտենան՝

- մոտոհրաձիգ (հրաձիգ), տանկիստ-զինվորի պարտականությունները,
- ջոկի (հաշվարկի, անձնակազմի) կազմում ինքնուրույն մարտը նախապատրաստելու և վարելու կարգը տեղանքի, եղանակի և օրվա տարբեր պայմաններում,

կարողանան՝

- ստորաբաժանման կազմում գործողությունների ընթացքում հետախուզություն վարել, իրականացնել նշանացուցում և ճշգրտել կրակը,
- կրակ վարել հրաձգային զենքով և հաստիքային սպառազինությունով, այդ թվում՝ հակառակորդի օդային նշանակետերի ուղղությամբ,
- օգտագործել զրահատեխնիկայում տեղադրված հիմնական սարքերն ու մեխանիզմները,
- օգնություն ցուցաբերել նշանառու-օպերատորին (գնդացրորդին)՝ զինամթերքի դասավորման և սպառազինության տեխնիկական սպասարկման նախապատրաստման, իսկ մեխանիկ-վարորդին (վարորդին)՝ տեխնիկական սպասարկման անցկացման և մարտական մեքենայի նորոգման հարցերում,

բ) մեխանիկ-վարորդները (վարորդները) պետք է

գիտենան՝

- հիմնական զրահատեխնիկայի շահագործման և սպասարկման կանոնները, կառուցվածքը և տեխնիկական հնարավորությունները, այդ թվում նաև լեռնային տեղանքում սպասարկման կարգը, նորոգումն ու պահպանումը,
- հարթավայրային, նախալեռնային և լեռնային պայմաններին հատուկ մեքենավարման կանոններն ու հիմունքները, տարբեր արգելքների հաղթահարման տեխնիկան,
- կարգավորման և կառավարման ազդանշանները,
- վառելիքաքսուքային նյութերի, հատուկ հեղուկների ծախսի նորմերը, տեսակները և դրանց խնայողության եղանակները,
- շահագործման անսարքությունների և մարտական վնասվածքների նշանները, պատճառներն ու հետևանքները, դրանց հայտնաբերման, վերացման եղանակները,
- հիմնական զրահատեխնիկայի կառավարման հիմունքները, ճանապարհային երթևեկության կանոնները և բնակավայրերում ճանապարհային անվտանգության կանոնները, մարտական մեքենայի շահագործման, տեխնիկական սպասարկման, մարտական մեքենայի նորոգման, վառելիքաքսուքային նյութերի և տեխնիկական հեղուկների օգտագործման անվտանգության կանոնները,
- զրահատեխնիկայի սպառազինությունը,

կարողանան՝

- գործել զրահատեխնիկայի անձնակազմի կազմում,
- հիմնական զրահատեխնիկան պահել մշտական պատրաստականության վիճակում,
- երթից առաջ և երթաղաղարներին անցկացնել ստուգողական զննումներ, ամենօրյա տեխնիկական սպասարկում, ինչպես նաև զրահատեխնիկայի հերթական և սեզոնային տեխնիկական սպասարկման ու պահպանման աշխատանքներ,
- վերացնել շահագործման ընթացքում առաջացող այն անսարքությունները, որոնց դեպքում անհրաժեշտ չէ քանդել ագրեգատներն ու հանգույցները,
- ճիշտ օգտվել տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ գործիքներից և հարմարանքներից,
- շրջակա օդի նորմալ և ցածր ջերմաստիճանի պայմաններում գործարկել շարժիչը,
- վարժ վարել հիմնական զրահատեխնիկան ցերեկը, գիշերը, սահմանափակ տեսանելիության, ճանապարհային և եղանակային տարբեր պայմաններում, հարթավայրային և լեռնային տեղանքում,
- զրահատեխնիկան նախապատրաստել ինքնաքարշակման և քողարկման,
- վստահաբար հաղթահարել ջրային արգելքները,
- ընտրել պաշտպանված (ապահով) տեղանք, փխրուն և քարքարոտ բնահողում սարքավորել խրամատ, քողարկել այն և մարտական մեքենան,
- կիրառել վառելիքաքսուքային և այլ շահագործման նյութերի խնայողության միջոցներ,
- ճիշտ շահագործել կուտակիչ մարտկոցները, թրթուրները (անվադողերը),

- լրացնել ուղեգիրը,
- կատարել նշանացուցում և կրակի ճշգրտում,

գ) նշանառու-օպերատորները (օպերատորները) պետք է

գիտենան՝

- հիմնական զրահատեխնիկայի սպառազինության, դիտասարքերի և նշանառման սարքերի կառուցվածքը, դրանք մարտի նախապատրաստման, պահպանման, նորոգման և սպասարկման կարգը,
- ՀՏԿՀ-ի արձակման (համալիր սպառազինության առկայության դեպքում), հրանոթով (թնդանոթով, գնդացրով) և զուգակցված գնդացրով հրաձգության կանոնները, դրանց առանձնահատկությունները՝ այդ թվում լեռնային տեղանքում,

կարողանան՝

- գործել զրահատեխնիկայի անձնակազմում,
- սպառազինությունը պատրաստել մարտական կիրառման և իրականացնել պահպանությունը, զինամթերքը նախապատրաստել հրաձգության և կատարել նշանակետերի հետախուզում, որոշել հրաձգության ելակետային տեղակայումները, արագ և դիպուկ խոցել հակառակորդին առաջին իսկ կրակոցով (կրակահերթով)՝ ցերեկը, գիշերը, սահմանափակ տեսանելիության պայմաններում, լեռնային, նախալեռնային և հարթավայրային տեղանքում,
- ճշգրտել կրակը,
- աշխատել ռադիոկայանով և խոսասարքով,
- ստուգել սպառազինության, նշանոցային հարմարանքների, լիցքավորման և նշանառման մեխանիզմների վիճակը, վերացնել հայտնաբերված անսարքություններն ու խափանումները,
- կատարել ջոկի հրամանատարի պարտականությունները,

դ) սերժանտները պետք է

լինեն՝

- կարգապահ, ակտիվ, խիզախ, դիմացկուն, նախաձեռնող,
- վճռական, քաջ, նախաձեռնող և պահանջկոտ այնպիսի հրամանատարներ, որոնք լավ գիտեն իրենց ենթականերին և ուշադիր են նրանց ամենօրյա կյանքի և կարիքների հանդեպ, ունակ են ղեկավարել անձնակազմը՝ առաջադրված խնդիրները լուծելու համար,

գիտենան՝

- «Մարտական կանոնադրության» 3-րդ մասի (դասակ, ջոկ, տանկ) դրույթները՝ համազորային մարտը նախապատրաստելու և վարելու վերաբերյալ,
- ջոկի (հաշվարկի) ղեկավարման կարգն ու հաջորդականությունը,
- իր դասակի, վաշտի, ինչպես նաև նրանց տրվող ստորաբաժանումների մարտական հնարավորություններն ու գործողությունների մարտավարությունը, կառուցվածքը և սպառազինությունը,
- հրաձգության հիմունքներն ու կանոնները,
- ջոկի զենքի, սպառազինության, հիմնական զրահատեխնիկայի և հաստոցավոր ավտոմատ նռնականետի նյութական մասի կառուցվածքը,
- հավանական հակառակորդի զինված ուժերի մոտոհրաձգային, տանկային և հետախուզական վաշտերի կառուցվածքը, սպառազինությունն ու մարտական հնարավորությունները,
- ենթակաների համար պարապմունքների նախապատրաստման կարգը և դրանց անցկացման մեթոդիկան,
- առավոտյան ֆիզիկական մարմնամարզության, ֆիզիկական մարզումների անցկացման մեթոդիկան և վարժությունների (վարժանքների) ուսուցման կարգը,
- ենթակա զինծառայողների դաստիարակության, բարոյահոգեբանական կայուն վիճակի պահպանման, զինվորական կարգապահության և զինվորական ծառայության անվտանգության ապահովման հիմունքները,

կարողանան՝

- ապահովել ջոկի մշտական մարտական պատրաստականության վիճակը և լիովին ներդաշնակումը՝ բոլոր տեսակի մարտական գործողություններ վարելու համար,
- մարտական գործողությունների ընթացքում վստահաբար ղեկավարել ջոկը լեռնային և հարթավայրային տեղանքում,
- ջոկի, դասակի (զրահատեխնիկայի) սպառազինությունը և զենքը նախապատրաստել մարտական կիրառման,
- կրակ վարել հիմնական զրահատեխնիկայից և զինատեսակներից,
- կազմակերպել պաշտպանություն զանգվածային խոցման, հրկիզող և գերճշգրիտ զենքերից,

- որոշել նշանակետերի դիրքը, դրանք անցկացնել քարտեզի (ուրվագծի) վրա և ստացված տվյալները փոխանցել դասակի հրամանատարին,
- կապի հաստիքային միջոցները նախապատրաստել աշխատանքի, աշխատել դրանցով և վերացնել փոքր անսարքությունները,
- սարքին վիճակում պահել սպառազինությունը և ռազմական տեխնիկան, ստուգել զրահատեխնիկայի տեխնիկական վիճակը, ժամանակին կազմակերպել դրա տեխնիկական սպասարկումը, պահպանումն ու նորոգումը,
- կատարել համազորային և մարտական կանոնադրություններով սահմանված պարտականությունները,
- առօրյայում ղեկավարել ջոկը (հաշվարկը, անձնակազմը),
- ճիշտ մեթոդներով ուսուցանել ենթականերին, նախապատրաստել և անցկացնել պարապմունքներ, կատարել ջոկի (դասակի) համախմբման, զինվորական կարգապահության պահպանման և զինվորական ծառայության անվտանգության ապահովման աշխատանքներ,

2) ստորաբաժանումները պետք է

լինեն՝

- կուռ ու ներդաշնակ զինվորական կոլեկտիվ՝ բարձր մարտական և զորահավաքային պատրաստականությամբ, մարտական վարժվածությամբ և զինվորական պարտքի կատարման գիտակցականությամբ, բարոյահոգեբանական կայուն վիճակով և անձնակազմի զգոնությամբ, դաստիարակված Հայրենիքին և զինվորական երդմանը հավատարիմ ոգով,
- մշտապես պատրաստ՝ հետ մղելու հակառակորդի անսպասելի հարձակումները,

կարողանան՝

- կատարել զորահավաքի և սահմանված ժամկետներում մարտական պատրաստականության միջոցառումները,
- վստահաբար գործել ինչպես սովորական, այնպես էլ զանգվածային խոցման զենքերի կիրառման պայմաններում, լեռնային և հարթավայրային տեղանքում,
- արագ իրականացնել վերադասավորումն օրվա ցանկացած պահին՝ վերադաս ստորաբաժանման, զորամասի, միավորման մարտակարգի բոլոր տարրերում, երթային, նախամարտական և մարտական կարգերով,
- կատարել մարտական գործողությունների բոլոր տեսակներում առաջադրվող խնդիրները, ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ զորատեսակների և հատուկ զորքերի ստորաբաժանումների հետ փոխգործողությամբ, նաև հատուկ խնդիրների կատարման ընթացքում,
- գործել ղեկավարման, ազդարարման և փոխգործողության ազդանշաններով,
- ժամանակին վերականգնել մարտունակությունը,
- մարտական գործողություններ վարելիս պահպանել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը,

Ստորաբաժանման պատրաստությունն ու ներդաշնակումն իրականացվում են խնդիրներ և տարբեր տեսակի մարտական գործողություններ կատարելիս, համազորային մարտին ներգրավված ուժերի ու միջոցների փոխգործողության պայմաններում լեռնային և հարթավայրային տեղանքում մարտական գործողություններ վարելու համար ստորաբաժանման (զորամասի, միավորման) կազմում զինծառայողների գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման նպատակով:

Պարապմունքների և զորավարժությունների ընթացքում անհրաժեշտ գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերմանը զուգընթաց, համապատասխան իրավիճակներ ու պայմաններ ստեղծելով՝ պետք է լուծվեն զինծառայողների **հոգեբանական** պատրաստության խնդիրները՝ մարտական դրության վտանգներն ու դժվարությունները հաղթահարելու, բարձր նյարդահոգեբանական և ֆիզիկական ծանրաբեռնվածությանը դիմակայելու ունակություններ զարգացնելու համար՝ լեռներում մարտը նախապատրաստելու և վարելու ժամանակ:

3. Սերժանտների հրամանատարական պատրաստությունը կազմակերպվում է ըստ հրամանատարական պատրաստության ծրագրի դրույթների՝ համապատասխան հավաքներում, հրամանատարական, հրահանգամեթոդական ու ցուցադրական պարապմունքներում, կատարելագործվում է անձնակազմի մարտական ուսուցման ընթացքում:

Հատուկ հարցերի ուսուցմանը ներգրավվում են զորամասի ծառայությունների պետերը, իսկ լեռնային պատրաստության պարապմունքներին՝ նաև հրահանգիչները: Պարապմունքներին կատարելագործվում են սերժանտների՝ մարտը կազմակերպելու և վարելու հմտությունները, պարապմունքների անցկացման մեթոդիկան, առկա ՍՌՏ միջոցների վերաբերյալ նրանց գիտելիքները, մարտական խնդիրներ կատարելիս դրանք կիրառելու ունակությունները, ինչպես նաև ենթակաների

համար դաստիարակչական աշխատանքի անցկացման հմտությունները և ստորաբաժանման կանոնադրային կարգը պահպանելը:

Հրահանգամեթոդական և ցուցադրական պարապմունքներն անցկացվում են հավաքների ընթացքում, ինչպես նաև մարտական պատրաստության նոր թեմաները յուրացնելուց առաջ:

4. Ուսուցման և դաստիարակության ղեկավարումը պետք է լինի որոշակի և ապահովի ստորաբաժանման (զորամասի) պատրաստության պլանի և Ծրագրի լիարժեք կատարումը:

Գնդի (բրիգադի) հրամանատարը պատասխանատու է անձնակազմի զինվորական կարգապահության, մարտական պատրաստության, դաստիարակության ու բարոյական վիճակի համար:

Նա պարտավոր է.

- մշտապես ղեկավարել անձնակազմի մարտական պատրաստությունն ու դաստիարակչական աշխատանքները,
- գումարտակների հետ անցկացնել զորավարժություններ,
- ղեկավարել շտաբի պատրաստությունը,
- անցկացնել գումարտակների, վաշտերի հրամանատարների, նրանց տեղակալների, զորատեսակների ու ծառայությունների պետերի պարապմունքներ, ինչպես նաև ստորաբաժանումների ստուգողական պարապմունքներ,
- ընդունել մարտական պատրաստության կազմակերպման որոշում և արձակել համապատասխան հրաման,
- ղեկավարել մարտական պատրաստության պլանի մշակումն ու իրագործումը:

Գումարտակի հրամանատարն անձնակազմի մարտական պատրաստության ու դաստիարակչական աշխատանքների հիմնական կազմակերպիչն է: Նա պարտավոր է ղեկավարել անձնակազմի մարտական պատրաստությունն ու դաստիարակչական աշխատանքները, անցկացնել շտաբի անձնակազմի, սպաների ու ենթասպաների պարապմունքներ, ինչպես նաև գումարտակի ստորաբաժանումների զորավարժություններ, ղեկավարել ու անձամբ մասնակցել մարտական պատրաստության պլանի մշակմանը և վաշտերի շաբաթական դասացուցակների կազմմանը:

Նրան իրավունք է վերապահվում ճշգրտել ուսուցման թեմաների ժամաքանակը, պարապմունքների բովանդակությունը, ինչպես նաև գումարտակի սերժանտների հրամանատարական պատրաստության թեմատիկան:

Վաշտի հրամանատարն անձնակազմի մարտական պատրաստության ու դաստիարակչական աշխատանքների հիմնական կազմակերպիչն է: Նա պարտավոր է կազմակերպել վաշտի մարտական պատրաստությունը, կազմել շաբաթական դասացուցակը և անցկացնել վաշտի սպաների ու սերժանտների պարապմունքներ:

Նրան իրավունք է վերապահվում ճշտել այս կամ այն թեմային հատկացված ժամաքանակը, պարապմունքների թիվը, դրանց բովանդակությունն ու մշակվելիք նորմացույցների համարները, անհրաժեշտության դեպքում՝ մշակել Ծրագրով չնախատեսված լրացուցիչ նորմացույցներ:

Դասակի հրամանատարն (դասակի սերժանտն) անձամբ է ուսուցանում ու դաստիարակում ենթականերին, անցկացնում մարտական պատրաստության պարապմունքներ ու հետևում սերժանտների պարապմունքներին: Նրան իրավունք է վերապահվում ճշտել պարապմունքների անցկացման մեթոդիկան և սահմանել ուսումնական հարցերի մշակման տևողությունը:

5. Մարտական պատրաստության պլանավորումն իրականացվում է շտաբների կողմից՝ հրամանատարի որոշմամբ կամ նրա անձնական մասնակցությամբ:

Մարտական պատրաստության արդյունքների հաշվառումը կատարում են՝

- դասակում՝ անհատական և ջոկի համար,
- վաշտում՝ ջոկի, դասակի, ինչպես նաև վաշտի սերժանտների համար,
- գումարտակի շտաբում՝ վաշտի (մարտկոցի) և դասակի համար, ինչպես նաև առանձին ստորաբաժանումների և դասակների հրամանատարների համար,
- գնդի (բրիգադի) շտաբում՝ գումարտակների (դիվիզիոնների), յուրաքանչյուր վաշտի (մարտկոցի), առանձին ստորաբաժանումների, ինչպես նաև գնդի (բրիգադի) վարչակազմի սպաների, գումարտակների (դիվիզիոնների), վաշտերի (մարտկոցների) հրամանատարների և նրանց տեղակալների համար:

6. Պարապմունքներ և զորավարժություններ անցկացնելիս հրամանատարը (պետը) պարտավոր է անձնակազմի զոհվելու, խեղդվելու և վնասվածքներ ստանալու դեպքերը կանխելու միջոցներ ձեռնարկել, հաստատել և ժամանակին ենթականերին հասցնել անվտանգության կանոնները, մշտապես վերահսկել՝ դրանց հստակ կատարումը:

Ն-նորմացույց, Կ-կրակային, Մ-մարտավարական, Լ-լեռնային, Ի-ինժեներական, ՊՁԽՁ-պաշտպանություն զանգվածային խոցման զենքից, Հ-հետախուզական, ՌՏ-ռազմական տեղագրու-

թյուն, Ֆ-ֆիզիկական, ՌԲ-ռազմաբժշկական պատրաստություն, Մվ-մեքենավարում, Տ-տեխնիկական, ԿՊ-կապի պատրաստություն:

ՄՈՏՈՀՐԱՁԳԱՅԻՆ, ՀՐԱՁԳԱՅԻՆ (ԼԵՌՆԱՅԻՆ) ԶՈՐԱՄԱՍԵՐԻ (ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ) ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Պահեստային զորամասերի (ստորաբաժանումների) համար. ուսումնական ժամը՝ — րոպե, ուսումնական օրը՝ - ժամ, ուսումնական ամիսը՝ --- օր, ամսական--- ժամ, ուսումնական փուլում՝ -- ժամ, տարվա ընթացքում՝ --- ժամ:

Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի մոտոհրաձգային ստորաբաժանումների և կրճատված կազմով զորամասերի համար. ուսումնական ժամը՝ --- րոպե, ուսումնական օրը՝---ժամ, ուսումնական ամիսը՝ ---օր, ամսական --- ժամ, ուսումնական փուլում՝ --- - ժամ, տարվա ընթացքում՝ --- ժամ:

Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի հրաձգային ստորաբաժանումների և կադրային զորամասերի համար. ուսումնական ժամը՝ --- րոպե, ուսումնական օրը՝--- ժամ, ուսումնական ամիսը՝ օր, ամսական---ժամ, ուսումնական փուլում՝ --- ժամ, տարվա ընթացքում՝ ----- ժամ:

ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման խնդիրները

Խորացնել գիտելիքները՝

- հաստիքային զենքի (մարտական մեքենայի սպառազինության), դրա զինամթերքի և ձեռքի մարտական նռնակների մարտական հնարավորությունների ու նյութական մասի,
- հրաձգության ընթացքում առաջացող խափանումների ու անսարքությունների և դրանց վերացման եղանակների,
- նշանազարկի ստուգման մեթոդիկայի և զենքը (սպառազինությունը) կանոնավոր նշանազարկի բերելու, նշանառման սարքերի ճշտման,
- զենքի (սպառազինության) սպասարկման կարգի,
- զենքի (սպառազինության) և զինամթերքի հետ վարվելիս անվտանգության կանոնների **վերաբերյալ**:

Կատարելագործել՝

- հաստիքային զենքով (սպառազինությամբ) գործողություններ կատարելու, այն մարտական կիրառման նախապատրաստելու,
- նշանակետերի հետախուզում վարելու և խոցման համար նշանակետի ընտրության (ըստ կարևորության),
- հրաձգության ելակետային տեղակայումներ որոշելու,
- տեղից առաջին կրակոցով (կրակահերթով) նշանակետերը խոցելու,
- կարճատև կանգառների և շարժման ընթացքում անհրաժեշտ,
- կրակի հմուտ ճշգրտման, բոլոր եղանակներով անշարժ, հայտնվող ու շարժվող վերգետնյա և օդային նշանակետերի ուղղությամբ կրակ վարելու (բոլոր եղանակային պայմաններում, հարթավայրային և լեռնային տեղանքում, ցերեկն ու գիշերը),
- մարտադաշտում գաղտնի տեղաշարժի, քողարկման և կրակային դիրքն արագ փոփոխելու,
- ինքնուրույն կամ մարտական խմբի (հաշվարկի, ջոկի) կազմով մարտավարական գրագետ տեղաշարժի,
- ստորաբաժանման կազմով կրակ վարելու,
- ինքնուրույն կամ հրամանատարի հրամանով կրակ բացելու,
- կրակով խուսավարելու և կրակային փոխգործողություն ցուցաբերելու,
- ձեռքի մարտական նռնակ նետելու,
- հրաձգության ընթացքում առաջացող անսարքությունները վերացնելու,
- ստորաբաժանման հրաձգային զենքով և նռնականետներով կրակ վարելու,
- ջոկի հրամանատարի՝ ենթակաների համար պարապմունքները մեթոդապես ճիշտ անցկացնելու, հակառակորդի կրակային խոցման և կրակի կառավարման **հմտությունները**:

Ձևավորել ֆիզիկական դիմացկունություն, բարոյահոգեբանական կայունություն և վստահություն՝ իր զենքի նկատմամբ:

Մեթոդական ցուցումներ

Կրակային պատրաստությունը զորքի դաշտային վարժվածության հիմնական (կարևոր) մասն է:

Անձնակազմի կրակային վարժվածության բարձր մակարդակն ապահովվում է հետևողական ուսուցմամբ, պարապմունքների ճիշտ կազմակերպմամբ, կրակային մարզումների և արդյունավետ հրաձգության հաճախակի անցկացմամբ, ժամանակակից ուսումնատեխնիկական բազայի նպատակային կիրառմամբ:

Կրակային պատրաստության ուսուցումն անցկացվում է՝

- հրաձգության հիմունքների և կանոնների, զենքի (սպառազինության), զինամթերքի նյութական մասի ուսումնասիրման պարապմունքների,
- կրակային մարզումների և հրաձգային (ուսումնական ստուգողական, մարտական) վարժությունների կատարման,
- ստորաբաժանումների կրակի կառավարման վարժությունների կատարման պարապմունքների,
- ինքնապատրաստության **ընթացքում**:

Լեռնային պայմաններում կրակային պատրաստության պարապմունքներն անցկացվում են սարքավորված լեռնային զորային հրաձգարանում:

Ջրահատեխնիկայով և խոշոր տրամաչափի գնդացիրներով կրակային պատրաստության գործնական պարապմունքները կազմակերպել և անցկացնել ուղեգծերում, մարտավարական դաշտերում ու դաշտային ելքերի ընթացքում՝ ըստ «Հրաձգության դասընթացի»:

Առանձնակի ուշադրություն դարձնել՝

- անձնակազմի՝ հրաձգության (զենքով և մարտական մեքենաներով) կանոնների ու վարժաձևերի հմուտ տիրապետմանը, ինչպես նաև հորիզոնից բարձր և ցածր տեղադրված նշանակետերի ուղղությամբ ձեռքի նռնակի նետմանը,
- նռնականետի տեղի տարբեր անկյունների դեպքում վերից վար և վարից վեր կրակ վարելու ուսուցմանը՝ ինչպես ՊՈՒՍ-ով, այնպես էլ հաստիքային կրակոցով:

Զենքի (սպառազինության) և զինամթերքի նյութական մասի ուսումնասիրման պարապմունքները, որպես կանոն, անցկացվում են ինքնուրույն պարապմունքներով, սակայն, անհրաժեշտության դեպքում, ուսուցանվողների առանձին կատեգորիաների համար դրանք կարելի է անցկացնել կրակային մարզումների ընթացքում՝ ուսումնական տեղերում (կետերում): Այդ պարապմունքներն անցկացվում են դասարանների, տանկարշավարանների, կրակային ավանների, զորահրաձգարանների նյութական մասով, հավաքակայաններում ու դաշտերում՝ օգտագործելով պլակատներ, մանրակերտներ, ուսումնական զենքի (սպառազինության) և զնամթերքի նմուշներ, ուսումնամարզական միջոցներ (ՈՒՄՄ):

Ուսուցման հիմնական մեթոդներն են՝

- պատմելը (բացատրելը)՝ մասերի ու մեխանիզմների ցուցադրմամբ,
- զենքի (սպառազինության) և տեխնիկայի օգտագործման (շահագործման) գործնական աշխատանքը:

Այս պարապմունքներին ուսուցանվողները ձեռք են բերում հաստատուն գիտելիքներ՝ զենքի (սպառազինության) և զինամթերքի, նշանառման ու դիտարկման սարքերի նշանակության, մարտական հատկությունների, կառուցվածքի, մասերի ու մեխանիզմների աշխատանքի վերաբերյալ:

Հետագայում գիտելիքներն ամրապնդվում և կատարելագործվում են կրակային մարզումների ու հրաձգությունների, ինչպես նաև զենքի (սպառազինության) շահագործման և սպասարկման պարապմունքների ընթացքում: Հրաձգության հիմունքների և կանոնների ուսումնասիրման պարապմունքների ընթացքում անձնակազմին ուսուցանելիս առանձնակի ուշադրություն է հատկացվում նշանակետերի հետախուզմանը՝ դրանց հեռավորությունը որոշելուն, դրանք գնահատելուն, ելման կայանքները ճիշտ նշանակելուն՝ նկատառելով հրաձգության պայմանների շեղումները, նշանակետի և մարտական մեքենայի շարժվելու ճշգրտումները, ինչպես նաև հրաձգության ճշտման հմտությունները:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման խնդիրները

Հասարակական-պետական պատրաստությունը (ՀՊՊ) ՀՀ զինված ուժերում ուսումնամարտական գործունեության համակարգի՝ մարտական պատրաստության առարկա է, անձնակազմի ուսուցման, դաստիարակության և բարոյահոգեբանական կայունության ապահովման կարևորագույն միջոց: ՀՊՊ ուսուցումը նպատակաուղղված է զինված ուժերի անձնակազմին երկրի անվտանգության ապահովման գործում պետական քաղաքականության բովանդակության պարզաբանմանը, զինծառայողների գիտելիքների ու մտահորիզոնի ընդլայնմանը, զինվորական կոլեկտիվների համախմբմանը, միջանձնային ներդաշնակ հարաբերությունների հաստատմանը, անձնակազմի մարտունակության բարձրացմանն ու հայրենիքի պաշտպանության համար գիտակցական պատրաստակամության մշակմանը:

Հասարակական-պետական պատրաստությունից զինծառայողների ուսուցման **հիմնական խնդիրներն են՝**

- **զինել՝**

հայոց պատմության, հայ ազգային-ազատագրական պայքարի լավագույն ավանդույթների, պետական և ռազմական շինարարության արդիական հիմնահարցերի, իրավունքի նորմերի և ծառայողական փոխհարաբերությունների հիմունքների վերաբերյալ կայուն գիտելիքներով:

- **ձևավորել՝**

- ռազմարվեստի պատմությունը, Հայաստանում, տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները վերլուծելու հմտություններ և կարողություններ,
- անձնակազմի պետական մտածողության, ազգային, մշակութային և հոգևոր արժեքների հանդեպ սիրո և հավատարմության զգացումներ,
- զինվորական պարտքի, երդման ու համազորային կանոնադրությունների, հրամանատարների (պետերի) հրամանների պահանջների կատարման հանդեպ գիտակցական վերաբերմունք և անձնական պատասխանատվություն:

Մեթոդական ցուցումներ

Հասարակական-պետական պատրաստությունը (ՀՊՊ) մարտական պատրաստության ինքնուրույն առարկաներից է:

ՀՊՊ պարապմունքները, որպես կանոն, անցկացվում են դասակների, փոքրաթիվ վաշտերում (մարտկոցներում)՝ այդ ստորաբաժանումների կազմով: Խմբերի ղեկավարներ են նշանակվում դասակի հրամանատարները (դասակի հրամանատարի տեղակալները) կամ նրանց փոխարինող զինծառայողները, ըստ անհրաժեշտության՝ նաև վաշտի (մարտկոցի) հրամանատարները, նրանց տեղակալները կամ նրանց փոխարինող անձինք: Պարապմունքների հաշվառումն իրականացվում է դասակների մարտական պատրաստության հաշվառման մատյաններում:

ՀՊՊ պարապմունքները, որպես կանոն, կազմակերպվում են **դասախոսությունների և սեմինարների մեթոդով,** բայց խմբի ղեկավարի հայեցողությամբ՝ նկատի ունենալով թեմայի առանձնահատկությունները և ունկնդիրների մտավոր ունակություններն ու պատրաստվածության աստիճանը, կարող են կիրառվել նաև **զրույցներ, բանավեճեր, կլոր սեղաններ, գործնական խաղեր** և ուսուցման այլ ակտիվ մեթոդներ ու եղանակներ:

ՀՀ ԶՈՒ զորամասերում հասարակական-պետական պատրաստության ուսուցման մակարդակի բարելավելու, արդիական մեթոդների և մանկավարժական նորամուծությունների կիրառումը խրախուսելու և խմբերի ղեկավարների միջև արդյունավետ մրցակցություն ծավալելու նպատակով ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում և երեք փուլով անցկացվում է **ՀՊՊ խմբերի ղեկավարների համաբանակային մրցույթ-ստուգատես:**

ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման խնդիրները

Խորացնել ամբողջ անձնակազմի՝ տարբեր պայմաններում համազորային մարտ նախապատրաստելու և վարելու գիտելիքները, մարտական կանոնադրության դրույթների և համազորային մարտի հիմունքների իմացությունը, կայունացնել անձնակազմի հմտությունները.

1. մարտական պատրաստականության բարձր աստիճանների բերման գործողություններում,
2. մարտական իրադրությունում գործառնական պարտականությունները կատարելիս,
3. մարտական խնդիրների կատարման ժամանակ, այդ թվում՝ ըստ մարտական նախորոշման, շեշտակի փոփոխվող և բարդ իրադրությունում, լեռնային և հարթավայրային պայմաններում, ցերեկն ու գիշերը, այլ զորատեսակների, ՀՈՒ հատուկ զորքերի ստորաբաժանումների, ինչպես նաև այլ զորքերի ստորաբաժանումների, ռազմական կազմավորումների և մարմինների հետ գործակցությամբ, ինչպես սովորական, այնպես էլ գերճշգրիտ զենքի կիրառման պայմաններում,
4. մարտական մեքենաներով և հետիոտն գործողությունների դեպքում զենքի, սպառազինության և ռազմական տեխնիկայի արդյունավետ կիրառման ժամանակ,
5. լեռնային ստորաբաժանումների համար. օգտագործելով լեռնային հանդերձանք՝ տարբեր լեռնային արգելքներ հաղթահարելիս:

Կատարելագործել ստորաբաժանումների հրամանատարների հմտություններն ու ունակությունները՝ առաջադրված խնդիրները կատարելիս և ստորաբաժանումների ու կրակի անընդմեջ կառավարման պատրաստության ժամանակ:

Ձևավորել անձնակազմի հոգեբանական և մարտական որակներ:

Մեթոդական ցուցումներ

Մարտավարական պատրաստությունը զորքերի դաշտային վարժվածության հիմքն է: Այն առավել լիարժեք է ապահովում անձնակազմի և ստորաբաժանումների համալիր ուսուցումը՝ մարտադաշտում հմուտ ու ներդաշնակ գործողություններ կատարելու համար:

Ստորաբաժանումներին մարտական գործողություններ ուսուցանելը պետք է պլանավորվի տարվա և օրվա ժամանակաբաժանումով, անցկացվի հնարավորինս մարտական իրավիճակին նմանեցված պայմաններում: Ուսուցման սկզբում անձնակազմը պետք է ուսումնասիրի հանդերձանքը (լեռնային ստորաբաժանումներում՝ լեռնային հանդերձանքը), յուրացնի ցանկացած արգելքները հաղթահարելու տեխնիկան, ինքնօգնություն և փոխօգնություն ցուցաբերելու կարգը:

Զինծառայողների մարտավարական պատրաստության հիմքը պետք է լինի հակառակորդին հայտնաբերելու և նրան կրակով ոչնչացնելու, ինքնուրույն, ինչպես նաև ստորաբաժանման կազմով տեղանքի, այդ թվում լեռնային, բարդ պայմաններում մարտական գործողությունների բոլոր տեսակներում գործելու կարողության մշակումը:

Մարտավարական պատրաստության ընթացքում իրականացվում է՝

- տագնապով գործողությունների կատարման,
- անհատական պատրաստության կատարելագործման
- ստորաբաժանման ներդաշնակման **մշակում**:

Ստորաբաժանումների պատրաստությունն ու ներդաշնակումը ենթադրում են հաստիքային, տրված և աջակցող ստորաբաժանումների ներդաշնակ գործողությունների մշակում՝ զորատեսակների և այլ զորքերի ստորաբաժանումների ու մարմինների հետ:

Մարտավարական ուսուցման հիմնական ձևերն են.

ա) անհատական պատրաստության կատարելագործման ժամանակ՝ մարտավարաշարային պարապմունքներն ու ինքնուրույն աշխատանքը,

բ) ստորաբաժանումների պատրաստության և ներդաշնակման ընթացքում՝ ջոկերի (անձնակազմերի), հաշվարկների և դասակների՝ մարտավարաշարային պարապմունքներն ու մարտական հրաձգությունը, վաշտերի և գումարտակների՝ մարտավարաշարային պարապմունքներն ու մարտավարական զորավարժությունները, այդ թվում՝ մարտական հրաձգությամբ:

Մարտավարական պարապմունքները, մարտական հրաձգությունը և զորավարժությունները պետք է անցկացվեն մարտավարական ուսումնական դաշտում, իսկ մարտավարաշարային պարապմունքները՝ տեղանքի լրացուցիչ նախապատրաստված տեղամասում:

Տեղամասի չափերը և բնույթը պետք է ապահովեն նշված ուսումնական հարցերի որակյալ մշակումն ու պարապմունքի առավելագույն ուսանելիությունը:

Պարապմունքների, մարտական հրաձգության և զորավարժությունների ընթացքում անվտանգության ապահովման նպատակով հաղթահարման համար նախատեսված, այդ թվում նաև լեռնային, արգելքները պետք է նախապատրաստեն և ստուգեն պատրաստված սպաները:

Մարտավարաշարային պարապմունքները ստորաբաժանումների պատրաստության առաջին և անհրաժեշտ աստիճանն են՝ մարտավարական գործողություններին, տարբեր արգելքներին, տեղափոխման և բարդ պայմաններում ստորաբաժանումների ներդաշնակումն անձնակազմին ուսուցանելու հիմնական ձևը:

Մարտավարաշարային պարապմունքների ուսուցման հիմնական մեթոդը մարտավարական նորմացույցների մշակման ընթացքում գործողությունների վարժաձևերի ու եղանակների կատարման վարժանքներն են (մարզումները):

Ստորաբաժանումների մարտավարաշարային պարապմունքների ընթացքում, բացի մարտում գործողությունների եղանակների և վարժաձևերի մշակումը, կատարելագործվում են անձնակազմի՝ տարբեր արգելքների հաղթահարման վարժաձևերն ու եղանակները: Ընդ որում, գործողությունների յուրաքանչյուր վարժաձև և եղանակ սկզբում մշակվում է ըստ տարրերի՝ դանդաղորեն, այնուհետև՝ ամբողջությամբ:

Վարժաձևի թերի յուրացված տարրը և վարժաձևն ամբողջությամբ պետք է կրկնվեն այնքան, մինչև որ ուսուցանվողներն այն սովորեն կատարել ճիշտ՝ նորմացույցով հաստատված ժամանակում:

Մարտավարաշարային պարապմունքներին պետք է նախորդեն.

- հանդերձանքի ուսումնասիրման և դրանց օգտագործման պարապմունքները,
- տարբեր արգելքների հաղթահարման անվտանգությունն ապահովող միջոցների ուսումնասիրումը,
- անձնակազմի՝ տեղանքում տեղաշարժվելու և արգելքների հաղթահարման տեխնիկան զարգացնելու մարզումները,
- ինքնապահովման ու փոխապահովման վարժաձևերի և եղանակների կատարման պարապմունքները,
- տեղանքում, գիշերն ու ցերեկը կողմնորոշվելու և այլ հարցերին վերաբերող մարզումները:

Ստորաբաժանումների մարտավարաշարային պարապմունքները կարելի է անցկացնել «հետիոտն՝ մեքենայանման» կամ նյութական: Բարձրադիր տեղանքում, որտեղ իրական մարտում բացառվում է զրահատեխնիկայի կիրառումը, մարտավարաշարային պարապմունքներն անցկացվում են միայն հետիոտն:

Մարտավարաշարային պարապմունքներում լեռնային արգելքների այս կամ այն վարժաձևերի ներառումը պետք է որոշվի՝ ըստ ուսուցանվողների պատրաստության և լեռնային հանդերձանքի ապահովման:

Պարապմունքի ժամանակ մարտավարական իրադրությունը յուրաքանչյուր ուսումնական հարցի համար ստեղծվում է առանձին և կարող է միասնական մտահղացում չունենալ:

Պարապմունքների ընթացքում սպաներն ու սերժանտները կատարելագործում են ենթակա ստորաբաժանումների ղեկավարման իրենց հմտությունները՝ կարճ կարգադրություններ, հրամաններ և ազդանշաններ հաղորդելու միջոցով, ինչպես նաև որոշում են զինծառայողների ու ստորաբաժանումների պատրաստության մակարդակն ու որակը:

Անհատական պատրաստության կատարելագործման ընթացքում հայտնաբերված թերությունները վերացվում են ջոկերի պատրաստության սկզբնական փուլում, իսկ ջոկերի պատրաստության ընթացքում հայտնաբերված թերությունները՝ դասակների պատրաստության սկզբնական փուլում և այլն:

Մարտական գործողությունների կազմակերպման ու հաստիքային, տրված և աջակցող ստորաբաժանումների (տանկային, հրետանային, զենիթային, ինժեներական և այլն), ինչպես նաև այլ զորքերի ստորաբաժանումների ու հարևանների միջև գործակցության իրականացման հարցերի մշակման համար սույն Ծրագրով հաստատված պարապմունքների մի մասն անցկացվում է որպես վաշտի (գումարտակի) մարտավարաշարային պարապմունք՝ ուժեղացման միջոցներով («հետիոտն՝ մեքենայանման» կամ նյութական մասով): Այդպիսի առաջին պարապմունքները պլանավորվում են որպես ցուցադրական՝ գնդի (բրիգադի) հրամանատարի ղեկավարությամբ:

Ստորաբաժանումների մարտավարաշարային պարապմունքներն անմիջականորեն կազմակերպում և անցկացնում են հրամանատարները: Այն դեպքում, երբ վաշտային կամ գումարտակային մարտավարաշարային պարապմունքներին ներգրավվում են զորատեսակների և հատուկ զորքերի ստորաբաժանումները, ինչպես նաև, երբ այդ պարապմունքներն անցկացվում են որպես ստուգողական, պարապմունքի ղեկավարը, համապատասխանաբար, գումարտակի կամ գնդի (բրիգադի) հրամանատարն է:

Բարդ լեռնային արգելքների (ժայռոտ տեղանքներ, զառիթափ, ձնապատ լանջեր, սառցաշերտեր) հաղթահարման հարցեր մշակելիս բարձրադիր տեղանքում պարապմունքի ղեկավարին օգնելու համար հատկացվում է **լեռնային պատրաստության հրահանգիչ**:

Վաշտերի ներդաշնակման և պատրաստության ընթացքում պլանավորվում և անցկացվում են վերելքներ, ընդ որում, 1-3 օր տևող լեռնային պատրաստության արշավների ընթացքում անցկացվում են մարտավարաշարային պարապմունքներ՝ «Վաշտը պաշտպանությունում», «Վաշտը հարձակման ժամանակ», «Վաշտը ռազմերթի և երթային պահպանության ժամանակ» թեմաներով:

Մարտավարաշարային պարապմունքներ անցկացնելիս փնտրվում են ստորաբաժանումների անձնակազմի ղեկավարման և կրակային միջոցների կառավարման նոր մեթոդներ, մարտական խնդիրների կատարման, հակառակորդի կրակային խոցման, հաստիքային, տրված և աջակցող ստորաբաժանումների ղեկավարման ձևեր ու եղանակներ, ինչպես նաև կատարվում են հակառակորդին մոլորեցնելու գործնական միջոցառումներ:

Մարտավարաշարային պարապմունքները ջոկի և դասակի ներդաշնակման հիմնական ձևերն են: Մարտավարաշարային պարապմունքների ժամանակ ջոկերի և դասակների հրամանատարները ոչ միայն ենթակա ստորաբաժանումների ղեկավարման փորձ են ձեռք բերում, այլև տեղանքում մարտական գործողությունները կազմակերպելիս կատարելագործում են իրենց հմտությունները: Հետևաբար, մարտավարաշարային պարապմունքների բովանդակության մեջ ներառում են մարտական գործողությունների պատրաստության (որոշման ընդունում, տեղազննում, ենթականերին մարտական խնդիրների առաջադրում, փոխգործողության և համակողմանի ապահովման կազմակերպում), ինչպես նաև հոգեբանական պատրաստության հարցեր՝ նկատառելով տեղանքի առանձնահատկությունները:

Մարտավարաշարային պարապմունքների ընթացքում ուսուցման հիմնական մեթոդը մարտական իրականությանը մերձեցված պայմաններում ուսուցանվողների՝ իրենց գործառնական պարտականությունները կատարելու գործնական աշխատանքն է:

Մարտավարաշարային պարապմունքներին ուսումնական հարցերը մշակվում են խիստ հաջորդականությամբ՝ նշանակված հակառակորդի հետ միասնական մարտավարական իրադրության հենքի վրա:

Մարտավարական պարապմունքները կազմակերպում և անցկացնում է.

- ջոկինը՝ դասակի հրամանատարը,
- դասակինը՝ վաշտի հրամանատարը,
-վաշտինը՝ գումարտակի հրամանատարը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման խնդիրները

Ուսումնասիրել՝

- լեռնային տեղանքի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը ստորաբաժանումների մարտական գործողությունների վրա,
- վտանգը լեռներում և լեռնային արգելքները հաղթահարելիս անվտանգությունն ապահովող միջոցառումները:

Մշակել անձնակազմի՝

- լեռնային արգելքների, ուղղաձիգ ժայռի, քարքարոտ, խոտածածկ և ձյունապատ լանջերի, լեռնային առվակների (գետերի), կիրճերի հաղթահարման տեխնիկայի,
- բեռնափոխադրման,
- տեղանքի մակերևույթի և լեռներում բնության տարերային երևույթների (ամպրոպ, տարափ, փոթորիկ, ձյան տեղում, քարաթափ, փլուզում, սելավ, սողանք, հեղեղ) նկատառմամբ, դաշտային պայմաններում տեղում տեղաբաշխվելիս տեղավորման,
- լեռնային շրջաններում խնդիրներ իրականացնելիս, զենքի (սպառազինության) արդյունավետ կիրառման **ունակություններն ու հմտությունները:**

Յուրացնել հաստատուն գիտելիքներ և լեռնային տեղանքում գործողություններ կատարելիս՝ ապահովել անվտանգության կանոնների պահպանման միջոցառումներ:

Ձևավորել անձնակազմի՝ լեռնային տեղանքում գործողություններ կատարելու մարտական և ֆիզիկական ունակությունները:

Մեթոդական ցուցումներ

Ուսումնական տարում ստորաբաժանումների լեռնային պատրաստությունն անհատական պատրաստության կատարելագործման հիմքն է և անցկացվում է հիմնականում հունվար-փետրվար, հուլիս-օգոստոս ամիսներին: Ձեռքբերված հմտությունները կատարելագործվում են լեռնային արշավների և վերելքների ընթացքում՝ մարտավարաշարային և ֆիզիկական պատրաստության պարապմունքների համալիրում:

Լեռներում մարտական գործողությունների վարման առանձնահատկությունների ուսումնասիրման պարապմունքներն անցկացվում են լեռնային զորավարժարաններում և բնական լեռնային արգելքներում՝ ստորաբաժանումների հրամանատարների ղեկավարությամբ՝ ներգրավելով հատուկ պատրաստված լեռնային պատրաստության հրահանգիչների: Ըստ անձնակազմի պատրաստության մակարդակի՝ գումարտակի հրամանատարին իրավունք է վերապահվում վերաբաշխել տեսական և գործնական պարապմունքների ժամերը: Նախնական հմտությունները ձեռք են բերվում ֆիզիկական պատրաստության պլանային այն պարապմունքներին, որոնք նախորդում են լեռնային պատրաստության առաջին պարապմունքներին: Այդ պարապմունքներին անձնակազմը յուրացնում է նեղ հենարանով առաջ շարժվելու վարժաձևերն ու տեխնիկան, ճոպանով (պարանով) մագլցելը և հատուկ վարժաձևերի կատարումը, ինչպես նաև զարգացնում է հավասարակշռությունը և հաղթահարում բարձրության հանդեպ վախը:

Լեռնային պատրաստության պարապմունքներն անցկացվում են ձմռանը և ամռանը՝ նկատառելով լեռնային տեղանքի սեզոնային առանձնահատկությունները: Պայմանավորված տարվա ժամանակով՝ զինծառայողների ուսուցումը կատարվում է «պարզից՝ բարդ» մեթոդով, բազմիցս կրկնելով՝ յուրաքանչյուր պարապմունքին աստիճանաբար փոփոխելով և բարդացնելով դրանց կատարման պայմանները, ներմուծելով նոր առանձնահատկություններ, անցնելով նոր երթուղիների:

Լեռներում վտանգներն ուսումնասիրելիս պետք է առանձնակի ուշադրություն դարձնել գործողությունների կարգին՝ հնարավոր բացասական հետևանքները կանխարգելելու նպատակով: Այդ գործողություններին հետևողական ուշադրություն է կենտրոնացվում դաշտային պարապմունքների, վերելքների, լեռնային արշավների և մարտավարական զորավարժությունների ընթացքում:

Պարապմունքների անցկացման պայմանների բազմազանությունը լեռնային պայմաններում առաջխաղացման և տեղում տեղաբաշխման հմտությունների կատարելագործման կարևորագույն մեթոդն է:

Լեռնային պատրաստության հանդերձավորումն ու սարքավորումը, ինչպես նաև սպառազինությունը պետք է ընտրել ուսումնամարտական խնդիրների որոշումներին, մարզումների և վերելքների երթուղիների առանձնահատկություններին համապատասխան: Հատուկ ուսումնական լեռնային ավանում կամ լեռնային տեղանքում մշակվում են թեք խոտածածկ (ձյունապատ, սառցալանջերի (վերելքների) և լեռների, ձորերի, լեռնային առվակների և գետերի, կիրճերի հաղթահարման եղանակն ու տեխնիկան, ինչպես նաև կատարվում են ապահովագրման և ինքնապահովագրման վարժաձևեր: Պարապմունքների ընթացքում անհրաժեշտ է անձնակազմին ուսուցանել լեռնային հանդերձանքի ճիշտ կրման կանոնները՝ իրադրությանը համապատասխան, օգտագործելով լեռնային արգելքների հաղթահարման առավել հարմար եղանակները:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման խնդիրները

Կարողանալ դիմանալ ֆիզիկական ու հոգեբանական ծանրաբեռնվածությանը և հաջողությամբ գործել ժամանակակից մարտում:

Զարգացնել երկարատև ռազմերթ ու երթարշավ կատարելու ընդհանուր դիմացկունություն, խոչընդոտների հաղթահարման, ձեռնամարտի վարման հմտություն:

Մեթոդական ցուցումներ

Զինծառայողների ֆիզիկական պատրաստությունն իրականացվում է ուսումնական պարապմունքներում, առավոտյան մարմնամարզության, մարզական-մասսայական աշխատանքի ժամերին և մարտական գործունեության ընթացքում:

Վաշտի կամ դասակի կազմով ֆիզիկական պատրաստության պարապմունքներն անցկացնում են սպաները, մեկ - երկու ժամ տևողությամբ:

Ավելի բարդ վարժությունները, վարժաձևերն ու գործողություններն ուսումնասիրվում են ֆիզիկական պատրաստության տարբեր բաժինների պարապմունքներին և կատարելագործվում համալիր պարապմունքներին:

Ուսումնական փուլի սկզբում համալիր պարապմունքները նպատակաուղղվում են զինծառայողների ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացմանը, այնուհետև մասնագիտական համալիր պարապմունքների ծրագրում նախատեսվում են վարժություններ՝ ֆիզիկական պատրաստության երկու-երեք բաժիններով:

Մարտական պատրաստության պարապմունքների գնալիս և վերադառնալիս ստորաբաժանումներն անցկացնում են ֆիզիկական պատրաստության համընթաց մարզումներ:

Պարապմունքների բովանդակության մեջ նկատառվում են հետիոտն արագացված տեղաշարժեր՝ բնական և արհեստական խոչընդոտների հաղթահարմամբ, մեքենաներ նստեցնելու և դրանցից իջեցնելու, ինչպես նաև մարտական պատրաստության ծրագրում նախատեսված այլ վարժաձևեր ու գործողություններ:

Պարապմունքների արդյունավետությունը ձեռք է բերվում վերադասավորման ու տեղաշարժի ժամանակի կրճատմամբ, համառոտ բացատրություններով, վարժությունների միաժամանակ կատարմամբ կամ խմբերով՝ մարմնամարզական գործիքներով ու վարժասարքերով:

Ուսումնական պարապմունքներում մշակված վարժությունները, վարժաձևերն ու գործողությունները կատարելագործվում են առավոտյան ֆիզիկական վարժությունների, ուսումնամարզական գործունեության ընթացքում, ինքնապատրաստության ու մարզական-զանգվածային միջոցառումներին:

Նախքան ֆիզիկական պատրաստության նոր թեմայի անցնելը, պարապմունքների ղեկավարների հետ անցկացվում են հրահանգամեթոդական ու ցուցադրական պարապմունքներ, իսկ սերժանտների հետ յուրաքանչյուր պարապմունքի նախօրյակին անցկացվում է հրահանգավորում:

Ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր զինծառայող պետք է գնահատվի ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր վարժությունների կատարումով:

Զինծառայողների ֆիզիկական պատրաստությունն ստուգվում ու գնահատվում է առնվազն ամիսը մեկ անգամ: Ֆիզիկապես թույլ, ինչպես նաև հիվանդացած զինվորների հետ անցկացվում են լրացուցիչ պարապմունքներ՝ աստիճանաբար մեծացնելով ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

Ֆիզիկական պատրաստության բոլոր տեսակի պարապմունքներին զինծառայողները նախապատրաստվում են ռազմամարզական համալիր վարժություններ կատարելուն և ռազմակիրառական վարժաձևերի նորմացույցները հանձնելուն:

Վնասվածքների կանխումն ապահովվում է պարապմունքների հստակ կազմակերպման և անցկացման ճիշտ մեթոդիկայով, զինվորական բարձր կարգապահությամբ՝ փոխօգնության, ինքնօգնության ու անվտանգության կանոնների պահպանմամբ, պարապմունքների անցկացման տեղերի ու համապատասխան գույքի ժամանակին նախապատրաստմամբ:

Համալիր պարապմունքները ներառում են ֆիզիկական վարժություններ՝ ֆիզիկական պատրաստության տարբեր թեմաների համադրությամբ: Սկզբում ներառվում են արագությունն ու ճկունությունը զարգացնող, այնուհետև, ուժը զարգացնող, իսկ վերջում՝ դիմացկունության վարժություններ:

ԶՈՐՔԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման խնդիրները

Գիտենալ ՀՀ ԶՈՒ պաշտոնական պարտականությունների կատարումը սահմանող համազորային կանոնադրությունների դրույթների և Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքների վերաբերյալ գիտելիքները ՀՀ ԶՈՒ ներքին, պահակային ու կայազորային ծառայությունների, կարգապահական կանոնագրքերը, շարային կանոնադրության ընդհանուր դրույթները, արտակարգ իրավիճակներում անձնակազմի պարտականությունները և անվտանգության կանոնները՝ զորամասի տարածքում, սպառազինության ու զինամթերքի պահեստներում:

Ուսումնասիրել հակահրդեհային պաշտպանության կազմակերպման կարգը զորամասում, հրդեհային անվտանգության կանոնները, խորացնել գիտելիքները հրդեհի առաջացման պատճառների, հրդեհների և բռնկումների մարման հնարքների ու եղանակների վերաբերյալ:

Կարողանալ օգտվել առկա միջոցներից, արագորեն մարել ծագած հրդեհները (կրակի բռնկումները), տարհանել տեխնիկան, սպառազինությունն ու գույքը:

Կատարելագործել առօրյայում և օրվա վերակարգում ծառայության կրման համազորային կանոնադրությունների դրույթների կատարման հմտությունները, հստակորեն ու ճշգրիտ կատարել բոլոր կանոնագրքերի և կանոնադրությունների պահանջները զորքերի առօրյա գործունեությունում, պարապմունքների ընթացքում, ներդաշնակորեն գործել ստորաբաժանումների կազմում, հետիոտն ու մեքենաներով: Ունենալ օրինակելի արտաքին ու խստորեն պահպանել զինվորական համազգեստ կրելու կանոնները, հրշեջ միջոցների օգտագործմամբ հրդեհների և բռնկումների վերացման համար արագ միջոցառումների ձեռնարկման, մարդկանց, սպառազինության, ռազմական տեխնիկայի և գույքի տարհանման հմտությունները:

Անձնակազմին դաստիարակել ՀՀ զինված ուժերում ծառայելու հպարտության ոգով և սիրով:

Մեթոդական ցուցումներ

ՀՀ ԶՈՒ համազորային կանոնադրությունների իմացությունը զինծառայողների՝ իրենց ծառայողական պարտականությունների հստակ կատարման, ինչպես նաև զինվորական կարգապահության և հաստատված կարգուկանոնի պահպանման հիմքն է:

Կանոնադրությունների պարապմունքներն անցկացվում են զորանոցներում, հատուկ կահավորված պահակային ավաններում, դասարաններում, ՀԱԿ-ում և այլ տեղերում, որտեղ հնարավորություն կա ցուցադրելու զինծառայողների կենցաղը և ծառայության կրումը՝ համազորային կանոնադրությունների դրույթներին համապատասխան:

Կանոնագրքերի դրույթների ուսումնասիրմանն ու յուրացմանը նպաստում է զորամասերում և ստորաբաժանումներում ներքին կարգուկանոնի պահպանումը, զինծառայողների կենսագործունեության և կենցաղի կազմակերպումը: Այդ դրույթների կատարման գործնական հմտությունները կատարելագործվում են առօրյայում, ինչպես նաև՝ օրվա վերակարգին նախապատրաստվելիս և այն կրելիս: Առօրյայում զինվորների և սերժանտների՝ կանոնագրքերի դրույթների գործնական կատարումը, յուրաքանչյուր ամիս գնահատվում են ստորաբաժանումներում:

Անձնակազմի և ստորաբաժանումների շարային որակները ձեռք է բերվում պլանային պարապմունքների, առավոտյան շարային վարժանքների, մյուս առարկաների ուսուցման ընթացքում, նաև՝ առօրյա բոլոր տեսակի շարքերի ու տեղաշարժերի ընթացքում:

Շարային որակները ներառում է զինծառայողների անհատական շարային պատրաստությունն ու ստորաբաժանումների շարային ներդաշնակումը:

Անհատական շարային որակների համար պարապմունքներն անցկացվում են կանոնավոր, ամբողջ ուսումնական փուլի ընթացքում, հետևյալ մեթոդական հաջորդականությամբ՝ մարզումներ, նախորդ պարապմունքներին ուսուցանված վարժությունների կատարման ստուգում, շարային նոր վարժաձևերի ցուցադրում՝ համառոտ բացատրությամբ և այդ վարժաձևերի գործնական ուսուցում՝ մասերի բաժանելով կամ նախապատրաստական վարժության օգնությամբ (եթե վարժաձևը բարդ է, ամբողջապես դրանից հետո, եթե այն բարդ չէ, անհրաժեշտ է սովորեցնել դանդաղ՝ աստիճանաբար հասցնելով նորմացույցով սահմանված տեմպին) սովորողների մարզումներն օրինակելի կատարման աստիճանի հասցնել վարժաձևի միակողմ ու երկկողմ ուսուցմամբ. կազմակերպել վարժաձևերի լավագույն կատարման մրցումներ և պարապմունքի վերլուծության անցկացում:

Ստորաբաժանումների շարային ներդաշնակման պարապմունքներն սկսվում են շարային կանոնադրության համապատասխան հոդվածների բացատրությամբ, ցուցադրվում են մշակվող գործողությունների օրինակելի կատարումները, այնուհետև կատարվում համապատասխան մարզումներ:

Բոլոր պարապմունքները, որպես կանոն, անցկացվում են զորամասի շարահրապարակում, փոքր թմբուկների օգտագործմամբ:

Տարերային աղետներին պատրաստ լինելը հիմք է զինծառայողների համար՝ արտակարգ իրավիճակների կանոնների կատարման հմտություններ ձեռք բերելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակների վտանգավոր հետևանքներով վթարների և աղետների դեպքում վստահ գործողություններ ձեռնարկելու համար:

Տարերային աղետներին պատրաստվելու պարապմունքներն անցկացվում են պատմելու և խորհրդատվությունների եղանակով: